

Հարիսիոն

1972

Թ.



Ի Բ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Սեպտեմբեր

1972

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄՅԱՍՆԻԿՈՒՄ



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ԱՄԵՆ ՏԱՐԻ ՄԱՅԻՍԻ 22-ԻՆ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԽՈՐԵՆԱՅ ԱՌԱՋՆՈՅ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Տ. ԵՂԻՇԷԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ Տ. ՇՆՈՐՀՔԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

> ...Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորու թեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի...:
>
> **(ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ)**

Այն օրուանից երբ նահապետը մեր Հայկ, փշրեց բռնութեան կապանքը Բելի ու դրեց սահմանաքարը հայրենի հողի, դրոշմուեց կոչումը հայ հոգու՝ ապրելու ազատ, եւ արեան իսկ գնով պաշտպանելու ժառանգութիւնը նախնեաց:

Դարերի հոլովոյթով, բայց մանաւանդ Քրիստոսի լոյսի ճառագայթումով այդ կոչումը նոր նկարագիր զգեցաւ, եւ ինքնատիպ ձեւերի մէջ, վեհ ու վճիտ ընթացք ստացաւ պատմութիւնն ու ազգային մշակոյթը հայոց:

Քաղաքակիրթ մարդկութեան ընտանիքի մէջ, հայ ժողովուրդը եւս դարձաւ՝ հոգեւոր, բարոյական ու մշակութային մի առաքելութիւն, իրեն յատուկ ազգային ձեւերի մէջ բիւրեղացնելով համամարդկայինը: Նրա համար տնտեսականն ու քաղաքականը դարձան միջոցներ, իրականացնելու համար այդ առաքելութիւնը: Նա ապրեց ա՛յդ գիտակցութեամբ եւ յանուն ա՛յդ գիտակցութեան մաքառեց դարեր շարունակ, ընդդէմ խաւարի, ընդդէմ բռնութեան, ընդդէմ բարբարոսութեան:

Հայ ազգի հերոսական մարտնչումների դրօշի վրայ գրուած եղաւ միշտ Աւարայրի նշանաբանը՝ «վասն հաւատոց, վասն հայրենեաց»: Այսպէս է որ յաճախ մարմնապէս նուաճուելով հանդերձ, ներքուստ նա մնաց միշտ ազատ, միշտ անպարտելի իր հոգեւոր-մշակութային առաքելութեան ճանապարհի վրայ. եւ ի հեռուկս եկող ու անցնող մրրիկների, շարունակեց մնալ՝ ոգեկան անկորնչելի արժէքներ ստեղծող ուժ: Հայ ժողովուրդը իր ողջ պատմութեամբ, մնաց հաւատարիմ ազատատենչ Հայկին եւ քրիստոսասէր Վարդանին:

Այդ ոգիով, այդ գիտակցութեամբ է որ մեր ամբողջ ժողովուրդը մի մարդու նման ոտքի կանգնեց ու արդար կռուի դաշտ իջաւ նաեւ ի Սարդարապատ, եւ յաղթեց: Այդ պատահեց 1918 թ. մայիսի 22-ից 26 օրերին, երբ Օսմանեան կայսրութիւնը բնաջինջ անելուց յետոյ, Արեւմտահայաստանի մօտ երկու միլիոն հայ ազգաբնակչութիւնը, ապառնում էր նոյն ճակատագրին ենթարկել նաեւ արեւելահայ ժողովուրդին:

Այդ ողբերգական պահին էր որ բոլոր հայերը անխտիր, աշխարհազօր գունդեր կազմած, քաջարի զօրականների առաջնորդութեամբ, ձեռք բերին յաղթանակը փրկարար:

Սարդարապատի յաղթութեամբ, բացուեց նոր էջը մեր դարաշրջանի հայոց պատմութեան, եւ մանաւանդ 1920 թուի նոյեմբերից յետոյ, անվտանգութեան ու խաղաղութեան պայմանների մէջ ամրապնդուեցին հիմքերը վերածնուած հայ պետականութեան, լայն ու ազատ ճանապարհ հարթելով նիւթական վերաշինութեան եւ ազգային մշակոյթի զարգացման:

Սոյն բախտորոշ հերոսամարտին փոքր չեղաւ նաեւ մասնակցութիւնը հայ հոգեւորականութեան, սուրբ Էջմիածնի եւ Գէորգ Ե Ամենայն Հայոց Հայրապետի գլխաւորութեամբ: Անուններ, ինչպիսիք են՝ Գարեգին եպիսկոպոս Յովսէփեանց, Զաւէն եպիսկոպոս Պապայեան, Թադէոս վարդապետ Մշոյ Առաքելոց վանքից, Դանիէլ եւ Եզնիկ վարդապետներ Աղթամարայ ուխտից, Յովհաննէս քահանայ Տէր-Մկրտչեան Գրամբա գիւղից, Զաքար քահանայ Կոտայքի Դազա գիւղից եւ ուրիշներ, որոնք աշխարհազօր գունդերի գլուխ անցած զէն ի ձեռին կռուեցին, անուններ որոնք միշտ փառքով պիտի յիշուեն գալիք սերունդների կողմից:

Այսօր հայ ժողովուրդը ամուր կանգնած Սարդարապատի յաղթանակի վէմին վրայ, հպարտ է անցնող յիսուն եւ հինգ տարիների իրագործումներով, եւ ազգային ապահովութեան խոր զգացումով գոտեպինդ, կերտում է իր ապագան, առաւել ինքնավստահ, առաւել խանդավառ, շարունակելով իր պատմական առաքելութիւնը իբրեւ մշակոյթ ստեղծող ազգութիւն, յառաջդիմութեան, ընկերային արդարութեան եւ ստեղծարար, խաղաղ աշխատանքի ճանապարհով, սովետական եղբայրական ժողովուրդների կողքին:

Նոր պայմանների մէջ, նոր ներշնչումներով, նոր խոյանքներով նոյն հայ ժողովուրդն է որ շարունակում է իր առաքելութիւնը՝ յաւէտ հաւատարիմ իր նախնեաց կոչումին, որ Հայկն ու Վարդանը դարբնեցին:

Յաւերժացնելու համար յիշատակը Սարդարապատի հերոսամարտում զոհուածների, այսու Մեր կոնդակաւ հրահանգում ենք որ սկսեալ 1973 թուականից, ամէն մայիսի 22-ին հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօններ կատարուեն Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում, կենդանի խօսքով էլ պահ-ծացնելով նրանց զոհաբերումը՝ վասն հաւատոց եւ վասն հայրենեաց:

Փա՜ռք Սարդարապատը կերտող քաջերին: Փա՜ռք վերածնուած Մայր Հայաստանին:

«Յիշեցէք զգործս հարցն ձերոց, որ ինչ քաջութիւնս արարին ի դարս իւրաքանչիւր. ստացարուք փառս աւագութեան, եւ ժառանգեցէք զանուն յաւիտենից» (Ա Մակ. Բ 51): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3-ը սեպտեմբերի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 733

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱԴՐԱՍԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ 200-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՎԱՉԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՀԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԵՒ
ՅԱՐԳԱՐԺԱՆ ԱՒԱՆԴԱՊԱՀՆԵՐԻՆ ՄԱԴՐԱՍԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Փառք ենք տալիս ամենակալ մեր Աստուծուն որ իւր սուրբ հովանու ներքեւ պայծառ է պահում-պահպանում մեր եկեղեցիները, ի մխիթարութիւն մեր հաւատացեալ ժողովրդի որ ի Հայաստան և որ ի ափիւռս աշխարհի:

Այդ է վկայում նաև ձեր 1 սեպտեմբեր 1972 թուակիր գեղեցկահիւս գիրը, որով յայտնում էք Մեզ թէ այս տարի նոյեմբերին տօնախմբելու էք Մադրասի հայոց եկեղեցու հիմնադրման երկուհարիւրամեակը:

Ուրախութեամբ ողջունում ենք ձեր այս աստուածահաճոյ ձեռնարկը և հայոց լոյս հաւատքի կենտրոն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնից յղում ենք Մեր

հայրապետական օրհնութիւնը՝ Մադրասի հայոց եկեղեցուն, նրա աւանդապահ զաւակներին և ի մասնաւորի ձեր ընկերութեան, ինչպէս և գերաշնորհ տ. Վահան եպիսկոպոս Տէրեանի նախագահութեամբ կազմուած կարգադրիչ յանձնախումբին, որ մեր օրերին բարձր էք պահում Հնդկաց մեծ աշխարհում՝ սուրբ անունը և համբաւը Հայաստանեայց առաքելական եկեղեցու:

Թող Տէրը իր հովանին տարածեալ պահի Մադրասի ու Հնդկաստանի բոլոր հայկական եկեղեցիների և բոլոր Մեր հաւատաւոր զաւակների վրայ, ձեզ բոլորիդ պարգևելով արևշատութիւն ու անսպառ եռանդ, պատուով շարունակելու համար ձեր նուիրական առաքելութիւնը:

Այս յոյժ երջանիկ առիթով յղում ենք նաև Մեր օրհնութիւնը հնդիկ մարդասէր բարի ժողովրդին, աղօթելով որ Հնդկաստանում միշտ լոյս լինի, միշտ ծաղկում լինի, միշտ խաղաղութիւն լինի:

Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով, և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 14-ը սեպտեմբերի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 734



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ԳԵՎՈՐԳ ՎՐԴ. ՍԵՐԱՖԴԱՐՅԱՆԻՆ՝ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

ՎԱՂԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ
ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԻՐԱԽՆԱՄ ՎՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՈՒՆ,
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ, ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ
ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ
ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՅ
ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին շէն ու պայծառ գործում են հայոց եկեղեցիները թէ՛ մեր մայր երկրում՝ Հայաստանում, թէ՛ մեր հարևան եղբայրական երկրներում, այդ թվում նաև՝ հինաւուրց բարեկամ Վրաստանում:

Վրահայոց պատմական թեմը, իբրև կենտրոն ունենալով Վրաստանի քաղաքամայր Թբիլիսին, դարեր շարունակ միշտ եղել է հոգևոր մխիթարութեան աղբիւր մեր հաւատացեալ ժողովրդի համար, ու նաև մի կենդանի գործօն՝ վրաց և հայ եկեղեցիների ու ժողովուրդների անսասան բարեկամութեան ու հարազատ եղբայրութեան:

Մենք, իբրև Հայոց Հայրապետ, նուիրական պարտք ենք համարում աղօթել ու գործել նոյն այս ոգով և ջանք չխնայել որպէսզի Վրաստանի մեր թեմը իր բոլոր եկեղեցիներով և հոգևոր սպասաւորներով ուղիղ ընթանայ իր պատմական առաքելութեան ճանապարհով:

Այս ոգով ու իղձերով տոգորուած, և ջերմապէս գնահատելով ձեզ իբրև հաւատաւոր, առաքինի ու նուիրեալ հոգևոր սպասաւոր սուրբ եկեղեցւոյ, այսու Մեր կոնդակաւ ձեզ հրաւիրում ենք ստանձնելու վրահայոց թեմի առաջնորդական տեղապահութեան պաշտօնը սկսեալ 1 հոկտեմբեր 1972 թուից:

Վստահ ենք թէ ձեզ յատուկ շնորհներով, դուք յաջողութեամբ պիտի վարէք այս պատասխանատու պաշտօնը՝ ներդաշնակօրէն գործակցելով վրահայոց եկեղեցիների գործադիր վարչական մարմինների և հոգևոր սպասաւորների հետ, Վրաստանի բարեխնամ պետական իշխանութեանց հանդէպ յարգալիր ու օրինապահ վերաբերմունքով:

Պատուէր ենք տալիս նաև ձեզ որ սիրով և ջերմութեամբ մօտենաք վրահայ հաւատացեալ ժողովրդին, բոլորին հաւասարապէս բաշխելով հոգւոյ մխիթարութիւն, խաղաղութիւն և օրհնութիւն:

Մաղթում ենք ձեզ աշխատանքի անսպառ եռանդ ու երկնառաք ներշնչումներ արդիւնաշատ շինարար գործունէութեամբ:

Թող Աստուած իր լուսոյ փառքի մէջ պահի պահպանի վրահայոց թեմն ու եկեղեցիները:

Թող Աստուած միշտ խաղաղ ու միշտ երջանիկ պահի ծաղկեալ աշխարհը Վրաստանի, համայն իր ազնիւ ժողովրդով:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ը սեպտեմբերի
1972 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԱ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 735



ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ

Ժնև

Գերհարգելի դոկտ. Ֆիլիպ Փոթըր,

Ութերեխտի ժողովից վերադարձին Մեր ներկայացուցիչները՝ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը և պրն. Պարգև Շահբազյանը ուրախությամբ հայտնեցին Մեզ Ձեր ընտրության մասին, որպես ընդհանուր քարտուղար Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, ընտրություն, որ կատարվել է խանդավառ մթնոլորտում, արտառուչ միաձայնությամբ:

Այս երջանիկ առիթով հաճելի է Մեզ շնորհավորել Ձեզ հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու և աղոթել, որ Աստված Ձեզ զորացնի հոգևոր նոր եռանդով և լուսավորի նոր ներշնչումներով, որպեսզի փայլուն հաջողություններ արձանագրեք Ձեր առաքելության ճանապարհին՝ քրիստոնեական եկեղեցիների էկումենիկ շարժման գլուխը կանգնած:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու Մայր Աթոռ ս. Էջմիածնից հղում ենք Ձեզ Մեր եղբայրական սիրո ողջույնը ի Քրիստոս:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

16-ը սեպտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին

ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈԿՏ. ՄԱՅՔԼ ՌԵՄԶԻԻՆ.

Լամբեթ-պալատ

Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի խորանի առաջ աղոթում ենք հանգուցյալ դոկտ. Զեոֆֆրի Ֆիշեր արքեպիսկոպոսի հոգու հանգստյան համար: Թող Աստված նրա հիշատակը կենդանի պահի երկրի վրա և լուսավորի նրա հոգին իր հավիտենական արքայության մեջ:

Հղում ենք Ձեզ Մեր ցավակցությունները:

Եղբայրական սիրով՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19-ը սեպտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին

* *
*

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

Էջմիածին

Խորին երախտագիտություն Ձերդ Սրբությանը, Ձեր աղոթքների և ցավակցության համար, դոկտ Զեոֆֆրի Ֆիշեր արքեպիսկոպոսի մահվան առիթով:

Հանգուցյալը հանձնում ենք ամենակարող Աստուծո ողորմությանը և սիրույն:

ՄԱՅՔԼ ՌԵՄԶԻ

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

20-ը սեպտեմբերի 1972 թ.,
Լամբեթ-պալատ



ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Եվ նրանք առան նրան և տարան: Եվ խաչափայտը նա ինքն էր վերցրել և բարձրանում էր այն տեղը, որի անունն էր Գագաթի, իսկ եբրայեցերեն կոչվում էր Գողգոթա, որտեղ և խաչը հանեցին նրան ու նրա հետ երկու ուրիշների՝ այս և այն կողմից, իսկ մեջտեղում՝ Հիսուսին: Պիղատոսը մի տախտակ էլ գրեց և դրեց խաչի վրա. և գրված էր. «Հիսուս Նազովրեցի՝ հրեից թագավոր»: Այդ տախտակը հրեաներից շատերը կարդացին, որովհետև այն տեղը, ուր Հիսուսը խաչվեց, քաղաքին մոտ էր (և գրված էր եբրայեցերեն, դաղմատերեն (լատիներեն) և հունարեն): Հրեաների քահանայապետները Պիղատոսին ասացին. «Մի՛ գրիր՝ հրեից թագավոր, այլ՝ թե նա ասաց՝ թագավոր եմ հրեից»: Պիղատոսը պատասխանեց. «Ինչ որ գրեցի, գրեցի»:

Իսկ զինվորները, երբ Հիսուսին խաչը հանեցին, վերցրին նրա զգեստները և չորս մաս արեցին. յուրաքանչյուր զինվորի՝ մեկ մաս: Իսկ քանի որ պատմուճանը առանց կարի էր, վերևից ներքև ամբողջովին հյուսած շուրջանակի, ուստի միմյանց ասացին. «Այդ չպատռտենք, այլ դրա վրա վիճակ գցենք, ում որ ելնի», որպեսզի կատարվի գրվածը, որ ասում է. «Իմ զգեստները բաժանեցին իրար մեջ և իմ պատմուճանի վրա վիճակ գցեցին»: Զինվորներն այս բանն արեցին:

ՈՐԴԻ ԵՎ ՄԱՅՐ

Իսկ Հիսուսի խաչի մոտ կանգնած էին նրա մայրը և նրա մորաքույրը՝ Կղեովպասի կին Մարիամը և Մարիամ Մագդաղենացին: Երբ Հիսուսը տեսավ մորը և այն աշակերտին, որ մոտ էր կանգնած, որին նա սիրում էր, մորն ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Ապա աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եվ այդ պահից աշակերտը նրան իր մոտ առավ:

Այնուհետև Հիսուսը, գիտենալով, թե ահա ամեն ինչ կատարված է, որպեսզի կատարվի գրվածը, ասաց՝ ծարավ եմ: Եվ այնտեղ քացախով լի մի ման կար, ու նրանք լեղախառն քացախով մի սպունգ թրջեցին և այն դրին եղեգի ծայրին ու մոտեցրին նրա բերանին: Երբ Հիսուսը լեղախառն քացախը բերանն առավ, ասաց. «Ամեն ինչ կատարված է»: Եվ գլուխը խոնարհեցնելով՝ հոգին ավանդեց:

(Հովհաննու Ավետարան, ԺԹ 17—30)

ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈ ԵՎ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ

Քանզի Քրիստոսը ինձ չուղարկեց մկրտելու, այլ՝ ավետարանելու, ո՛չ խոսքերի ճարտարությամբ, որ Քրիստոսի խաչը ընդունայն չլինի, որովհետև կորստյան մատնվածների համար խաչի ճառը հիմարու-

թյուն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստուծո զորություն. քանի որ գրված է. «Պիտի կործանեմ իմաստունների իմաստությունը և խելացիների մտածումները պիտի արհամարհեմ»: Ո՞ւր է իմաստունը, ո՞ւր՝ դպիրը, ո՞ւր՝ այս աշխարհի քննողը: Չէ՞ որ Աստված հիմարացրեց այս աշխարհի իմաստությունը. քանզի Աստուծո այդ իմաստությամբ աշխարհը Աստծուն այդ իմաստությամբ չճանաչեց: Աստված հաճեց փրկել հավատացյալներին այդ քարոզության հիմարությամբ:

Իսկ որովհետև հրեաները նշան են հայցում, և հեթանոսները իմաստություն են փնտրում, մենք քարոզում ենք այն խաչված Քրիստոսին՝ գայթակղություն հրեաներին և հիմարություն հեթանոսներին. բայց նրանց համար իսկ՝ հրեաների և հեթանոսների միջից կանչվածներին, Քրիստոսին քարոզում ենք որպես Աստուծո զորություն և Աստուծո իմաստություն. որովհետև Աստուծո հիմարն ավելի իմաստուն է, քան մարդիկ, և Աստուծո տկարն ավելի զորեղ է, քան մարդիկ: Իրավ որ, եղբայրնե՛ր, ձեր իսկ կոչումին նայեցե՛ք. ըստ մարմնի ոչ բազում իմաստուններ և ոչ բազում հզորներ և ոչ բազում ազնվականներ կան. բայց Աստված ընտրեց այս աշխարհի հիմարներին, որպեսզի ամաչեցնի իմաստուններին. և Աստված ընտրեց այս աշխարհի տկարներին, որպեսզի ամաչեցնի հզորներին. և Աստված աշխարհի անտոհմիկներին և արհամարհվածներին և ոչինչներին ընտրեց, որպեսզի եղածներին առ ոչինչ դարձնի. որպեսզի ոչ մի մարդկային էակ չպարծենա Աստուծո առաջ. որովհետև նրանո՛վ դուք կաք Հիսուս Քրիստոսի մեջ, որ եղավ մեզ իմաստություն Աստծուց, արդարություն և սրբություն և փրկություն, որպեսզի, ինչպես գրված էլ է. «Նա, ով պարծենում է, թող պարծենա Տիրոջով»:

(Ա Կորնթ. Ա 17—31)

ԽԱՉԻ ՊԱՐԾԱՆՔԸ

Տեսեք, թե ինչպիսի գրերով գրեցի ձեզ իմ ձեռքով. որովհետև նրանք, որ ցանկանում են միանգամայն հաճելի լինել մարմնով, նրա՛նք են ստիպում ձեզ, որ թլփատվեք: Միայն թե Քրիստոսի խաչի ետևից չգնան. քանզի նրանք, որ թլփատված իսկ են, օրենքը չեն պահում, բայց ուզում են, որ դուք թլփատվեք, որպեսզի ձեր մարմնո՛վ պարծենան:

Սակայն քա՛վ լիցի, որ ես պարծենամ, այլ միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որով աշխարհը խաչված է ինձ համար, և ես՝ աշխարհի, որովհետև ո՛չ թլփատությունն է մի բան և ո՛չ էլ՝ անթլփատությունը, այլ՝ նոր արարած լինելը: Եվ նրանք, որ մի անգամ այս կանոնին համաձայն են, թող նրանց վրա խաղաղություն և ողորմություն լինի, այլև՝ Աստուծո Իսրայելին վրա: Այսուհետև թող ոչ ոք ինձ նեղություն չտա, որովհետև ես իմ մարմնի մեջ եմ կրում Քրիստոսի չարչարանքները: Եղբայրնե՛ր, մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը թող ձեր հոգու հետ լինի: Ամեն:

(Գաղտ. Զ 14—81)



ԲԱԲԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԴԱՐՁՅԱԼ ԽԱՉ

Սիրելի հայորդի, Հայաստանի եկեղեցին այս կիրակի (1919 սեպտ. 28) կտոնախմբե իր տարեկան մեծագույն հինգ տոներուն կամ Տաղավարներուն վերջինը—**Խաչվերացը:**

Քրիստոնեական եկեղեցին խաչի տոնին այս փառավորումը կպարտի Հերակլ կայսեր (610—641) քաջագործության և քրիստոնեական նախանձախնդրության:

Փրկչին խաչափայտը գերի ինկավ պարսից ձեռք, երբ Խոսրով Բ **Փարվեզ** (590—628) հարձակեցավ Բյուզանդիոնի կայսրության վրա և հառաջացավ մինչև Երուսաղեմ և գրեթե կործանեց զայն,— որովհետև 50.000 հոգի սրակոտոր եղան, 30.000 հոգի աքսորվեցան, ամբողջ քաղաքը գերեցավ գերփվեցավ, 614-ին հունիս ամսու մեջ:

Հերակլ, շնորհիվ իր զորավոր բանակին, որու մեջ հունական Հայաստանի հայ գունդերը նշանավոր եղան, զորավարությամբ Մժեժ Գնունիի, նվաճեց պարսից գոռոզությունը և ստիպեց կնքել խաղաղության դաշինք մը, որուն գլխավոր պայմաններեն մեկը էր խաչափայտին վերադարձը:

Հերակլ ազատագրյալ խաչափայտը տարավ Կ. Պոլիս և հետո՝ Երուսաղեմ, իր բուն սրբավայրը, և այս առթիվ կատարվեցան ամենեն շքեղ հանդեսներ Երուսաղեմի եկեղեցվույն մեջ, սեպտեմբեր 14-ին: Այս մեծ դեպքին հիշատակը տարածվեցավ Երուսաղեմեն դուրս, բոլոր եկեղեցիներու մեջ:

Հայաստանի եկեղեցին ավելի ևս փառավորելու համար խաչի վերացման կամ բարձրացման այս հիշատակը, զայն կտոնախմբե կիրակի մը, որ կհանդիպի սեպտեմբեր 11—17 օրերու մեջ:

Խաչվերացը մեր եկեղեցվույն մեջ կտոնախմբվի, իր նավակատիքին հետ, ութօրյա հանդիսավորությամբ, ընդելուզված եկեղեցվո տոներով, և այսպես՝ մեր նախնիք ավելի մեծ խորհուրդ մը դրած են Խաչվերացի տոնին նշանակության մեջ*:

Այս հանդիսավորության հեղինակն է Հայաստանյայց եկեղեցվույն ամենեն վաստակավոր Հայրապետներեն մին, Զորափորեցի Սահակ կաթողիկոս (677—703) որ արաբական տիրապետության շրջաններեն մեկուն մեջ՝ Հայոց աշխարհը ազատեց տաճկական նոր-նոր կրակներե և ավերներե: Սահակ Դ այն հավատացյալ հայրենասերներեն է, որոնք զրկանքի և աքսորի մեջ ևս կգեղեցկանան՝ իրենց ադամանդե նկարագրով: Այս մեծ մարդն է, որ իր անշունչ մարմնով կակղցուց Ոկբա զորավարին սիրտը և Հայաստան զերծ մնաց նոր հարձակումներե: Պատմաբան Հովհան կտղի. խուքերով—**«այսպէս զմեռելութիւն նորա պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւնս»:** Այս Սահակ կաթողիկոսն է որ գրած է Խաչվերացի շարականները—չենք գիտեր սակայն թե բոլո՞ր ալ թե մեկ մասը—հավանաբար ամենամեծ հավատքով և գիտակցությամբ իր ազգին և եկեղեցվույն պահպանությունը և իր հայրենիքին ապահովությունը վստահելով խաչի զորության,

* Խաչվերացի շարաթը՝ նավակատիք է եկեղեցվո տոնախմբության համար, իսկ հաջորդ յոթնյակին մեջ՝ ԳԾ., ԴԾ. և ԵԾ. օրերը տոն են եկեղեցվո. մնացած օրեր այսինքն՝ Կիր., ԲԾ., ՈՒՐ. և ՇԲ. տոն են խաչի:

որպեսզի **«սա՛ պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ»** (Շրկն.):

Սիրելի որդյակ, այսչափիկ պատմական ծանոթություն մը խաչի այս տոնախմբության մասին, շատ մը լույսեր և հույզեր կրնա տալ քեզ: Ո՛չ միայն բոլոր քրիստոնյա աշխարհի ըմբռնումը, այլ նաև հայ աշխարհի հետաքրքրությունն ու հավատքը կարտափայլի խաչի այս պատմության մեջ:

Ասիկա թող հիմնաքար մը ըլլա մեր այսօրվան դասի խորհուրդածությանց:

Իմ տեսությամբ՝ խաչին խորհուրդը շատ խորունկ և միանգամայն շատ պարզ եղած է հայու համար:

Հայ քրիստոնյա մարդը ինչո՞ւ համար կսիրե Փրկչին խաչը.—Վասնզի մեր ազգին պատմական կյանքին մեջ շատ լավ հասկըցված է Փրկչին արյան արժեքը. արյուն, զոր թափեց նա խաչին վրա՝ աշխարհի փրկության համար,

Ավետարանի առաջին քարոզչին հավատքով և գիտությամբ ալ Փրկչին խաչն է խաղաղության գործիքը (Եփես. Բ).—վասնզի Փրկիչն իր խաչելությամբ է որ վերջացուց խաղաղության հակառակ բոլոր պատճառները (խնամքով կարդա Կողոսացվոց Ա. և Բ գլուխները):

Խաղաղությունը, բառին ոևէ առումով, հստակաբար կարտահայտե իր իմաստը:

Հակառակություններու, թշնամություններու, և պատերազմներու մատնված երկիր մը կամ երկիրներ, դատապարտված են անհաշվելի վնասներու և անդարմանելի կորուստներու: Զարգացում, բարգավաճում կդադրի այդպիսի երկիրներու մեջ: Այս վերջին աշխարհամարտը շատ մը նոր դասեր տվավ մարդկության, թե ի՞նչ կարժե խաղաղություն:

Անհատական կյանքի մեջ ալ մտքի հոգեր և սրտի հուզումներ՝ կջլատեն մարդու կենսական ուժերը: Մարդիկ այսպիսի վիճակներու մեջ դժբախտ են,—վասնզի վնասված են անոնց կարողությունները, անոնց բարձր, ազնվական կարողությունները, և անոնք կշոշափեն կյանքին միայն կոշտ և բիրտ կողմը, և չեն կրնար տեսնել վիշտերու հորիզոններեն անդին բան մը:

Բայց անձնական շրջանակի մեջ ալ կյանքին իրական գեղեցկությունները անոնք միայն տեսած ու վայելած են, որոնք կարող եղած են ըմբռնել խաղաղ մտքի և սրտի պայմանները:

Այսչափ դառն փորձառություններու հետևանքով պարտինք խոստովանիլ թե աշխարհի մեջ, սկիզբեն ի վեր շատ քիչեր, ընտրյալներ միայն կարող եղած են խաղաղ ըլլալ, կամ ապրիլ խաղաղությամբ: Ուրիշ խոսքով՝ կրնանք ըսել թե մարդկային կյանքը դեռ չէ մշակված այնպես, ինչպես որ կպահանջե կյանքին լման սահմանն ու կատարյալ նշանակությունը:

Պողոս առաքյալ, հիմնվելով իր անձնական փորձառության վրա, կհավատե.— **«Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին և զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր»** (Եբր. ԺԲ 14):

Գիտենք որ Պողոս ցո՛ղչափ կորսնցուցած էր իր սրտին և մտքին անդորրությունը, և ջղագրգիռ վիճակի մը մեջ կհետապնդեր անսուրբ գործ մը—ավետարանյալներուն հալածչությունը և մատնությունը — չկրցավ ըմբռնել թե ի՞նչ է կյանքը, ի՞նչ է աշխարհը: Բայց երբ լուսավորվեցավ և տիրացավ խաղաղ Էության մը **(Գործք Թ)** ո՛չ միայն տեսավ զՏեր **(Բ Կրնթ. ԺԲ)**, այլ և ըսավ.— աշխարհի մեջ իմ միակ պարծանքն է խաչը, որով փոխադարձաբար իրարու խաչված ենք **(Գաղ. Զ 14)**:

Մեր յուրաքանչյուրին համար անհրաժեշտ է այդպիսի լուսավորություն մը, որպեսզի սովորական աչքին կեղևանքները իյնան, և մենք ատակ և ընդունակ ըլլանք ստույգ տեսիլներու՝ իբրև հետևանք մեր խաղաղ և սուրբ վիճակին:

Ասիկա առասպել չէ, երազ ալ չէ, և ոչ ալ բանդագուշանք, այլ փորձված և ապացուցված իրողություն մը:

Մարդիկ այսինչ ուսման կամ արվեստին տիրանալու համար տարիներ կնվիրեն, միտք և սիրտ կհոգնեցնեն, ծախքեր կընեն, —կընեն ինչ որ պետք է: Այնպես չէ՞,

Արդ՝ ո՞վ այնքան խնամքով և սերտորեն մշակած է խաղաղությունը և սրբությունը, և չէ կրցած տեսնել Տերը՝ նման Պողոսի:

Խաչին նպատակն է կրթել մարդիկը խաղաղության և սրբության մեջ: Խաչին խորհուրդն է մարդոց աստվածացումը կամ Աստուծո մարդացումը:

Այս ուսումը կամ արվեստը դեռ չէ՛ ժողովրդականացած: Շատ քիչ մարդիկ հետևած և հաջողած են այս աշխատության մեջ:

Եվ սակայն այս աշխատության մեջ ձեռքբերված հաջողութենեն կախված է բոլոր աշխարհի խաղաղությունն ու սրբությունը:

Փրկչին խաչը վերցուցած է արգելքները, քակած քանդած է միջնորմը աշխատության այդ ճամփու վրայեն, որպեսզի Ավետարանի աշակերտները վստահությամբ ընթանան.— **«արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ»** և **«ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք, որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ և բևեռեաց ընդ խաչափայտին»** (Կող. Ա 20, Բ 14):

Սիրելի հայորդի, Խաչվերացի տոնախմբությամբ մեր ազգը կտոնախմբե մարդկա-

յին ընկերության խաղաղության և սրբության մեծ տոնը:

Եվ այս տոնը կհանդիպի այնպիսի եղանակի մը, որ եղանակն է միանգամայն հայ ազգին առտնին կյանքին երջանիկ լիության:

Հայ ժողովուրդը դատած աշխատած է ամբողջ տարվան ընթացքին: Իր երկրին հողերը բեղմնավորված են խիստ և քրտնաջան աշխատանքով: Արդեն իր ամբարները լի՛ են օրհնությամբ, աշնան բերքերն ու արդյունքներն ալ հիմա կավելնան ատոնց վրա: Կամաց կամաց ժողովուրդը պիտի հանգչի: Զմեռը պիտի նվիրվի առտնին կյանքի աճման և գեղեցկացման: Հողեր պիտի պատրաստվին նոր պտղաբերության:

Եվ խաչը, իբրև խորհրդանշան խաղաղության և սրբության, հանդիսավորապես կբարձրանա.— Հայ աշխարհին չորս կողմերը կօրհնվին խաչին խորհրդով, և հավատացյալ Հայաստան՝ հուսով, սիրով և վստահությամբ կպատրաստվի նոր տարվան ծրագիրներուն և աշխատության:

Սիրելի բարեկամս, այս պատկերը ավարտված է հիմա մեր բնաշխարհի մեջ. բայց հուսով ենք որ Նոր-Հայաստան պիտի չմոռնա իր պանծալի պատմությունը և պիտի սիրե խաղաղությունն ու սրբությունը, որուն պետք ունի լավ վերաշինելու համար զայն:

(Դասեր Ավետարանեն, Անթիլիաս, 1936, էջ 149—154):



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 3-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս աբղ. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

* * *

Սեպտեմբերի 8-ին, ուրբաթ.—Այսօր առավոտյան Մայր Աթոռ է ժամանում տ. Արսեն վրդ. Բերբերյանը, որը վերջերս Լոնդոնում, Կինգս կոլեջում, պաշտպանել էր իր ավարտաճառը՝ գիտական կոչում ստանալու համար:

Նույն օրը, երեկոյան, Մայր Աթոռ են ժամանում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը՝ Կալիֆոռնիայից, և տ. Արամայիս ավագ քհն. Միրզայանը՝ Սիդնեյից:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը 1972—1973 ուսումնական տարում հոգևոր ճեմարանում կդասավանդի մի շարք կրոնական առարկաներ և կվարի փոխ-տեսչի պաշտոնը:

* * *

Սեպտեմբերի 9-ին, շաբաթ.—Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Մուսալեռան հերոսամարտի 57-րդ տարեդարձի առիթով մեր նահատակների հիշատակին:

Այս առիթով հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով հերոսամարտի պատմական նշանակությունը մեր ազգային-ազատագրական պայքարի պատմության անմոռաց էջերում:

Հոգեհանգստյան պաշտոնին և հայրապետական քարոզին ներկա են լինում բազում մուսալեռցի ուխտավորներ սփյուռքից, հայրենիքի մուսալեռցիներ և հավատացյալների հոծ բազմություն:

* * *

Սեպտեմբերի 10-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և քարոզում Սիդնեյի հայոց հոգևոր հովիվ տ. Արամայիս ավագ քհն. Միրզայանը:

Ս. պատարագից առաջ Վեհափառ Հայրապետը Վահարանում բարեհաճում է ընդունել Լիբանանից ժամանած ուխտավորների, ինչպես նաև հայրենաբնակ այնթապցիների մի մեծ խումբ:

Հանուն բոլոր այնթապցիների խոսք է առնում Բեյրութի Վահան Թեքեյան երկրորդական վարժարանի տնօրեն և «Նոր Այնթապ» պարբերաթերթի խմբագիր Երվանդ Պապայանը, որը սրտագին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին, որ միշտ հայրական ջերմությամբ և հոգատարությամբ է վերաբերվել այնթապցիների հայրենասիրական յուրաքանչյուր ձեռնարկին:

Այնուհետև պրն. Պապայանը ողջ այնթապցիության որդիական սիրո և հավատարմության զգացմունքներն է ներկայացնում Հայոց Հայրապետին և բարեմաղթություններ է անում Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության և Հայոց Հայրապետի կենաց արևշատության համար:

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՆՏՐԵԱՍՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԷՋՄԻԱԾՆ

Նորին Սրբությունը խորապես հուզված հայրապետական Իր բարձր գնահատությանն ու օրհնությանն է արժանացնում Այնթապի կենտրոնական վարչության և սիյունքի բոլոր կենտրոններում Այնթապի հայրենակցական միությունների աշխատանքը սրտաբուխ մաղթանքով, որ հաջողությամբ պսակվեն համայն այնթապցիների հայրենանվեր ձեռնարկությունները, որպեսզի մոտ ապագայում իրականանա նրանց երազանքները:

Հայոց Հայրապետը թելադրում է, որ ողջ այնթապցիությունը իր սրտագին մասնակցությունը բերի մայր հայրենիքի շինության սրբազան աշխատանքներին, որպես հարազատ զավակները Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Վերջում Հայոց Հայրապետը սրտագինս բարեմաղթում է, որ վերածնված Մայր Հայաստանի կենսատու արևի տակ աճի և ծաղկի Նոր Այնթապը:

Բոլոր ներկաները երկյուղած բարեպաշտությամբ և աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը:

Մի փոքր անց Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը ամերիկահայ ուխտավորական մեծ խմբերի, որոնք եկել էին աղոթելու ս. Էջմիածնի խորանների առաջ և համբուրելու հայրենի հողը:

Ազգիս Վեհափառ Հայրապետը հայրական գուրգուրանքով և սիրով զրույց է ունենում Իր ուխտավոր զավակների հետ, հետաքրքրվում նրանց կյանքով և ապա օրհնում բոլոր ուխտավորներին, որոնք ուրախության և հպարտության արտասվաթոր աչքերով ստանում են աջահամբույրով Նորին Ս. Օծության օրհնությունը և ուշադրությամբ լսում Նրա հայրապետական պատգամը:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, շրջապատված ուխտավորական հոծ բազմությամբ, զանգերի զվարթ ղողանջի ներքո առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագին:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն՝ ի հիշատակ Այնթապի հերոսամարտի նահատակների և «համօրէն նահատակաց ազգիս հայոց»:

Վեհափառ Հայրապետն Իր հայրենաշունչ քարոզի մեջ ոգեկոչում է հիշատակը մեր բոլոր նահատակների և ի մասնավորի՝ Այնթապի հերոսամարտի նահատակների, որոնք ընկան «վասն Ցիսուսի և վասն հայրենեաց» ազգային-ազատագրական պայքարում:

* * *

Սեպտեմբերի 12-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

* * *

Սեպտեմբերի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով Փարիզ մեկնեց Փարիզի կաթոլիկական ինստիտուտի արևելյան հին լեզուների ֆակուլտետի պատվավոր նախագահ հայագետ հայր Շարլ Մերսիեն, որը Հայոց Հայրապետի հրավերով շուրջ երկու շաբաթ գտնվում էր Մայր Աթոռում և Հայաստանում:

* * *

Սեպտեմբերի 17-ին, կիրակի.—Խաչվերաց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը և քարոզում «Այլ ինձ քաւից լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղտ. Զ 14) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է «թափօր խաչվերացի»:

* * *

Սեպտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Խորեն վրդ. Էլչումյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

Սեպտեմբերի 24-ին, կիրակի.—Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ Ուրֆայի հերոսամարտի հայ նահատակների:

Այս առթիվ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը՝ ոգեկոչելով անմոռաց հիշատակը Ուրֆայի հերոսամարտի նահատակների:



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Սեպտեմբերի 9-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում հոգևոր ճեմարանի 1972—1973 ուսումնական տարվա հանդիսավոր բացումը, որին ներկա են լինում տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Մաշտոց սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, տ. Մուշեղ, տ. Մամբրե, տ. Արսեն, տ. Գևորգ վարդապետները, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը՝ Կալիֆոռնիայից, Արամայիս քհն. Միրզայանը՝ Սիդնեյից, տ. Արսեն քհն. Բասմաճյանը՝ ԱՄՆ-ից, ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Հանդիսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Փարիզի կաթոլիկական ինստիտուտի արևելյան հին լեզուների ֆակուլտետի պատվավոր նախագահ հայր Շարլ Մերսիեն:

Հանդեսն սկսվում է «Հայր մեր»-ով: Ճեմարանի երգչախումբը կատարում է «Աշակերտք Քրիստոսի» և «Որք զարդարեցին» շարականները: Բ լսարանի ուսանող Գրիգոր Զմրուխտյանը ընթերցում է Նարեկից (բան ԼԴ) սուրբ Հոգուն ուղղված աղոթքաղերսը, իսկ ճեմարանի դասախոս տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը՝ ս. Ավետարանից «Սերմնացանի առակը» (Ավետարան ըստ Մարկոսի, գլ. Դ):

Այնուհետև բացման խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը և վստահեցնում Վեհափառ Հայրապետին, որ հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը ձեռք-ձեռքի տված կաշխատեն անել կարելին՝ մատաղ հոգիներին լույս և գիտություն ջամբելու համար:

Այնուհետև տեսուչը խոսքը տալիս է հայր Շարլ Մերսիեին, որն իր խոսքում ասում է.

«Սիրելի սաներ,

Ինձ համար մեծ ուրախություն է և պատիվ գտնվել ս. Էջմիածնում, որովհետև դա երկար տարիների ընթացքում եղել է իմ փափագը և ցանկությունը: Եթե անգլիացի մեծ բանաստեղծը ոգեկոչել է կորուսյալ դրախտը, ապա ես կոգեշնչեմ վերագտնված դրախտը: Մի՞թե մենք երկրային դրախտավայրում չենք գտնվում:

Ես գտնվում եմ մի ժողովրդի հոգևոր կենտրոնում, մի խիզախ, իմաստուն ժողովրդի, որը եկել է դարերի խորքից՝ քրիստոնեության հուրը իր հոգում անթեղած:

Ես երեք թելադրանքներ եմ անում ձեզ, սիրելի ուսանողներ.

ա) Սիրեցեք և հավատարիմ մնացեք ձեր հնաբույր հարուստ լեզվին.

բ) Շատ գիտելիքներ ձեռք բերեք, որպեսզի քաղաքակրթության այս դարում լինեք պատրաստված հոգևորականներ, և

գ) Ունկնդիր եղեք Աստուծո խոսքին, խորացեք Ավետարանի մեջ, աշխատեցեք քրիստոնյա եկեղեցիների միության համար, որին ձգտում ենք բոլորս»:

Օրհնության խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, ուսանողներին տալիս Իր հայրական հորդորներն ու ասում.

«Ձեզանից յուրաքանչյուրի հոգին մի-մի փոքրիկ անդաստան է, ուր սերմեր են ցանվելու ձեր դասախոսների կողմից. ուրեմն բացեք ձեր հոգու անդաստանները, թող այդ

սերմերը պարարտ հող գտնեն և աճեն, բազմանան, մեկի տեղ հարյուր, որպեսզի ձեզանից կարողանանք պատրաստել ապագա պիտանի հոգևորականներ մեր ս. եկեղեցու համար:

Մեր ս. եկեղեցին և հոգևոր ճեմարանը անմահ սրբություններ են, հետևաբար մենք ևս, ինչպես մեր անվանի նախորդները, մեր արժանի գործերով այդ սրբությունները պահենք ու զորացնենք»:

Խանդավառ մթնոլորտում ողջ ներկաները հոտնկայս երգում են «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հանդեսն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Այս տարի հոգևոր ճեմարանում սովորում են 41 ուսանողներ.

Ա դասարան՝ 6 ուսանող
Բ դասարան՝ 7 ուսանող
Գ դասարան՝ 8 ուսանող
Ա լսարան՝ 7 ուսանող
Բ լսարան՝ 9 ուսանող
Գ լսարան՝ 4 ուսանող

Սեպտեմբերի 7-ին, առավոտյան ժամը 11-ին, գումարվեց հոգևոր ճեմարանի մանկավարժական ժողով՝ տեսչի նախագահությամբ, ուր քննության առնվեցին ուսումնադաստիարակչական և կազմակերպչական-կարգապահական մի շարք հարցեր:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այս տարի հոգևոր ճեմարանում դասախոսելու է հրավիրված Կալիֆոռնիայից տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը, որը կդասավանդի դավանաբանական և հովվական աստվածաբանություն և ս. Գրոց մեկնություն: Տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը նշանակված է հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ:

Սեպտեմբերի 11-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 9.30-ին հնչեց ուսումնական նոր տարվա զանգը, և սկսվեցին դասախոսությունները:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետը Վեհարանում բարեհաճում է ընդունել ճեմարանի տեսչական կազմին և ուսանողությանը: Ինչպես միշտ, այս տարի ևս ազգիս Վեհափառ Հայրապետը տալիս է ուսանողությանը Իր թելադրություններն ու պատգամը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ջերմ սիրով ուսանողությանն է ներկայացնում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանին, որպես փոխ-տեսչի և դասախոսի:

Տ. Արիս ծ. վարդապետն իր խորին շնորհակալությունն է հայտնում Վեհափառ Հայրապետին այն մեծ վստահության համար, որ ինքը հրավիրվել է հոգևոր ճեմարան՝ դասախոսելու և պաշտոնավարելու որպես փոխ-տեսուչ:

Հայր սուրբն իր խոսքի վերջում շեշտում է, որ ինքը ճիգ ու ջանք չի խնայի և տեսուչ տ. Հովհաննես քահանայի հետ ձեռք-ձեռքի տված կարդարացնի Վեհափառ Հայրապետի բարձր վստահությունն ու հույսերը:

Հոգևոր ճեմարանի տեսչական կազմն ու ուսանողությունը աջահամբույրով ստանում են Հայոց Հայրապետի օրհնությունը 1972—1973 ուսումնական տարվա առիթով:

Տ. ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԵՐԲԵՐՅԱՆԻ՝ ԼՈՆԴՈՆԻ ԿԻՆԳՍ ԿՈԼԵՋՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԱՎԱՐՏԱՃԱՌԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Մայր Աթոռի միաբան տ. Արսեն վրդ. Բերբերյանը վերջերս Լոնդոնի Կինգս կոլեջում պաշտպանել էր դիսերտացիա՝ գիտական աստիճան ստանալու համար՝ «Հարաբերություններ անգլիկան եկեղեցու և հայերի միջև» (1841—1905 թթ.) թեմայով, որի վրա նա աշխատում էր 1967 թվականից ի վեր:

Սույն թվականի սեպտեմբերի 21-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 18.30-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և նախագահությամբ, տեղի է ունենում մի հավաքույթ, որի ընթացքում տ. Արսեն վարդապետը ներկաներին ծանոթացնում է իր ավարտաճառի հետ:

Սույն հավաքույթին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու լսարանական բաժնի ուսանողությունը:

Հավաքույթին ներկա են լինում նաև Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ԳԱ պատմության, գրականության ինստիտուտներից մի շարք մտավորականներ և այլ անձինք, որոնց հետաքրքրում էր դիսերտացիան և ժամանակաշրջանի հայ կյանքը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ կազմվել էր մի հանձնաժողով, հետևյալ կազմով.

ա) Նախագահ՝ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան. բ) Պրոֆ. Առաքել Առաքելյան. գ) Տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյան. դ) Արթուն Հատիտյան. ե) Պարգև Շահբազյան:

Ներածական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը և ներկաների կողմից շնորհավորում է հայր սուրբին սույն հաջողության համար։ Այնուհետև նա համառոտ կերպով ներկաներին ծանոթացնում է տ. Արսեն վրդ. Բերբերյանի կյանքի և գործունեության հետ և ուրախությամբ նշում, որ ավարտաճառի հեղինակը հոգևոր ճեմարանն ավարտած մեր սաներից է: Ապա հրավիրում է տ. Արսեն վարդապետին ներկաներին հանգամանորեն ծանոթացնելու իր կատարած աշխատանքի հետ:

Այնուհետև տ. Արսեն վրդ. Բերբերյանը պատասխանում է հանձնաժողովի անդամների մի շարք հարցերին:

Աշխատանքը բաղկանում է ինն գլուխներից, որոնցում պատմական փաստերի հիման վրա ներկայացվում է 1841—1905 թվականներին Թուրքիայի մի շարք քաղաքներում հայ-անգլիկան եկեղեցու կազմության, նրա գործունեության և ապա անկման պատճառների պատմությունը:

Աշխատությունը, որը բաղկանում է 438 մեքենագրված էջերից, ունի եզրակացություն, ծանոթագրություններ, հավելված և մատենագիտության բաժիններ: Աշխատանքը գրված է անգլերեն լեզվով:

Ապա հավաքույթն ընդմիջվում է տասը րոպեով, որի ընթացքում հանձնաժողովը արձանագրում է իր գնահատականը և շնորհավորանքը՝ ներկայացված աշխատության մասին: Հանձնաժողովի նախագահ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը ի լուր ներկաների ընթերցում է հանձնաժողովի գնահատականը այն մասին, որ տ. Արսեն վարդապետը իր աշխատանքը կատարել է բարեխղճորեն, խնամքով և օգտագործել է ցարդ անծանոթ արխիվային հարուստ և արժեքավոր նյութեր:

Հանձնաժողովը սրտանց շնորհավորում է տ. Արսեն վարդապետին իր այս աշխատության համար և արձանագրում իր գնահատականը՝ խնդրելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի հրավերով խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և մեկ անգամ ևս շնորհավորում տ. Արսեն վարդապետին, տալիս է Իր օրհնությունը և գնահատաքը: Բոլոր ներկաները շնորհավորում են տ. Արսեն վարդապետին այս հաջողության համար:



ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ ՈՒԹՐԵԽՏՈՒՄ

Սույն թվի օգոստոսի 3—8-ը Ութրեխտ քաղաքում (Հոլանդիա) տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի Գործադիր կոմիտեի 27-րդ նստաշրջանը: Ժողովին մասնակցում էին, բացի Գործադիր կոմիտեի անդամներից, զանազան երկրներից ժամանած և քրիստոնեական տարբեր եկեղեցիներ ներկայացնող վերոհիշյալ հանձնաժողովի բազմաթիվ անդամներ՝ թվով շուրջ 60 հոգի:

Օգոստոսի 3-ին, առաջին լիագումար նիստում, ժողովը լսեց մի շարք զեկուցումներ: Առաջինը հանձնաժողովի նախագահ դոկտ. Օլլե Դահլենի զեկուցումն էր անցած մեկ տարվա ժամանակաշրջանում միջազգային քաղաքական ասպարեզում մարդկությանը հուզող մի շարք առավել նշանակալից իրադարձությունների վերաբերյալ: Զեկուցողը հանգամանորեն վերլուծելուց հետո միջազգային քաղաքական արդի իրավիճակը՝ նշեց հանձնաժողովի առաջ դրված այն մի շարք կարևոր խնդիրները, որոնք հանձնաժողովի մտահոգությունների առանցքը պետք է կազմեն նրա առաջիկա գործունեության ընթացքում:

Այնուհետև ընդարձակ զեկուցումով հանդես եկավ նաև հանձնաժողովի տնօրեն դոկտ. Լեսլիլդո Նիիլուսը, որը ժողովականներին ներկայացրեց հանձնաժողովի տարեկան գործունեության համակողմանի պատկերը: Ընթերցված զեկուցումների շուրջ տեղի ունեցան կարծիքների փոխանակում և ելույթներ, որից հետո ժողովը, միաձայն, կատարված աշխատանքների վերաբերյալ տվեց իր դրական գնահատականը:

Նույն օրը, կեսօրից հետո, ժողովականները հաստատեցին օրակարգում դրված հետևյալ երեք հարցերը, որոնք ներկա ժողովում ամենալայն քննարկման առարկա պետք է հանդիսանային աշխատանքային առանձին խմբերում:

ա) Եվրոպայի անվտանգության հարց.
բ) Մերձավոր Արևելքի հարց.
գ) Վիետնամի հարց:

Ապա տեղի ունեցավ մասնակիցների նշանակումը աշխատանքային երեք խմբերում: Հետագա հինգ օրերի ընթացքում խմբերը մանրամասնորեն քննարկեցին վերոհիշյալ երեք հարցերը, որոնց շուրջ ընդունվեցին համապատասխան որոշումներ, արվեցին կոնկրետ հանձնարարություններ և խմբագրվեցին առանձին հայտարարություններ, որոնք պետք է ներկայացվեին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի առաջիկա ժողովին ի հաստատություն և ի հրապարակումն:

Եվրոպայի անվտանգության և համագոր-

ծակցության հարցի վերաբերյալ խմբագրվեց մի հայտարարություն, որի մեջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովը իր գոհունակությունն ու ուրախությունն էր հայտնում Եվրոպայում լարվածության մեղմացման մասին, ընդ սին ողջունելով Լեհաստանի և Սովետական Միության հետ Արևմտյան Գերմանիայի՝ վերջերս կնքած պայմանագիրը, չորս մեծ տերությունների համաձայնագիրը Բեռլինի հարցի շուրջ, գերմանական երկու պետությունների համաձայնագիրը իրենց քաղաքացիների համար փոխադարձ ազատ երթևեկություն սահմանելու վերաբերյալ և այլն: Հանձնաժողովն այնուհետև ողջունում էր, որպես միջազգային լարվածության մեղմացմանը միտող կարևորագույն քայլ, համաեվրոպական կոնֆերանս հրավիրելու մասին եղած առաջարկությունները, առաջարկություններ, որոնք իրապես ձգտում են ապահովել անվտանգությունը և հեշտացնել համագործակցությունը եվրոպական երկրների միջև: Հայտարարությունը ընդգծում էր շուտափույթ կերպով նման մի կոնֆերանս հրավիրելու հրամայական անհրաժեշտությունը՝ այն գտնելով համապատասխան եվրոպական բոլոր ժողովուրդների շահերին և օգտակար՝ արդարության և խաղաղության հաստատմանը ամբողջ աշխարհում: Ժամանակակից քաղաքական հավասարակշռության պահպանումը Եվրոպայում, երկու կողմերի զինված ուժերի հավասարակշռված կրճատումը, եվրոպական երկրների ստատուսկվոյի ճանաչումը տերիտորիալ տեսակետից և քաղաքական լարվածության մեղմացումը,— ահա այն կետերը, որոնք հիմք պետք է հանդիսանան համաեվրոպական առաջիկա կոնֆերանսին: «Քրիստոնյաները հաստատում են,— ասվում էր հայտարարության մեջ,— թե որքան ցանկալի է Եվրոպայի ծոցում փոխադարձ ըմբռնմամբ ձեռք բերվելիք առաջադիմությունը. նրանք մտածում են, որ խաղաղության և արդարության վրա հիմնված Եվրոպայի անվտանգությունը էական նշանակություն կունենա ամբողջ աշխարհի անվտանգության համար»:

Հնդկաչինի հարցի վերաբերյալ հանձնաժողովը խմբագրեց մի այլ հայտարարություն, որի մեջ ասվում էր, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը և նրա միջազգային գործերի հանձնաժողովը բազում անգամներ հրապարակով դատապարտել են պատերազմի էսկալացիան Վիետնամում, նրա տարածումը ամբողջ Հնդկաչինի թերակղզու վրա և այն աճող տառապանքները, որոնք տարեցտարի պարտադրվել են Հընդկաչինի ժողովուրդներին: Սակայն Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը միայն հայտարարություններ հրատարակելով չի բավարարվել. նա ակտիվորեն մասնակցել է խաղաղության որոնման ջանքերին՝ ուղղակիորեն շփման մեջ մտնելով շահագրգռված պետությունների և այլ երկրների քաղաքական մարդկանց հետ՝ քաջալերելու համար նրանց, որ բանակցությունների ճանապարհով հասնեն Վիետնամի հարցի՝ խաղաղ կարգավորմանը: Բացի այդ, նա հնարավոր ամեն ինչ արել է ամոքելու համար Հնդկաչինի ժողովուրդների տառապանքները՝ հայթայթելով նրանց մարդասիրական ամեն կարգի օգնություն իր անդամ եկեղեցիների զանազան կազմակերպությունների միջոցով: Սակայն Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը միաժամանակ գիտի, որ օգնություններ կազմակերպելով չէ, որ կլուծվի Վիետնամի հարցը: Պատերազմը պետք է վերջ գտնի. դա է այն նպատակը, որին ձգտում են նրա բոլոր ջանքերը: Հենց այս նպատակով էլ Եկեղեցիների միջազգային գործերի հանձնաժողովը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեին ներկայացվելու համար ընդունեց մի բանաձև, որի մեջ հանձնարարվում էր, որ կենտրոնական կոմիտեն իր առաջիկա ժողովում հաստատի, որ Վիետնամում բռնությունն ու սպանությունները պետք է վերջ գտնեն մեկ և մյուս կողմից, խստիվ դատապարտվի ԱՄՆ-ի կողմից Հյուսիսային Վիետնամի ջրամբարտակների ռմբակոծումը, նրա ներկայությունը Վիետնամում, որը, ինչ ձևի տակ էլ որ լինի, հակասում է Հընդկաչինում խաղաղության շահերին, հրավիրի ԱՄՆ-ի պրեզիդենտին, որպեսզի հրամայի դադարեցնել բոլոր ռմբակոծումները Հնդկաչինում և ճշտի այդ շրջանից ամերիկյան բոլոր ուժերի քաշվելու թվականը, որն ամենուշը պետք է լինի մինչև 1972 թ. դեկտեմբերի 31-ը, հրավիրի օտարերկրյա բոլոր ուժերին, ի պատասխան դրան, ամբողջապես դադարեցնել ռազմական ամեն տեսակի օգնություն Հնդկաչինին՝ սպասելով խաղաղ մի կարգավորման, հրավիրի Վիետնամի ժամանակավոր ռևոլյուցիոն կառավարությանը և Հյուսիսային Վիետնամի Դեմոկրատական Հանրապետության կառավարությանը՝ հարգելու ամերիկյան բոլոր ռազմագերիներին ազատելու մասին իրենց տված խոստումը ի պատասխան ռմբակոծումների դադարեցման և ԱՄՆ-ի ռազմական ուժերի ամբողջական դուրսբերման և, վերջապես, հրավիրի Հյուսիսային Վիետնամի կառավարությանը՝ ազատելու քաղաքական բոլոր բանտարկյալներին:

Հանձնաժողովը Վիետնամի մասին իր սույն հայտարարության հաստատումը հանձնարարելով կենտրոնական կոմիտեին, միա-

ժամանակ առաջարկում է նրան անհապաղ հրավիրել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ բոլոր եկեղեցիներին, որպեսզի համապատասխան հնարավոր բոլոր միջոցները ձեռք առնեն՝ ապահովելու համար սույն հայտարարության գործադրումը:

Միջազգային գործերի հանձնաժողովն այնուհետև իր հայտարարությունների մեջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեին առաջադրեց հաստատել մեկ միլիոն դոլլարի հատուկ մի ֆոնդ՝ Հնդկաչինում հաշտության ձեռք բերման և երկրի հետագա վերակառուցման նպատակին ուղղված՝ այդ գործի համար նշանակելով 15 անդամներից բաղկացած վարչական մի խորհուրդ:

Մերձավոր Արևելքի հարցի կապակցությամբ նմանապես հանձնաժողովը ընդունեց մի բանաձև՝ հանձնարարելով կենտրոնական կոմիտեին իր առաջիկա ժողովում հաստատել այն: Այդ բանաձևը իր ամբողջության մեջ մի տեսակ վերահաստատումն էր այն հայտարարության, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեն բանաձևել էր 1969 թ. Քենտրբերիի ժողովում և որի մեջ կոչ էր արվում անդամ բոլոր եկեղեցիներին իրենց ազդեցությունն ի գործ դնել՝ հասնելու համար Մերձավոր Արևելքի կոնֆլիկտի արագ, արդար և խաղաղ կարգավորմանը:

Վերոհիշյալ երեք հայտարարությունները, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության, Վիետնամի և Մերձավոր Արևելքի հարցերի կապակցությամբ եղած բոլոր հանձնարարությունները հետագայում ներկայացվեցին կենտրոնական կոմիտեի ժողովին և միաձայնությամբ ընդունվեցին ու հաստատվեցին:

Միջազգային գործերի հանձնաժողովը իր նիստերում հատուկ ուշադրություն դարձրեց նաև մարդկային իրավունքների պաշտպանության հարցերին և ընդունեց համապատասխան փաստաթուղթ՝ այն ներկայացնելով կենտրոնական կոմիտեին ի հաստատություն:

Միջազգային գործերի հանձնաժողովը պատշաճ ուշադրություն նվիրեց նաև իր ժողովի օրակարգում դրված «Միացյալ ազգերի կազմակերպության արդի վիճակը և եկեղեցիների դերը» հարցին՝ այդ մասին ևս հրապարակելով համապատասխան մի փաստաթուղթ, որի մեջ նշվում էր, որ ՄԱԿ-ը չպետք է դիտվի որպես միջազգային ինչ-որ կազմակերպություն՝ այլ միջազգային կազմակերպությունների շարքում, այլ որպես համաշխարհային հասարակության գլխավոր կազմակերպությունը և ամբողջ մարդկության ընդհանուր շահերի պաշտպանը: Այս տեսակետից էլ, ասվում էր փաստաթղթում, ՄԱԿ-ը, քաղաքական գետնի վրա հատկապես, ունի գլխավոր մի թելադրություն, որը նրան խանգարում է միջազգային անվտանգության ապահովման հարցում կատարելու իր պարտականությունը: Դա նրան անդամակցող մի շարք մեծ և փոքր ազգերի նեղմիտ ձգտումն է համաշխարհային տարողություն ունեցող հարցերին մշտապես մոտենալու իրենց նեղ ազգային շահերի տեսանկյունից: Փաստաթղթում հանձնաժողովը խրախուսելի էր գտնում այն երևույթը, որ ՄԱԿ-ը հետզհետե դառնում է առավել ունիվերսալ մի կազմակերպություն՝ իր մեջ ընդգրկելով նորանոր անդամ պետություններ, որոնց անդամակցության հարցը դեռ վաղուց էկումենիզմի համար եղել էր լուրջ մտահոգության առարկա: Այդ տեսակետից էլ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ողջունում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ընդունումը ՄԱԿ-ում և անհրաժեշտ համարում միաժամանակ, որ գերմանական երկու պետությունները և բաժանված մյուս երկրները նույնպես իրենց տեղը գտնեն այդ կազմակերպության մեջ: Եվ, վերջապես, փաստաթուղթը, շոշափելով համաշխարհային այդ կազմակերպության նկատմամբ եկեղեցիների բարոյական պարտավորությունների և նրանց վերապահված դերի հարցը՝ եզրակացնում էր. «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը անդամ եկեղեցիներին հրահանգել է և այսօր էլ հրահանգում է անվերապահ և ռեալիստական օժանդակություն ցուցաբերել Միացյալ ազգերի կազմակերպությանը: Միջազգային ներկա իրավիճակում անհրաժեշտ է, որ եկեղեցիներն իրենց անդամներին հայթայթեն առավել լրիվ ինֆորմացիա, որպեսզի օգնեն նրանց կազմելու ճշգրիտ փաստերի վրա հիմնված հանրային կարծիք: Եկեղեցիներն ու նրանց ներկայացուցիչները կարող են առանձնահատուկ մի դեր կատարել՝ համաշխարհային կարծիքին ներկայացնելով սոցիալական լուրջ անարդարության դեպքեր և ցեղային, մշակութային կամ սոցիալական խտրականության օրինակներ։ Եկեղեցիները գուցե ավելի ընդունակ են այդ բանն անելու, քան կառավարությունները և այդպիսով կկարողանան ուշադրություն հարուցել այն ձայների նկատմամբ, որոնք պահանջում են մարդկայնություն և սոցիալական արդարություն: Հանդիսանալով ի նպաստ արդարության եղած խնդրանքների արտահայտիչը՝ նրանք կարող են օգնել Միացյալ ազգերի կազմակերպությանը՝ դառնալու առավել արդյունավետ և ազդու մի գործիք հօգուտ մարդկային իրավունքների պաշտպանության»:

Այսպիսով, վեցօրյա լարված աշխատանքից հետո, օգոստոսի 8-ին, փակվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջազգային գործերի հանձնաժողովի Գործադիր կոմիտեի 27-րդ նստաշրջանը:

*
* *

Օգոստոսի 13-ին նույն քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 25-րդ տարեկան ժողովը, որը տևեց մինչև օգոստոսի 23-ը:

Օգոստոսի 13-ին, առավոտյան ժամը 10-ին, տեղի «Դոմկերկ» Մայր տաճարում կատարվեց համատեղ աղոթքի հանդիսավոր արարողություն: Արարողության ընթացքում էկումենիկ ոգով մի զմայլելի քարոզ արտասանեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվո նախագահ դոկտ. Վիսերթ Հուֆթը:

Նույն օրը, կեսօրից հետո, Ութրեխտի «Կոնգրեսների պալատի» ընդարձակ դահլիճում բացվեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի ժողովը, որին մասնակցում էին, բացի կենտրոնական կոմիտեի անդամներից, տարբեր երկրներից ժամանած քրիստոնեական զանազան կազմակերպությունների հոգևոր և աշխարհական բազմաթիվ ներկայացուցիչներ, խորհրդականներ, դիտորդներ, հյուրեր, մամուլի և ռադիո-հեռուստատեսության թղթակիցներ՝ թվով շուրջ 500 հոգի:

Սույն ժողովին Մայր Աթոռի կողմից մասնակցում էին Մայր Աթոռի միաբան և Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը՝ որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի անդամ, և Մայր Աթոռի միջեկեղեցական արտաքին հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը՝ որպես դիտորդ:

Ժողովի բացմանը հրավիրված էր Հոլանդիայի Էլիզաբեթ իշխանուհին, որը հակիրճ և բովանդակալից իր ելույթում բարի գալուստ մաղթեց էկումենիկ շարժման ղեկավարներին ու ժողովի բոլոր մասնակիցներին՝ լիակատար հաջողություններ ցանկանալով նրանց իրենց առաջիկա աշխատանքներում:

Ժողովում գլխավոր զեկուցումով առաջինը հանդես եկավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար դոկտ. Էմեն Բլեյկը:

Նա կանգ առավ մի շարք հարցերի վրա, որոնք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր մտահոգություններն են կազմում: Ընդգծելով այն միտքը, թե քրիստոնյաների և քրիստոնեական եկեղեցիների եղբայրական համակեցությունը ոգեկան մի իրականություն է ու մի նպատակ, որին պետք է հասնել և առանց որի Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կդառնա սոսկ սոցիալական մի կազմակերպություն բազմաթիվ այլ կազմակերպությունների թվում, նա հիշեցրեց ներկաներին, որ 24 տարի առաջ Ամստերդամում էկումենիկ շարժման հիմնադիրները միմյանց նկատմամբ իրենց պարտավորությունները հաստատել էին հետևյալ բառերով. «Մենք որոշել ենք ապրել միասին»: «Նրանք կատարեցին այդ խոստումը,— ավելացրեց նա,— և մենք հետևեցինք նրանց: Բայց մենք ի վիճակի չեղանք այդ պարտավորությունը հասցնելու ցանկալի վախճանին: Մեր մեջ դեռևս կան անվստահության մնացորդներ, երկչոտություն, պառակտվածություն, նեղմտություններ և թյուրիմացություններ, դավանական անհանդուրժողություն և մշակութային, գաղափարախոսական ու ազգային պարտավորություններ, որոնք բացառում են միմյանց»: Այստեղից էլ նա հանգեց այն եզրակացության, որ եկեղեցիների միության ճանապարհին առաջընթացը ինքնաբերաբար տեղի չի ունենա, այլ այն կախված է աստվածաբանական լուրջ ուսումնասիրություններից, որին պետք է լծվի Հավատո և Կարգի հանձնաժողովը:

Դոկտ. Բլեյկն այնուհետև իր զեկուցման մեջ կանգ առավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և հռոմեական կաթոլիկ եկեղեցու փոխհարաբերությունների հարցի վրա՝ նշելով, որ համաշխարհային գետնի վրա էկումենիկ շարժման կյանքն ու զարգացումը, ինչպես և նրա ապագան մեծապես կախված են այն հարաբերություններից և համագործակցությունից, որոնք կարող են հաստատվել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և հռոմեական կաթոլիկ եկեղեցու միջև: Ընդ սմին նա ներկայացնելով ժողովականներին այդ փոխադարձ հարաբերությունների և նրանց զարգացման մանրամասն պատկերը՝ նշեց, որ չնայած այդ բնագավառում ցարդ ձեռք բերված արդյունքներին, չպետք է սպասել, որ մոտիկ ապագայում կաթոլիկ եկեղեցին դիմում կներկայացնի մտնելու Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմի մեջ որպես անդամ: Նա գնահատելով հանդերձ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կազմից ներս կաթոլիկ եկեղեցու մուտքի հարցը ուսումնասիրող խառն հանձնախմբի անդամների կատարած օգտակար աշխատանքը՝ իրավամբ խոստովանեց, որ մեկ տասնամյակի ժամանակաշրջանը չափազանց կարճ է դարմանելու համար դարավոր ընդհարումների ու թշնամությունների պատճառած ավերները:

Վերջում դոկտ. Բլեյկը հույս հայտնեց, որ կենտրոնական կոմիտեն, հավատարիմ իր էկումենիկ ավանդության գծին, կշարունակի պաշտպանել բոլոր այն համերաշխ ջանքերը, որոնց նպատակն է ուժեղացնել Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համագործակցությունը հռոմեական կաթոլիկ եկեղեցու հետ եկեղեցական կյանքի բոլոր մակարդակներում, որպեսզի քրիստոնյաները կազմեն տեսանելի մի միություն համապատասխան Քրիստոսի աղոթքի՝ «...որպեսզի աշխարհը հավատա»։

Ժողովում երկրորդ զեկուցողը եղավ կենտրոնական կոմիտեի Գործադիր խորհրդի նախագահ դոկտ. Մ. Թոմասը, որը ժողովականներին ներկայացրեց Գործադիր խորհրդի մեկ տարվա գործունեության մանրամասն հաշվետվությունը։

Ժողովը հետաքրքրությամբ լսեց նաև մի շարք շահեկան զեկուցումներ հետևյալ թեմաների շուրջ.

Տանն Կիլիկիո կաթողիկոսության ներկայացուցիչ Գարեգին եպս. Սարգսյանի զեկուցումը «Եղբայրական հասարակության ծառայությանը զինվորագրվածներ» թեմայի շուրջ.

Աստվածաբանության պրոֆեսոր-դոկտ. Յուրգեն Մոլթմանի (Արևմտյան Գերմանիա) զեկուցումը «Եղբայրական համակեցություն՝ բաժանված աշխարհում» թեմայի շուրջ.

Դոկտ. Ջոն Դեշների զեկուցումը «Իրագործված առաջադիմություններ եկեղեցու միության բնագավառում» թեմայի շուրջ և այլն։

Հետագա օրերի ընթացքում ժողովականների առաջ հաշվետու զեկուցումներով հանդես եկան Եկեղեցիների համաշխարհային խորհրդի տարբեր միավորումների, հանձնաժողովների, կոմիտեների, ենթակոմիտեների, առանձին բաժինների ղեկավարները իրենց տարեկան գործունեության վերաբերյալ։ Այսպես, ժողովը լսեց զեկուցումներ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և հռոմեական կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խառն հանձնախմբի, Հավատո և Կարգի հանձնաժողովի, Բոսեի էկումենիկ ինստիտուտի, «Դաստիարակություն և հաղորդակցություն», «Արդարություն և ծառայություն» միավորումների, Նյու-Յորքի գրասենյակի, ֆինանսների կոմիտեի, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գրադարանի և այլ կոմիտեների կողմից կատարված աշխատանքների մասին։ Կարդացված զեկուցումներն այնուհետև ենթարկվեցին լայն քննարկման, տեղի ունեցան բանավեճեր, արվեցին կոնկրետ առաջարկություններ և արծարծված հարցերի կապակցությամբ ընդունվեցին համապատասխան որոշումներ։

Ժողովի օրակարգում դրված գլխավոր հարցերից մեկն էր կենտրոնական կոմիտեի նոր գլխավոր քարտուղարի ընտրությունը։ Օգոստոսի 16-ի առավոտյան կենտրոնական կոմիտեն իր դռնփակ նիստում միաձայնությամբ գլխավոր քարտուղար ընտրեց Ամերիկայի մեթոդական եկեղեցու ներկայացուցիչ, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի տնօրեն դոկտ. Ֆիլիպ Փոթրին, որը կոչվեց փոխարինելու դոկտ. Էժեն Բլեյկին նրա պաշտոնում, քանի որ վերջինս, լրացրած լինելով իր 65 տարեկան հասակը, ըստ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կանոնադրության պետք է հրաժարվեր իր պաշտոնից։

Դոկտ. Փոթրը ժողովասրահում հավաքված բազմահարյուր ներկաների բուռն ծափահարությունների ներքո Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պատվո նախագահ դոկտ. Վիսերթ Հուֆթի ուղեկցությամբ առաջնորդվեց ամբիոն, որտեղ կենտրոնական կոմիտեի նախագահ դոկտ. Թոմասը ողջույնի սրտառուչ խոսք ուղղեց նրան՝ դրվատելով նրա արժանիքներն ու էկումենիկ շարժմանը նրա մատուցած անգնահատելի ծառայությունները։ Իր պատասխան ելույթում դոկտ. Փոթրը սրտագին շնորհակալություն հայտնեց իր նկատմամբ ցուցաբերված վստահության համար՝ ավելացնելով, որ եղբայրական այն մթնոլորտը, որով շրջապատված է ինքը, մշտական գործունեության մի ալբյուր պիտի լինի իր համար։

Դոկտ. Փոթրի ելույթին հաջորդեց տարբեր թերթերի թղթակիցների հարցազրույցը նրա հետ, որի ընթացքում շոշափվեցին էկումենիկ շարժման հետ առնչվող մի շարք կարևոր խնդիրներ։

Դոկտ. Ֆիլիպ Փոթրը իր նոր պաշտոնին կանցնի 1972 թվի նոյեմբերի 1-ից։

Ժողովի քննարկմանը ներկայացված հարցերից մեկն էլ ռասիզմի դեմ մղվող պայքարի հարցն էր։ Կենտրոնական կոմիտեն միաձայնությամբ հաստատեց Գործադիր խորհրդի կողմից ներկայացված այն բանաձևը, ըստ որի կենտրոնական կոմիտեին հանձնարարվում էր ռասիզմի դեմ տարվող պայքարի ծրագրի իրականացման համար ստեղծված հատուկ ֆոնդի գումարը 500.000 դոլլարից բարձրացնել մեկ միլիոն դոլլարի, գումար, որը հատկացվելու է մարդասիրական նպատակներով գործող այն կազմակերպություններին, որոնք պաշտպանում են իրավազրկված ու ճնշված մարդկանց իրավունքները Աֆրիկայում և աշխարհի այլ մասերում։

Սույն ժողովում որոշում ընդունվեց ԵՀԽ-ի հինգերորդ համագումարը հրավիրել 1975 թ. հուլիսին Ջակարտայում (Ինդոնեզիա)։

Ժողովը քննարկեց նաև հետևյալ եկեղեցիների դիմումները Եկեղեցիների համաշխարհային խորհրդին անդամակցելու համար. 1) Հյուսիսային Հնդկաստանի եկեղեցի, 2) Զաիրի պրեսբիտերական եկեղեցի (Կոնգո), 3) Միջազգային ավետարանական եկեղեցի (Իտալիա), 4) Նիասի պրեսբիտերական եկեղեցի (Ինդոնեզիա), 5) Դահոմե-Տոգոյի մեթոդական եկեղեցի, 6) Ֆիլիպինների ավետարանական-մեթոդական եկեղեցի, 7) Լիբերիայի լութերական եկեղեցի, 8) Լատինա-ամերիկյան վերակազմյալ եկեղեցի, 9) Պերուի մեթոդական եկեղեցի, 10) ԳԴՀ-ի քրիստոնեական եկեղեցի։

Վերջին երկու եկեղեցիների դիմումները ներկայացվել էին՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին գործակից եկեղեցիներ դառնալու առաջադրանքով։

Կենտրոնական կոմիտեն հաստատեց վերոհիշյալ եկեղեցիների՝ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին անդամակցելու կամ նրա հետ գործակցելու վերաբերյալ Գործադիր կոմիտեի կողմից 1971 թ. սեպտեմբերին և 1972 թ. փետրվարին ներկայացված հանձնարարությունը։

Ժողովը քննության առավ նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի սահմանադրության և կանոնադրության մեջ որոշ բարեփոխություններ մտցնելու վերաբերյալ եղած առաջարկությունները, որոնցից ամենաուշագրավը կենտրոնական կոմիտեի կազմի մեջ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին գործակից եկեղեցիներից լրացուցիչ կարգով առավելագույնը հինգ անդամներ ընդգրկելու մասին եղած առաջարկությունն էր, որը, ըստ երևույթին, թելադրված էր տարեց-տարի Եկեղեցիների համաշխարհային խորհրդին հարող գործակից եկեղեցիների թվի աճից։

Ժողովի փակման նախօրյակին Վատիկանից Ուրթեխտ ժամանեց կարդինալ Վիլլեբրանդը, որը Հոլանդիայի կարդինալ Ալֆրինկի հետ միասին ջերմորեն ընդունվեց ժողովականների կողմից։ Երկու կարդինալներն էլ պաշտոնական ելույթներով հանդես եկան ժողովականների առաջ՝ ողջունելով ժողովի մասնակիցներին և հետագա գործակցության անկեղծ ցանկություններ, ինչպես և արտագին մաղթանքներ արտահայտելով եկեղեցիների միության գաղափարի իրականացման ճանապարհին տարվող աշխատանքների հաջողության համար։

Այսպիսով, Ուրթեխտում գումարված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի ժողովն ավարտեց իր աշխատանքները, և որոշվեց հաջորդ նստաշրջանն անցկացնել 1973 թ. Ֆինլանդիայում։

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ
Ընդհանուր քարտուղար
Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի





ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆԸ*

Ներսես Ե-ին հաջորդում է Մատթեոս Ա կաթողիկոսը, որ հայրապետական գահ բարձրանալուց հետո երկու խնդիր յուր հոգացողության առարկա է դարձնում, դոցանից մեկը Էջմիածնում բարձրագույն դպրոց հիմնելու ծրագիրն էր, որ իրենից առաջ Ներսես Ե-ի էլ փայփայանքն էր եղել: 1860-ական թվականներին Միքայել Նալբանդյանը գտնվում էր Էջմիածնում. հավանական է կաթողիկոսը Էջմիածնում բարձրագույն դպրոց հիմնելու ծրագիրը հայտնել էր նրան, ուստի և Միքայել Նալբանդյանը, որ իբրև Մասեհ Բարաջանյանի և այլոց կտակները ստանալու լիազոր Հնդկաստան էր գնացել, 1862 թվի հունվարի 20-ին Մատթեոս Ա կաթողիկոսին յուր գրած մի գրության մեջ շեշտում է, որ Կալկաթայի ս. Նազարեթ եկեղեցու եկեղեցականի մոտ հոգուտ Մայր Աթոռի 1852 ռուբլի մի գումար կա կտակած, որն ստանալու համար խնդրում է կաթողիկոսին հարկավորը կարգադրել:

«Գումարդ այդ,— ասում է Նալբանդյանը,— որ մնացեալ է անդր և որ մնասցէ, եթէ ոչ պահանջիցէք, կարէ սատար լինել Ձեզ թերևս ի շինութիւն դպրոցին, որ հիմնէիք տակաւին ամօք իբրև երկուք յառաջ»**:

Հայտնի չէ, թե կաթողիկոսը Նալբանդյանի այս հիշած գումարը ստացե՞լ է, թե ոչ, ուստի և գուցե դրամականի պակասության պատճառով դպրոցական շենք շինելու ծրագիրը մնում է անկատար:

Երջանկահիշատակ Մատթեոս Ա կաթողիկոսը, ինչպես երևում է ստորև բերված նրա մի կոնդակից, զբաղված է եղել նաև Մայր Աթոռի տպարանի համար մի հարմարավոր շենք կառուցանելու խնդրով: 1864 թվի հունիսի 11-ին № 302 կոնդակով հետևյալ հրամանն է ուղարկում Աղեքսանդրապոլի հոգևոր կառավարությանը.

«Հոգևոր կառավարութեանդ Աղեքսանդրապոլու ծանուցանեմք, զի պ. Ղազարն մահտեսի Իսկանդարեանց (նոյն և Սահակեան) դիմեալ ի Մայր Աթոռս, ծանոյց մեզ արդէն ընկալանուլն իւր զհրաման թոյլատուութեան ի դրանէ օսմանեան, ըստ զօրութեան մերս միջնորդական կոնդակի, վասն 1500 մայր փայտից ի պէտս շինութեան նորակառոյց ուսումնարանին իւրոց և եկեղեցոյ Ղարաքիլիսա գեղջ տեղւոյդ և ըստ որում **ի շինութիւն նորակառոյց տպագրատան Մայր Աթոռոյս** (ընդգծումը մերն է—Ա. Ե. Ս.) կարեվեր հարկաւոր էր քանի հարիւր մայր փայտս առաջարկեցաք աստ նմին Ղազարու տալ և շինութեան տպարանի մերում զհարկաւոր թիւ փայտս և սիրով և յօգուտ ս. Աթոռոյս խոստացաւ ի կատար ածել զայս մեր առաջարկութիւն, զորմէ տնօրինեալ մեր ունիմք ի ձեռն կարգաւորութեան Սինօդի ս. Էջմիածնի ի ժամանակին ստանալ զայնոսիկ փայտսն ի նմանէ՝ ուստի առաջադրեմք հոգևոր կառավարութեանդ ի 20 մայիսի տարւոյ № 258 գրեալ կոնդակն մեր վասն տալոյ զերեք հարիւր փայտս ընկերութեանն Հառիճոյ վանից թողուլ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թվականի №№ Դ—Ը-ից:

** Երվանդ Շահազիզ, Դիւան Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932 թ., էջ 191:

սնկատար և յայտնել նմա վասն կարգաւորելոյ զարժանն ի լրումն պիտոյից շինութեանց, զի զայնոսիկ փայտս զարդիս ունի ստանալ Մայր Աթոռս»*:



Մաշտոց. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1836 թ.

Սակայն ըստ երևույթին Սահակյանը այդ փայտերը Էջմիածնին չի հանձնում, ի վաճառ հանելով բերած փայտը: Ուստի Հառիճայի ընկերությունը 1864 թվի դեկտեմբ. 16-ին հետևյալ խնդրագիրն է ուղարկում Մատթեոս Ա. կաթողիկոսին.

«Ձերդ Վեհափառության տնօրինությամբ մեր ընկերությունը հոգս քաշեց պատրաստել և բերել օսմանյան տերությունից երեք հարյուր մայր փայտ 1500 փայտի հաշվից ուսումնարանների շինությունների համար, բայց վերջը

* Կ. Կոստանյան, Հառիճայի վանական ընկերության հիշատակարանը ու հաշիվը, Աղեքս., 1910:

դադարեցավ այդ, այն պատճառով, որ Ղազար Սահակյանը խոստացավ Մայր Աթոռի նորակառուցանելի տպարանի համար թեև մեր ընկերությունը ևս հոգվով չափ պատրաստ էր նորա նման յուր երեք հարյուր փայտից մասն հանել նույն տպարանի օգտին և ստանալ յուր նախանշանակյալ քանակու-



ՀԱՐԻՒՐ ԵՒ ՉՈՐՍ
ՍՈՒՐԲ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հարիւր

Ի Հին և Ի Նոր Կտակարանաց

յոգաւոր մանկանց

Ուշեռաւորիւրեամբ Յովհաննու Դիրքներեան
Հանդերձ յոլովագոյն հոգեշահ խրատուց
և պարզաց բարեպաշտութեան.

Ի Ոտս լեզուէ

Հայոց

Մեծագոյն հանդերձ Հայոց տիխարայ Լուսահակ Սա-
հառոնեանց։

Ի Հայրապետաւորութեան գերապատիւ
մայր Աթոռոյդ Կիւթուղիկոս Լ.Զ ՄԻ-
ԱԾՆԻ Ցեռան ուխերոյդ ՅՈՎ-
ՀԱՆՆԱ Կարբ'ցւոյ արբազնակառարա Կա-
թուղիկոսի համ Հայոց և Կայսերապարակ Ք-
պետի ոդոյ և Վերնատուն Հրամանաւ Տպա-
գրեցաւ։

1838։ ՌՄԼԷ։

Ի Տպարանի Պոլսոյ Դիրիգոյի Լուսաւորչին

Ի ԱԹ Լ.Զ ՄԻԱԾԻՆ։

Հարիւր և չորս սուրբ պատմութիւն. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1838 թ.

թյունը. սակայն լավ իմանալով, թե այդ մի ինքնահնար առաջարկություն է փայտերն յուրացնելու, ինչպես և եղավ, այդ պատճառով սպասում էր վախճանական տնօրինության։ Արդ, որովհետև վերոգրյալ Սահակյանը և նորա ընկերակիցներն արդեն սկսած են բերել փայտն և ընկերության բաժինը մնում է այնտեղ և վնասներ են լինում մեզ, վասն որո վստահացանք ամե-

նախանարհաբար դիմել ձեր Վեհափառության և խնդրել, որ մի կոնդակ շնորհեք Կարսի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Ռշտունու և արաբկիրցի Ղուկաս աղայի անունով, ձեռնտու լինելու և թույլատրելու մեզ բերել երեք հարյուր փայտը ուսումնարանական շինությունների վերա գործադրելու համար, որպեսզի չլինի թե այսուհետև բազմապատկի մեր վնասը, իսկ եթէ հարկավորի այսուհետև մի քանակություն փայտի տպագրատան շինության համար, մենք էլ խոստանում ենք մյուսների նման օժանդակ լինել, ինչպես որ բարեհաճի հոգևոր իշխանությունը»*:

Այնուհետև թե այդ մայրի փայտերն ստանալու համար ինչ կարգադրություն է եղել, արդյոք Սահակյանը տվե՞ց այդ 300 մայրի փայտերը, պատմական տեղեկություններ չկան:

ԺԳ

Մատթեոս Ա կաթողիկոսին հաջորդեց Գեորգ Դ կաթողիկոսը, որ հայոց եկեղեցու պատմության մեջ հայտնի է «մեծագործ» անվամբ: Այդ անվանն արժանացել է նա իբրև ուսումնասեր և Էջմիածնում մշակութային, կրթական նոր կյանքի հիմք դնող անձնավորություն: Այդ ոգով գործել էր նա մինչև հայրապետական գահը բարձրանալը Տաճկահայաստանում, յուր վարած պաշտոնների մեջ իբրև վարդապետ և եպիսկոպոս: Հայրապետական գահն առավել լայն իրավունքներ էր տալիս և հեռավոր հորիզոններ բանում յուր հոգում ու սրտում ամբարված ու վաղուց հետե փայփայած յուր բոլոր իղձերը ի կատար ածելու հօգուտ ազգի և եկեղեցու: Այդ նկատառումներով, երբ նա Էջմիածին էր գնում հայրապետական գահ բարձրանալու, ազգային բոլոր աչքի ընկնող անձինք և խմբագիրները, Պոլսից սկսած Հայրապետի վերա ծանր պարտականություններ են դնում: Սակայն, ժամանակի ոգին ու հրամայողական պահանջները շատ լավ էր ըմբռնել Ստեփաննոս Նազարյանը, որ գիտեր ճշտությամբ կշռել ամեն հանգամանք և ուղիղ ու արդար պահանջ դնել նորընտիր Հայրապետի առաջ: Ահա թե նա յուր մի ուղերձի մեջ ինչ է ասում.

«Ամենայն անդաստան, ևս առաւել իմանալին անդաստան որևէ ազգի, հարուստ ժամանակս ամայի և անմշակ թողեալ, ոչ է բնաւորեալ նոյն ժամայն արդիւնս մեծամեծս գործել. ասա ուրեմն աշխատասէր երկրագործին հարկ ի վերայ հասանէ նախ և առաջ արօրս կազմել, լուծս յօրինել, ակօսաբեկ պատառել զկորդացեալն անդաստան, մինչև հնար իցէ գալ ի սերմնարկութեանն, իսկ սոյն այս սերմնարկութեան կարօտ գոյ դարձեալ ժրաձեռն ջուրտուութեան և բազմադիմի խնամոց, մինչև իւրումն ժամանակի ի վեր երևիլ ակընկալելոցն արգասեաց»**:

Գեորգ Դ կաթողիկոսը դառնում է այդ սերմը ձգողը, որը պիտի ուներ ու բարգավաճեր յուր հաջորդների խնամքով ու ջուրտվությունով: Նա շատ լավ էր հասկացել ու ըմբռնել ժամանակի ոգին և հրամայողական պահանջը ազգի զարգացման ու քաղաքակրթական աստիճանը բարձրացնելու մեծ կարիքը. ուստի յուր կաթողիկոսական գահը բարձրանալու հաջորդ տարին, երբ վերադառնում է Ռուսաստանից, 1868 թվի մարտի 1-ին հրամայում է ս. Սինոդին, որ անհապաղ տպարանի պակաս բոլոր պարագաները պատրաստեն,

---

* Անդ:

** **Մ. Աբեղյան**, Գեորգ Դ մեծագործ կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1899, էջ 31:

իսկ տպարանը ավելի բարեկարգ ձևով կառավարելու համար ուսման տեղյակ արժանավոր եպիսկոպոսներից և վարդապետներից մի հանձնաժողով է կազմում: Դեռևս Ռուսաստանում կատարած յուր առաջին ճանապարհորդության ժամանակ Գեորգ Դ. կաթողիկոսը մտածում և հոգս է քաշում տպարանը



Ստորագրություն կաթուղիկէ Էջմիածնի. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1842 թ.

բարեկարգելու համար և Ղրիմում եղած ժամանակ Խալիպյան ուսումնարանի տպարանից տառեր, ծաղիկներ և այլ զարդանկարներ ստանալով՝ բերում հանձնում է Սինոդին 1868 թվի մարտի 2-ի № 26 հետևյալ կոնդակով.

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... լուսաւորչական հայոց Սինոդին

սրբոյ Էջմիածնի: Ցայց ելանելն մեր յայնկոյս Կովկասու եղեալ սիրելի ազգի մերում, որ ի Տաւրիկեան նահանգս վասն կարի հարկաւորութեան տպարանի Աթոռոյս, բերաք ի Խալիպեան տպարանէ զվեշտասան տեսակ, տառս նոյնպէս և ծաղիկ, ըստ յարմարութեան տառից նոցին, որք առ առժամանակեայ տպագրութեան կարեն ձեռնտու լինել այժմեան կարգադրեալ հեղինակութեանց և լրագրոց, որոց ցուցակսն ընդ սմին առաքեալ ի Սինոդդ պատուիրեմք յանձնել վերատեսչի յիշեալ տպագրատան, զի զամենայն տեսակս տառից և ծաղկանց՝ ստացեալ զգուշութեամբ ի գործ ածցեն, մինչ ցստացումն բովանդակ տեսակաց նոցին, թիւ 26 յ2-ն մարտի 1868 ամի և յԱզգային ՌՅԺԷ ի ս. Էջմիածին»:

Դեռևս տպարանի բարեկարգությունը չվերջացրած 1868 թվի մայիսի 1-ից ս. Էջմիածնի տպարանից կաթողիկոսի առանձին հրամանով սկսում է լույս տեսնել «Արարատ» կրոնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելյաց ամսագիրը, որ լույս է տեսել ամեն տարի մինչև 1919 թիվը (1920 թվից վերածվել է «Էջմիածին» շաբաթաթերթի), Մայր Աթոռի միաբանների և հայ բանասերների աշխատակցությամբ:

Գեորգ Դ-ը դեռևս 1868 թվի հունվարին առանձին ուշադրություն էր դարձրել տպարանը կարգավորելու վերա: Ուստի և նույն թվի հունվարի 22-ին, № 7 գրությամբ հաղորդում է Թիֆլիսի առաջնորդ Մակար արքեպիսկոպոսին, թե տպարան կարգավորելու գործը հանձնել է նորա ուղարկած վարպետին և հույս ունի, որ գոհ կմնա:

Ապա հենց նույն ամսին ստանում է աղա Հարություն Խալիպյանից Թեոդոսիայի՝ նրանց տպարանի տառերից корпус № 10 новый մեկ ամբողջ թերթի տառեր, գլխատառեր և ծաղկատառեր 10, 12, 14, 16, 18, 24, 28, 48, ապա նաև ուրիշ տառեր, զարդեր և գծազարդեր, բոլորը երեք փութ 33½ գրվ.:

Նույն 1868 թվի ապրիլին թուղթ է գրում իշխան Հովնանյանցին՝ խնդրելով Եվրոպայից ամեն տեսակ լավ թուղթ բերել տա, որը և մայիսին Հովնանյանցը ուղարկում է Էջմիածին 120 թոփ երեք տեսակ թուղթ:

Նույն թվի դեկտեմբերին կաթողիկոսի կարգադրությամբ Պոլսից հրավիրվում է Նշան Պերպերյանը իբրև տպարանի վարիչ, Թիֆլիսից էլ՝ Ղազարոս Աղայանը: Պոլսից բերել է տալիս 100 օզմա թուղթ **Ճաշոցի** տպագրության համար: Դեռևս 1868 թվի հունվարի 27-ին № 19 կոնդակով խնդրում է Հովհան Հովնանյանցից տպարանի համար թուղթ ուղարկել **Արարատ** և **Ճաշոցի** տպագրության համար և խնդրում է նաև ուղարկել, եթե կա Թիֆլիսում, երկու հատ տպագրական մամուլ: Այս մամուլները տպարանն ստանում է 1870 թվին:

Նույն թվի օգոստոսի 13-ին № 380 հետևյալ կոնդակն է ուղարկել Մկրտիչ Սանասարյանին Վիեննայից ուղարկած պղնձյա մայրերի համար:

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... հարազատ որդւոյ առաքելական Մայր սուրբ Աթոռոյս գերամեծար աղա Մկրտչի Սանասարեանց քրիստոսական ողջոյն հայրապետական օրհնութեամբ:

Զնամակ սիրելութեանդ զգրեալն յ31-ն յուլիսի այսր տարւոյ մեծաւ հաճութեամբ սրտի ընկալաք ընդ նմին հասին ի ձեռս մեր խոստացեալքն ի Զէնջ գեղեցկատիպ մայրք հայկական տառից, ևս և չորս տոմսակք վիճակախաղուց, զորս գնեալ է ձեր ի մայրաքաղաքիդ ընդ նմին և զառաքեալն ի Զէնջ զարժեւոմսն: Ոչ յապաղիմք յայտնել զշնորհակալիս սրտի մերոյ վասն փոյթ և եռանդն ջանասիրութեան Ձերոյ առ ի կատարել զյանձնարարութիւնս մեր մտադիր սիրով. նամանաւանդ առաքումն հայկական տառից, բերկրեցոյց

զմեզ կարի, զի կարօտութիւն մեծ էր վայելչահիւս տառից ի տպարանիս մերում: Յուսամք զի սիրելութիւն Ձեր փոյթն յանձին կալցի, ըստ բնատուր ազգասիրութեան իւրում նաև զխոստացեալ Ձեր պարագայս տպարանի ուղղել առ մեզ կարելին փութով ի յիշատակ պատուական անուան Ձերոյ, որպէսզի


ԱՐՍԵՆԻՍ
ԹՈՒՄԲԱՆԱՊԵՏԻՆ
ԷՋՄԻԱԾԻՆ.
Ի Կարապետ Վարդապետէ Շահնազարեանց.
յուսուցչէ Թուաբանութեան ի Ճեմարանի ՄԱՅՐ
Էջմիածնի:
Ի Վենետիկ Սրբոյն Ղազարու
Մասն Բ-ջին:
ՀՐԱՄԱՆԱՒ
Ի Էջմիածնայ Կաթուղիկոսի ամենայն
Հայոց ու Թէրզրդի ՅՈՎՀԱՆՆԱՅ Կարբէցւոյ և զանազան Եր-
շանաց Արարատ:
1842 ՀՄՂԷ
ԻՍՄԻՐ ԷՋՄԻԱԾՈՒՆ

Արիեստ թուաբանութեան. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1842 թ.

մարթասցուք զտպագրութիւն **Արարատ** լրագրիս մերոյ բարւոքել և զհաճոյագոյնս զայն ընծայեցուցանել ազգային ընթերցանելեաց. լերուք ողջ ընդ երկայն աւուրս»[16]:

Գեորգ Դ-ը տպարանի հառաջադիմությանը, բարգավաճմանը և ծաղկմանը արագությամբ զարկ տալու համար 1868 թվի օգոստոսի 13-ին № 381 կոնդակն է ուղարկում Արամ Ճանիկյանին և խնդրում է մի հմուտ վարպետ գտնի ու տեղեկացնի իրեն: Ահա այդ կոնդակը.

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... Մեծարգոյ պ. Ճանիկ Արամեան հարազատ լուսածին Մայր Աթոռոյս քրիստոսական ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ:

Ոչինչ անծանօթ է Ձերդ սիրելութեան, զի ի քանի մի ամսոց հետէ ի տպարանէ Մայր Աթոռոյս ս. Էջմիածնի սկսեալ է ի լոյս ընծայիլ **Արարատ** անուամբ լրագիր առ ի հրահանգել զհաւատացեալն մեզ ժողովուրդ ի բարոյական և յեկեղեցական գիտութիւնս: Մեզ փափագելի էր յոյժ, որպէս անտարակոյս և Ձերդ ազգասէր սրտի, զի օրագիրս այս իմաստալից բովանդակութեամբ տպագրեալ ի նմա նիւթոց և արտաքին բարեձևութեամբ տառից ևս և հմուտ տպագրական ձևոցն վայելչութեամբ, հետաքրքրական և սիրելի հանդիսացի լրութեան ազգիս, որպէսզի մարթասցուք ըստ իմիք հասանել ի յառաջ եդեալն մեզ նպատակ. բայց մինչև ցայսօր բազմադիմի կարօտութիւնք արգելառիթք լինին զարգացման մերս լրագրի վասն պէս պէս պատճառաց և գլխաւորապէս հեռաւորութեան Մայր Աթոռոյս ի զանազան եւրոպական մայրաքաղաքաց:

Եւ քանզի մի ի գլխաւոր կարօտութեանց որևիցէ տպարանի է իրաւամբ գիւտ յաջող տպագրապետի, զորոյ զկարևորութիւն և մեք կարի զգամք աստանօր, վասնորոյ գիտելով զազգասիրական զփոյթ Ձեր և զջանացողութիւն առ ի նպաստամատոյց լինել ըստ կարողութեան չափու յայսպիսի ազգաշահ դէպս ի յառաջադիմութիւն ազգային ձեռնարկութեանց, մեք կոնդակաւս այսուիկ մեծայոյս հաւանութեամբ առաջարկեմք մեծարգոյ սիրելութեան Ձերում, աշխատ զանձն առնել առ ի գտանել զտպագրապետ ոմն, զի քաջիկ տեղեակ լինիցի տպագրական արհեստին, հմուտ նաև հայկական բարբառոյ և ամենայն պահանջելի կատարելութեանց, որպիսի և իցէ ազգաշահ լրագրի, ժիր և արթուն ի գործս վերակացութեան, ի վերա այլոց գրաշարից: Եւ եթէ ունիջիք ի նկատի զայսպիսի արժանաւոր անձն, խնդրեմք տեղեկանալ թէ ո՞րչափ տարեկան ոճիկ խնդրիցէ այնպիսին ի գալ աստանօր և տաջիք մեզ տեղեկութիւն, զի և մեք եթէ հնարաւոր իցէ հրաւիրեսցուք զնա փութով ի Մայր Աթոռս մեր, զի օր յառաջ լցցին պէս պէս կարօտութիւնք նորատիպ **Արարատ** լրագրին և զանազան ոսկեղենիկ ձեռագիրս նախնեաց մերոց եղեալս ի Մատենադարանի տեղոյս գեղեցիկ տպագրութեամբ ընծայեսցին ի վայելս ուսումնասէր համազգայնոց մերոց:

Յուսալով զի մեծարգոյ սիրելութիւն Ձեր մտադիր սիրով ջանասցէ ի գլուխ հանել զմերս զայս ազգաշահ յանձնարարութիւն, ողջ լերուք ի Տէր: Թիւ 381 ի 13 օգոստոսի 1868 ամի և յԱզգային ՌՅԺԸ ի ս. Էջմիածին»[17]:

Մինչև Գեորգ Դ կաթողիկոսը ս. Էջմիածնի տպարանում մայրերը ձուլում էին ձեռքի գործիքներով, որոնք մինչև 1920 թվը պահվում էին տպարանում: Առաջին անգամ Գեորգ Դ-ն է բերել տալիս տառեր ձուլող մեքենա, որով մինչև 1920 թվը, քիչ բացառությամբ տպարանի համար հարկավոր տառերը պատրաստվում էին:

1869 թվին Մկրտիչ Սանասարյանը նվիրում է Էջմիածնի տպարանին անգլիական «Wood» ընկերության արագաձույլ մեքենան 6×9 մեծությամբ, երկու տեսակ հալոցներով, մեկը հասարակ տառեր և մյուսը զանազան աստիճանի և ձևերի գլխագրեր, ծաղկագրեր և ծաղիկներ և այլն ձուլելու հա-



Ս. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1865 թ.

մար: Այլև ստացվում են ութ տեսակ կաղապարներ այլ և այլ աստիճանի և մեծության տառեր, պարագաներ և գծեր ձուլելու համար:

Սանասարյանը նվիրում է նաև մի մեքենա գծեր կտրելու, պղնձյա չորս տեսակ գծեր, մարզաններ, զանազան գեղեցիկ ծաղիկներ, զարդեր, թվա-

նշաններ և շպոններ: Նվիրում է նաև ինը տեսակ մայրեր նորաձև և վայելուչ գլխագրերի, բոլոր գրերի և գեղեցիկ նոտր գրերի և ուրիշ տառերի թվանշանների ու կետանշանների:

Սանասարյանի օրինակով ագուլեցի Մկրտիչ Գրիգորյան Տեր-Մկրտչյանն էլ նվիրում է Մայր Աթոռի տպարանին Հայաստանի տեսարանների կաղապարներ 44 հատ, յոթ տեսակ բոլորագիր, շղագիր, գլխագիր, ծաղկագիր,' մայրեր իրանց պարագաներով, երկու տեսակ ձուլված մեծ ծաղկագրեր, զանազան տեսակ մեծ և փոքր կազմարարական շարընկալ:

Բացի վերոգրյալները Մայր Աթոռի տպարանին են անցնում նաև Խալիպյան տպարանի մայրերից շատերը:

Տպագրական գործին վերաբերյալ զանազան գործիքներ և թուղթ ձեռք բերելու և տպարանը ավելի հարստացնելու համար Գեորգ Դ կաթողիկոսը 1869 թվի ընթացքում դիմումներ է անում դարձյալ Կարապետ Եզյանին, Հովհաննես Հովնանյանցին և Մկրտիչ Սանասարյանին, որոնք և ընդառաջ գնալով կաթողիկոսի բաղձանքներին, խնդրած բոլոր պարագաներն ուղարկում են Էջմիածին: Այդ ավելի պարզ ցույց են տալիս նոցա գրված մի քանի նոնդակները, որոնք բերվում են ստորև.

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... մեծահաւատ և բարեպաշտ աղա Յովհաննիսի Յովնանեանց, սիրելի և հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս, խնդալ ի Տէր: Ի 18 մարտի առաքեալ գրութիւն Ձեր ընթերցեալ ուրախ եղաք յոյժ տեսանելով ի նմա զազգասէր և հոգեսէր եռանդն Ձեր, որ առաւել քան զոր մեք զգամք, պերճացեալ հանդիսանալով ցուցեալ էիք զյօժարութիւն Ձեր առ յանձնարարութիւն մեր ի մասին պիտոյից տպագրատան Աթոռոյս: Տէր Յիսուս Քրիստոս որ զամենայն հոգեկան վաստակս ջերմեռանդն բարեպաշտից կշռէ ըստ չափու պարգևաց շնորհաց իւրոց, առատասցի ի Ձեզ բեղմնաւոր և հոգեպարար սուրբ օրհնութեամբն իւրով, յազգէ յազգ փառաւորելով զՁեզ և զհամայն աստուածասէր տոհմայինս ի պարծանս ազգիս և ի պայծառութիւն եկեղեցւոյ սրբոյ:

Գոհ եմք յամենայն սրտէ զի յետ ի ձեռս բերելոյ մամլոյն և թղթոյն խոստանայք առաքել ի ժամանիլ աւուրց ամռան, բայց զթուղթսն, մանաւանդ մասն **Ճաշոցի** յատկացեալն եթէ հնար է փութացուցանել, շնորհ մեծ առնէք, քանզի բազում եկեղեցիք կողմանցս չունելով **զՃաշոց** գիրքն դիմեն հանապազ ի Մայր Աթոռս և թախանձեն. և մեք խոստացեալ եմք ընդհուպ զտպագրութիւն այնորիկ զայս ամենայն կարևորութեամբս յանձնելով ի հաճութիւն Ձեր, մաղթեմք ի Տեառնէ...: Պահել զՁեզ ի չարեաց լցեալք պտղովք աստուքինութեան և լիութեամբ պարգևաց Հոգւոյն սրբոյ. ողջ լերուք զօրացեալք միշտ ի խնամս Տեառն: 1869 ամի ապրիլի 10 համար 117»[18]:

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... Քրիստոսազօր և ազգասէր աղա Յովհաննու Յովնանեանց յաւէտ հարազատի Մայր Աթոռոյս... Ընկալեալ զգրութիւն Ձեր տողեալ յամսեանն յուլիսի յանչափս ուրախ եղաք ի սիրտ և օրհնեցաք զՁեզ, զի դուք կատարեալ ամենայն սիրով և անձնուիրութեամբ զհանձնարարութիւնս մեր՝ որ վասն տպագրական թղթոց, զորոց զմի մասն ղրեալ նախքան զգրութիւնդ, ստացաք յաւուրս յայսոսիկ և որպէս գրէիք զմնացեալ զմի մասն ևս անշուշտ ստասցուք յետ այսր: Երկոքին մամուլքն կանխաւ խնդրեալք ի մէնջ ըստ հին տարազու պարտին լինիլ ի ձուլելոցն ի Լոնդոն և ոչ այլ ուրեք, առկախեալ տպչին (դիմպոն) յերկայնութիւն տասն և ութն մատն (վերշոկ), ի լայնութիւնն տասն և երեք մատն: Իսկ եթէ քան զայնոսիկ չափս մեծ գտանիցին, չիք արգելք ինչ այլ մի գուցէ լիցին նուազ: Նսան

զմի փոքրիկ մամուլ ձուլեալ անդ ի Լոնդոն յերկայնութիւնն տասն մատն, ի լայնութիւնն ութն, անշուշտ եմք զի զերեսեան մամուլսն ևս անշուշտ գնեալ հաճիք, ընդ փոյթ ի Լոնդոնէ և հասուցանել առ մեզ կարելին փութով, ըստ որում կարևորութիւն մեծ ունի նոցա տպարանն սրբոյ Աթոռոյս...: 1869 սեպտեմբեր 19, համար 242»[19]:

ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ
ՍԱՂՄՈՍ ԴԱՒԹԻ
ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ
ՏՕՆԱՑՈՅՑ
ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆ

Ա Ր Ա Ր Ա Տ
Ա Մ Ս Ա Գ Ի Ր
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Ժամակարգութիւն. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1862 թ. Արարատ ամսագիր. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1868 թ.

«Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի... Քրիստոսազօր և ազգասէր աղա Մկրտչի Սանասարեանց հարազատի Մայր սրբոյ Աթոռոյս քրիստոսական ողջոյն, հանդերձ հայրապետական օրհնութեամբ:

Շնորհակալու մտօք և հոգեպայծառ խնդութեամբ սրտի ընկալաք զհետևեալ գործիս, զոր մեծապատուութիւն Ձեր անօրինակ առատաձեռնութեամբ սրտի, առաքեալ է ի լրումն կարօտութեան բազմակարօտ տպարանի Մայր Աթոռոյս, նախ՝ զարագաձոյլ մեքենայ մի, երկրորդ՝ զմեքենայ մի, դարձեալ վասն ձուլելոյ փոքրադիր, երրորդ՝ զմեքենայ մի սակս յարդարելոյ գիծս վասն տպագրութեան, չորրորդ՝ զչորս տեսակ գիծս պղնձեայս, հինգերորդ՝ զմարգանս, վեցերորդ՝ զանազան բարեձև զարդս, թուանշանս և զայլ կարևոր գիծս ի պէտս տպագրութեան: Այսպիսի առատաձեռն նուէր բարեպաշտութեան Ձերոյ ոչ միայն յանչափս ուրախ առնէ զմեզ, այլև յայն միտս հաստատէ, զի դուք լիովին հասու եղեալ մերոյս նպատակի որ յաղագս բարեզարդութեան անշքացեալ վանուցս, կամիք եռանդնալից սիրով գործակից մեզ գտանիլ, յամենայն ձեռնարկս և թեթևացուցանել զբեռն հոգւոց մերոց, առատատուր նուիրատուութեամբք ձերովք յօգուտ տպարանիս, որ կարեմք ասել, գլխաւոր

տեղի է մերոյս խնամոց և հոգատարութեան: Ուրախ եմք այս, զի դուք քաջիկ ի միտ առեալ էք զբարձր նշանակութիւն Աթոռոյս իբրև գլխաւոր կեդրոնի լեզուի և կրօնի և տեսեալ ի վերջին աւուրս զրկեալ ի նախկին բարեվայելչութենէն ընդ մեզ ձգտիք ձեռնտու լինել նորոգ պայծառութեան նորին յապագային: Ապաքէն դուք այսպիսի սիրագործութեամբ ձերովք ի մոռացօնս արկանել տայք մեզ զանտարբեր վարչութիւն և յարաբերութիւն ոմանց, յանկանաւոր անձանց ազգիս ընդ վանս մեր և ընդ օգուտ նորին, ըստ որում զվնասելն իմիք նմին և զվատահամբաւելն առաւել ի ճահ համարին, իբր այն զի վիրօք զվէրս մարթ իցէր բժշկել:

Յայտնելով զլիաբերան շնորհակալութիւն մեր վասն գովանի ջանիցդ ի բարեզարդութիւն տպարանիս, խնդրեմք յԱստուծոյ զի յաւէտ հաստատուն պահեսցէ զՁեզ յայդպիսի աստուածաշնորհ զգացմունս ազգասիրութեան պահեսցէ ընդ երկայն աւուրս, զթել կենաց ձերոց յօգուտ ազգիս և ի հանդերձեալն զտասնապատիկ վարձս հատուցէ առաքինափայլ մեծապատուութեանդ, մնամք աղօթարար...: 1869 թ. սեպտ. 19 համար 245»[20]:

Գեորգ Դ կաթողիկոսը 1870 թվին արտասահմանից 19 արկղ թուղթ է ստանում Մայր Աթոռի տպարանի համար, որի համար և դիմում է անում Կովկասի կառավարությանը այդ թուղթը առանց մաքսի Մայր Աթոռին հանձնելու:

Գեորգ Դ-ն իր կաթողիկոսության առաջին օրերից մեծ ուշադրություն դարձնելով տպարանի և տպագրական գործի ծաղկման ու ընդարձակման՝ իբրև լուսավորության մի գործոն հաստատության վերա և արհամարհելով ու հաղթելով ամեն տեսակ դժվարությունների ու արգելքների, միևնույն ժամանակ հոգս է քաշում տպարանի ներքին վարչականն ևս բարեկարգել և ավելի հաստատուն հիմքերի վերա դնել, ուստի և տպարանի գործունեությունը կանոնավորելու համար այդ հաստատությունը բաժանում է վանական մյուս հաստատություններից, հատուկ մասնաժողով է նշանակում տպարանը կառավարելու համար, որի համար և հատուկ կանոնադրություն է կազմում և տալիս մասնաժողովին ի գործադրություն: Այս առթիվ 1870 թվի հունվարի 18-ին նա հետևյալ № 18 կոնդակն է տալիս Էջմիածնի Սինոդին.

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... Սինոդի սրբոյ Էջմիածնի ծանուցանեմք. Յօրէ անտի ամբառնալոյ մեր յԱթոռ Հայրապետական ըստ սեպուհ պարտաւորութեան մերում, ոչ զանց արարաք հոգալ նաև զբարեկարգութենէ տպարանի սրբոյ Աթոռոյս, ոյր վասն հրաւիրեցաք աստ զհմուտ արհեստաւորս գրաշարութեան, տպագրութեան, ձուլելոյ զանազան տառից և այլն: Եւ ըստ յորդորանաց մերոց եղեն նուիրատուք յազգէս կարևոր մեքենայից և վայելչագեղ մայր տառից ի պէտս տպագրութեան **Արարատ** ամսագրոյն և այլոց: Ուստի մեք կարևոր վարկանիմք այժմ հաստատել զտպագրական ժողով և յանձնել նմա զամենայն կառավարութիւնս տպարանի որպէսզի իւրաքանչիւր ոք յանդամոց այնր ժողովոյ, ըստ չափու կարողութեանց փոյթ կալցին խորհել զօգուտն և գործել և արդիւնաւորել զտպարանն ամենայն կարեւորօքն, ի վայելչական յարատևութիւն նորին և ի պանծալի բարեկարգութիւն, հրատարակութեամբք ազգօգուտ և հոգեշահ գրուածոց և ի լոյս ընծայելով զազգի ազգի պիտանի մատեանս, զմնացեալս ցայս վայր յանխնամակալութիւն և զդասական պիտանացու գրեանս վասն դպրոցաց: Եւ նշանակեցաք ի պէտս կազմութեան ժողովոյն անդամս զբարեջան Գրիգոր եպիսկոպոսն Մուշեղեանց, զՆերսէս վարդապետն Խուդավերդեանց, զԵսայի վարդապետն Կարապետեան, զսարկաւագ Գէորգ Սուրէնեանց, զուրարակիր Ստեփանն

Մանկունի (հետո Վահրամ եպիսկոպոս—Ա. Ե. Ս.) և զպարոն Յովհաննէսն Յովուեանց* պատուէր հրամանի տուեալ նոցա վարիլ հետևեալ կանոնօքս, զորս տամք ի հրահանգութիւն նոցին.


ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

1866 = ԻՑԱԼ

ԱԲՐԱՀԱՄ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՐԵՏԱՑԻՈՑ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՆՑԻՑՆ ԻՒՐՈՑ

ԵՒ

Նատր-Շահի

ՊԱՐՍԻՑ

1870

Աւետարան. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1866 թ.

Աբրահամ կաթողիկոս Կրետացի, Պատմագրութիւն. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1870 թ.

Ա. Նպատակ տպարանական ժողովոյն լիցի փոյթ տանել վասն բարեկարգ յառաջադիմութեան և օր քան զօր պայծառութեան տպարանին, ըստ նշանակութեան և յատկութեան նորին:

Բ. Ժողովն որոշեսցէ վասն իւրաքանչիւր անդամոց իւրոց զուրոյն ուրոյն զպարտաւորութիւնս գործունէութեանց ըստ անձն իւր ընդունակութեանցն և ի գումարմանն զդիտողութիւնսն արձանագրեսցին յօրագրութեան և ապա մերով գիտութեամբ ի կիր արկցին:

Գ. Ժողովն անխափան գումարեսցի երկիցս յօթնեկի յերեքշաբաթի և ի հինգշաբաթի աւուրս, և ի հարկաւորեալ դէպս երիցս և չորիցս ևս և յետ խորհելոյ զպիտոյից տպարանին և զտպագրութիւնն, պահանջել զանազան հաշիւ զգործոց վարպետի տպարանի և ամենայն գործավարացն և զեղելոցն խորհրդածութեանց և այլոց տնօրէնութեանց նախագահ ժողովոյն պարտաւորի տալ մեզ տեղեկութիւն:

Դ. Ժողովն պարտի ունիլ զժապաւինեալ և մերով կնքով կնքեալ մատեանս երկուս, յորոց մին լիցի մայր տումար գրել ի սմին հանգամանօրէն,

* Հաջորդ 1871 թվի մարտի 7-ի № 53 կոնդակով տպարանական ժողովի նոր անդամներ են նշանակվում Մեսրոպ վրդ. Սմբատյան, Գեորգ սրկ. Սուրենյանց և Ստեփան Մանկունի:

մի առ մի զամենայն գործիս, զմեքենայս և զպարագայս տպարանի և պահպանել մշտապէս առ ինքն, որոյ պատճէնն վաւերացեալ ստորագրութեամբ մերով մնասցէ ի գործս Սինոդի. իսկ ի միւսումն գրեսցին զմուտս և զծախս տպարանին և ի սկիզբն իւրաքանչիւր տարւոյ ներկայացուցեն մեզ ի նկատողութիւն:

Ե. **Արարատն** հրատարակի ընդ անմիջական հրամանաւ մերով, ուստի ն վասն պարունակելոցն ի նմա թէ ի ժողովոյն խմբագրելոցն և եթէ արտաքուստ եկելոցն և վասն ամենայն տպագրելիք թղթոց և մատենից ժողովն նախ պարտի ընդունել զմեր հաճութիւն և ապա տալ ի տպագրել:

Զ. Ժողովն ինքնին ունի հոգալ զծախս տպարանի ընդունելով զհարկաւորեալ քանակութիւն դրամոց ի գանձարանէ Աթոռոյս, հրամանաւ՝ Սինոդի, առ ի գործ դնել թէ վասն տպարանական ծախուց և թէ վասն տալոյ զթոշակս վարձաւորաց տպարանի, գրելով զծախսն ի հաշուետումարի վաւերական ձեռնագրութեամբ ստացողացն:

Է. Ժողովն պարտի յաճախ զննել զհաշուետումարս յորս նշանակեալ են **Արարատ** ամսագիրն և այլ մատեանք առաքեալք առ զանազան անձինս և ի պաշտօնական տեղիս ի վաճառումն, և վասն ստացման գնոց նոցին աչալրջութեամբ հսկել և չթողուլ երբեք ապառիկս ի դրամոց և ի հարկաւորեալ դէպս յայտնել Սինոդին, զի հրամանագրեսցէ առաջնորդական ատենից և հոգևոր կառավարութեանց, փոյթ ունել ի վճարումն դրամոցն և ըստ այսմ ի կարգի ունիցին զամենայն հաշուեպահութիւնս իւրեանց դրամոցն:

Ը. Ամենայն դրամաւոր եկամուտք տպարանին արժան համարիմք զի առաքեսցին ի Սինոդն սրբոյ Էջմիածնի և ի ձեռն նորա ի գանձարան Աթոռոյս, արձանագրելով անդ ի յատկացեալ տումարի. բայց և Սինոդն պարտի տալ զտեղեկութիւն տպարանական ժողովոյն զստացմանէն և զքանակութենէն դրամոցն, զի արձանագրեսցի ի մատենի եկամտից տպարանի:

Թ. Որպէս նշանակին և կարգին անդամքն ի գործակցութիւն այսր ժողովոյ հրամանաւ մերով, նոյնպէս, մի միայն մերով գիտութեամբ և հրամանաւ կարին արձակել ի կարևոր դէպս ի պաշտօնէ իւրեանց: Զայս ամենայն կանոնս առ ի մէջ հաստատեալս և զանուանս նշանակեալ անդամոց տպարանական ժողովոյն առաջարկելով ի գիտութիւն Սինոդիդ, պատուիրեմք ընդ փոյթ յայտնել ժողովոյն ի պարտուպատշաճն գործադրութիւն ըստ նպատակի կազմութեանս վասն յառաջադիմութեան առաւել ևս օգտաբեր լինելոյ տպարանիս ի պայծառութիւն անուան Մայր Աթոռոյս ս. Էջմիածնի»[21]:

Նույն թվի ամառը կաթողիկոսը Տփխիսումն էր: Այստեղ գնում է տպարանի համար հարկավոր իրեր, որոնց հետ և Եվրոպայից ստացված արագատիպ մեքենան ևս ուղարկում է Էջմիածին՝ տալով հունիսի 10-ին հետևյալ կոնդակը Մայր Աթոռի տպարանական ժողովին:

«Գէորգ ծառայ Յիսուսի-Քրիստոսի... տպարանական ժողովոյ սրբոյ Էջմիածնի հայրապետական ողջունիւ ծանուցանեմք. զխնդրեալն ի ձէնջ իրեղէնս վասն տպարանի մերոյ ասա՝ գնել տուեալ ընդ արագատիպ մեքենայի եկելոյ յԵւրոպայէ յառաջ քան զայս փուրգոնիւ առաքեցաք այդր և զմնացեալսն ստանաք ի ձեռն Ղազարու վարպետի տպարանի. ընդ սմին գա առ ձեզ և իտալացի ոմն վարպետ ասկս արագատիպ մեքենայի, որոյ կապակցագիրն և ցուցակն ամենից գնեալ իրաց գտանէք ի ծոց գրոյս:

Աւելորդ համարիմք աստանոր վերստին կրկնել ձեզ, զի ամենայն փոյթ և ջան ձեր ի գործ դնել պարտիք, վասն յառաջադիմութեան և պայծառու-

թեան տպարանի, հանդերձ խնայողութեամբ։ Ողջ լերուք։ 10 յունիսի 1870 ամի, համար 207, ի Տփխիս»[22]։

ՃԱՇՈՑ

ԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1872

Ճաշոց գիրք. Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1872 թ.

1869 թվի սեպտեմբերի 11-ին № 4116 գրությամբ Ներքին գործոց նախարար բարոն Աղեքսանդր Պուվլովիչը հայոց ընդհանրական կաթողիկոսների եկեղեցական և այլ ազգային հաստատությանց վերայ յուր ունեցած իրավունքների հարցն է բարձրացնում։ Այս խնդիրն առաջ էր եկել Ամստերդամի հայոց եկեղեցու իրավասության հարցի հետևանքով։

Գեորգ Դ կաթողիկոսն 1870 թվի հունվարի 20-ին № 5 կոնդակով ուղարկում է Ներքին գործոց նախարարին՝ ա) Տեղեկագիր զիրաւանցն պատ-



ՔԱՄԲՌ

ՀԱՅԱԲԱՐՈՒԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՅՈՑԻՆ

Ի ՍԻՄԷՈՆԷ ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ

ԵՐԵՒԱՆՑԻՈՅ

Ցամէ՛ն մերմարմնոյթեան ցեղոյն, հոգոյ եւ մարմնոյ վարուն եւ հինգ — 1765, ՌՉԿԵ — ։

Իսկ չոս Հայոցս բուսեանի, հոգոյ եւ մարմնոյ սուսն եւ յարս։

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՃԻԴ — 1873

Սիմէոն կաթողիկոս Երևանցի, Քամբռ, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1873 թ.

ռիարգ կաթուղիկոսաց Էջմիածնի հանդերձ պատմաբանական ծանօթութեամբք զհիմնարկութենէ եկեղեցւոյն Հայոց, Ամստերդամ. բ) Վեց կոնդակք ի Տէր հանգուցեալ կաթուղիկոսի Ամենայն Հայոց Տ. Ղուկասու և գ) Հաւատարմութիւն յանուն փաստաբան Վերտգեյմի:

(Շարունակելի)



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱ-ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ
«ԳԻՐՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ»*

Նամակի այս նախադասության մեջ մեր կողմից ընդգծված երկու բառերը ցույց են տալիս, որ Այգեկցու ուղարկած գիրքը կոչվում էր «Արմատ հաւատոյ», այլ խոսքով՝ «Արմատ հաւատոյ»-ն Վարդան Այգեկցու հեղինակությունն էր:

* * *

Առ այսօր երևան չի եկել «Արմատ հաւատոյ»-ի այն հեղինակային օրինակը, որից առաջացել են գոյություն ունեցող երկու խմբագրությունները:

Սկզբնական շրջանի ուսումնասիրողների՝ Մարտենի, Յորդանի և նրանց ուղեկցող մի քանի գիտնականների համար չէր էլ գոյություն ունեցել այդպիսի հարց: Նրանց համար Փարիզի № 85=153 ձեռագիր օրինակը, որի հետ նույն էր Էջմիածնի Մատենադարանի № 2080 օրինակը, համարվում էր միակը, ուստի և՝ հենց հեղինակային օրինակ:

Տեր-Մկրտչյանի մոտ՝ հեղինակային օրինակ էր համարվում Էջմիածնի Մատենադարանի № 512 ձեռագիր օրինակը, որը մեր հետազոտությունների արդյունքով հանդիսանում է ընդարձակ խմբագրության օրինակներից մեկը և ոչ թե հեղինակային օրինակ:

Թոմսոնը խոսք չի անում հեղինակային օրինակի մասին և դժվար է ասել, թե նա որպես այդպիսին է համարում Երուսաղեմի № 2331 ձեռագիրը, որն, ինչպես տեսանք, նրա կարծիքով՝ եղած օրինակների մեջ պիտի լինի բոլորից ընդարձակը:

Ի բացակայության «Արմատ հաւատոյ»-ի հեղինակային օրինակի՝ առաջանում է գոյություն ունեցող օրինակների հիման վրա այն վերականգնելու

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1972 թ. № Ը-ից:

հարց: Արդեն ասվեց, որ ընդարձակ խմբագրության բնագիրն, իր թերություններով հանդերձ, շատ մոտ է հեղինակային օրինակին և հիմնականում պահել է նրա կերպարանքը: Նա ունի ամբողջականության բոլոր հատկանիշները, միայն մնում է, որ ընդարձակ և համառոտ խմբագրություններին պատկանող բոլոր օրինակների համեմատական ուսումնասիրությամբ վերակառուցվի նրա բնագրական կազմը: Այդ ուղղությամբ մեր կատարած աշխատանքների հիման վրա այժմ ներկայացնում ենք «Արմատ հաւատոյ»-ի հետևյալ պատկերը, որի շրջանակներում կիրագործվի Վարդան Այգեկցու այս նշանավոր ու թանկարժեք ժողովածուի քննական բնագրի պատրաստումը:

Ինչ խոսք, որ «Արմատ հաւատոյ»-ի կառուցվածային հարցերն անկախ չեն նրա բնագրային հարցերից, ուստի և մեր ներկայացրած կառուցվածային պատկերն իր պատճառաբանումը կգտնի բնագրաքննական այն հետազոտությունների մեջ, որոնք վերապահվում են ուրիշ առիթի: Միայն ասենք, որ բնագրաքննական հետագա հետազոտությունները չեն խախտի «Արմատ հաւատոյ»-ի այս կառուցվածքը, թեև կարող են որոշ փոփոխությունների ենթարկվել կամ ճշգրտվել նշված վկայությունների հեղինակային անունները և կամ նրանց աղբյուրները[41]:

---

[41] Ի դեպ՝ հայտնենք, որ մեր «Վարդան Այգեկցին իր նորայայտ երկերի լույսի տակ» աշխատության մեջ, տակավին ձեռնամուխ եղած չլինելով աղբյուրների քննությանը, տվել ենք միայն վկայակոչված հեղինակների անվանացանկը՝ քաղելով ձեռագիր օրինակներից (էջ 33—34): Այդ ցանկում որոշ ճշտումներ, ի հարկե, կատարել ենք, և նույնիսկ մի քանի հիմնական ճշտումներ (օրինակ՝ **Ուիտալ Հռոմայեցի=Բիտալիոս Անտիոքացի, Ամոիկոս** կամ **Ամոիկոս=Ամփիլոքոս Իկոնացի**, և այլն), բայց մի շարք անուններ դեռ ենթակա են մնում ճշգրտման և կամ ուրիշ անուններով փոխարինման: Անհրաժեշտ ճշտումները հետզհետե կկատարվեն աղբյուրների քննության և բնագրաբանական հետազոտությունների ընթացքում:

ԳԻՐՔ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ

ԳԼՈՒԽ Ա.
ՍԱԿԱՒ ԲԱՆ ՄԵՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արդ ես ողորմելիս՝ Վարդան վարդապետս եւ նուաստացեալս ի գործառնութենէ բարեաց...: Եւ որ գրէ զսա եւ նորոգէ, աղաչեմ գրել եւ զսակաւ բանս յիշատակիս մերոյ, եւ որք լսեն մեզ եւ գրենն՝ գրեսցի անուն նոցա անջինջ առաջի Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Բ.
ԽԱՒՍՔ ԵՒ ՊԱՏՈՒԷՐ ԳՐՈՑՍ ԱՌ ԱՅՆՈՍԻԿ ՈՐՔ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԵՆ ՅԱՊԱԳԱՅՆ ԺԱՌԱՆԳԵԼ ԶՍԱ, ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԺԱՌԱՆԳՈՂԱՅՆ

Յանմատոյց լուսոյ կազմեալ են ճանապարհք իմ, եւ ճառագայթարձակ հրաբորբոք ջահիւ պայծառացեալ են նրբագոյն շաւիղք իմ...: Իսկ յօրն ահագին եւ յատեանն սարսափելի առաջի անաչար դատաւորին՝ դու պսակեսցես ոսկեճաճանչ եւ արեգակնափայլ լուսով քո զգլուխ իմ, ամէն:

ԳԼՈՒԽ Գ.
ՈՒՂԻՂ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ

Հաւատով խոստովանիմ զհամագոյ զամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի, անսկիզբն եւ անվախճան..., մի կամք եւ մի թագաւորութիւն եւ իշխանութիւն, մի մեծութիւն եւ պատիւ, մի ճոխութիւն եւ մի աստուածութիւն՝ փառաւորեալ անլռելի երեքսրբեան ձայնիւ ի հոգեղէն հրեղինացն եւ ի մարմնեղէն հողեղինացս այժմ եւ յանսպառ յաւիտեանս, ամէն:

ԳԼՈՒԽ Դ.
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ

Վկայութիւնք ի մարգարէութեանց
Վկայութիւնք յԱւետարանէն
Վկայութիւնք սուրբ առաքելոցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ
Դիոնեսիոսի Աթենացւոյ եպիսկոպոսի վկայութիւնք
Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի վկայութիւնք ընդդէմ Սամոսատացւոյն
Իգնատիոսի Անտիոքու եպիսկոպոսի որ եւ Աստուածազգեացն՝ ի թղթէն որ առ Պողիկարպոս
Նորին՝ յԵփեսացւոց թղթէն
Նորին՝ ի Զմիւռնոյ թղթէն
Նորին՝ ի թղթէն որ առ քաղաքն Փիլիպպեայ
Երանոսի հետեւողի առաքելոցն (Լուգդունոյ եպիսկոպոսի)
Գրիգորի Սքանչելագործի վկայութիւնք
Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք

Յուլեայ Հռոմայ հայրապետի վկայութիւնք ի թղթէն որ առ Դիոնեսիոս
Ուիտալայ Հռոմայ հայրապետի վկայութիւնք
Պետրոսի Հռոմայ հայրապետի վկայութիւնք
Փելիկեայ Հռոմայ հայրապետի վկայութիւնք
Ի հարցմանցն Կեղեստինոսի Հռոմայ հայրապետի եւ Բարսամայի Անտիոքայ եպիսկոպոսի
Ոնորայ Հռոմայ հայրապետի
Աթանասի Աղեքսանդրու հայրապետի՝ ի թղթէն որ առ Յոբիանոս թագաւորն
Նորին՝ ընդդէմ Ապողինարի
Նորին՝ ընդդէմ Սամոստացւոյն
Նորին՝ առ Դելփոս (Փիլադելփոս) եպիսկոպոս
Նորին՝ առ Եպիկտետոն Կորնթացւոց եպիսկոպոսն
Նորին՝ ընդդէմ Արիոսի
Նորին՝ ի Յայտնութեան ճառէն
Նորին՝ ի բանն Պետրոսի առաքելոյ

ԳԼՈՒԽ Ե.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ

(Շար.)

Աթանասի Աղեքսանդրու հայրապետի՝ ի խնդրոյ Եպիկտետոնի Կորընթացւոց եպիսկոպոսի
Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի՝ ի ժողովն Եփեսոսի ասացեալ ընդդէմ Նեստորի
Նորին՝ առ Ղեգէոս քահանայ
Նորին՝ ի թղթէն որ առ Թէոդոս թագաւորն
Նորին՝ ի Պարապմանց գրոց
Նորին՝ ի թղթէն որ առ Ակակ Մելետինոյ եպիսկոպոսն
Նորին՝ ի Գանձէն
Նորին՝ յԱւետարանին մեկնութենէն
Թէոփիլի Աղեքսանդրու հայրապետի՝ ի թզենւոյն ճառէն:
Տիմոթէի Աղեքսանդրու հայրապետի վկայութիւնք
Պետրոսի վկայի Աղեքսանդրու հայրապետի
Դիոսկորոսի Աղեքսանդրու հայրապետի ի Գանգրայ յաքսորանացն, ի գրոցն որ Սեկունդինան
Սրբոյն Աղեքսանդրի հայրապետի Աղեքսանդրու
Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին
Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին
Անտիոքայ երկրորդ ժողովոյն
Տիտոսի Անտիոքու հայրապետի
Երեքթեայ Անտիոքու Պիսիդայ հայրապետի
Սեւեռի Անտիոքու հայրապետի՝ ի Կաթողիկեայց մեկնչէն

ԳԼՈՒԽ Զ.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ

(Շար.)

Գրիգորի Աստուածաբանի՝ ի թղթէն որ առ Կլեդոնիոս
Նորին՝ յՈրդւոյ ճառէն
Նորին՝ ի Զատկին ճառէն
Նորին՝ ի բանէն զոր ասէ վասն գործոցն Քրիստոսի
Բարսղի՝ ընդդէմ երկաբնակացն վկայութիւնք
Նորին՝ ընդդէմ Ապողինարի
Գրիգորի Նիւսացւոյ՝ ի Բնութեանց գրոցն որ վասն հոգւոյ եւ մարմնոյ միաւորութեան
Նորին՝ ընդդէմ Եւնոմիոսի
Նորին՝ ի թղթէն որ առ Թէոփիլոս Աղեքսանդրու հայրապետն
Ի հարցմանցն Բարսղի եւ Գրիգորի
Եփրեմի՝ յԵրրորդութեան ճառէն
Նորին՝ յԱւետարանին մեկնութենէն
Նորին՝ ի հաւատոյ բանէն
Յովհաննու Ոսկեբերանի՝ ի ներբողական ճառէն որ յաւետիս սուրբ Կուսին, զոր ասաց ընդդէմ Արիանոսի
Նորին՝ ի ճառէն որ աղաւթէր Յիսուս ի լերինն
Նորին՝ ի Փիլիպպեցւոց թղթոյն մեկնութենէն
Պրոկղի Կոստանդնուպալսի հայրապետի՝ ի ներբողինէ Կուսին
Նորին՝ ընդդէմ Նեստորի
Նորին՝ ի ներբողինէն զոր ասաց յաւետարանիչն Ղուկաս
Ատտիկոսի Կոստանդնուպալսի եպիսկոպոսի
Մարութայ Նփրկերտոյ եպիսկոպոսի, որ է Մուփարկինն
Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի՝ ի ճառէն որ յաստղն եւ ի մոգսն
Նորին՝ ի Յարութեան ճառէն
Հիպպոդիտեայ եպիսկոպոսին
Թէոդորիտայ Անկիւրիոյ եպիսկոպոսի վկայութիւնք
Մելիտոնի եպիսկոպոսի՝ ի թղթէն որ առ Եւտրեպիոն
Զենոբայ եպիսկոպոսի
Ապլփեսի (Ապլփերոսի, Ապափինոսի) եպիսկոպոսի եւ մարտիրոսի
Փիլաքսոնի եպիսկոպոսի Արբոք քաղաքի
Փիլաքսոնի Անկառացւոյ

ԳԼՈՒԽ Է.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՂԱԳՍ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՅ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆՆ

(Շար.)

Եփրեմի՝ յԱւետարանին մեկնութենէն
Եպիփանու՝ յԸ. Սաղմոսին մեկնութենէն
Նորին՝ ի հաւատոյ բանէն
Նորին՝ ի ԺԵ. Սաղմոսի մեկնութենէն
Նորին՝ յԱկանց գրոց
Նորին՝ ի հաւատոյ բանէն
Յովհաննու Ոսկեբերանի՝ ի ներբողական ճառէն որ յաւետիս սուրբ Կուսին, զոր ասաց ընդդէմ Արիանոսի
Նորին՝ ի ճառէն որ աղաւթէր Յիսուս ի լերինն
Նորին՝ ի Փիլիպպեցւոց թղթոյն մեկնութենէն
Պրոկղի Կոստանդնուպալսի հայրապետի՝ ի ներբողինէ Կուսին
Նորին՝ ընդդէմ Նեստորի
Նորին՝ ի ներբողինէն զոր ասաց յաւետարանիչն Ղուկաս
Ատտիկոսի Կոստանդնուպալսի եպիսկոպոսի
Մարութայ Նփրկերտոյ եպիսկոպոսի, որ է Մուփարկինն
Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի՝ ի ճառէն որ յաստղն եւ ի մոգսն
Նորին՝ ի Յարութեան ճառէն
Հիպպոդիտեայ եպիսկոպոսին
Թէոդորիտայ Անկիւրիոյ եպիսկոպոսի վկայութիւնք
Մելիտոնի եպիսկոպոսի՝ ի թղթէն որ առ Եւտրեպիոն
Զենոբայ եպիսկոպոսի
Ապլփեսի (Ապլփերոսի, Ապափինոսի) եպիսկոպոսի եւ մարտիրոսի
Փիլաքսոնի եպիսկոպոսի Արբոք քաղաքի
Փիլաքսոնի Անկառացւոյ

Ամփիլոքսոնի եպիսկոպոսի Իկոնացւոյ
Սեբերիանոսի եպիսկոպոսի Գաբաղացւոյ
Ակակայ Մելետինոյ եպիսկոպոսի
Իսիդորոսի Ելիսոյտացւոյ ի Ռ. թղթոցն
Ապղեայ Քերսոնի եպիսկոպոսի
Յովսեփայ Արձնոյ եպիսկոպոսի
Թէոփոնի եպիսկոպոսի Եթովպացւոյ
Մեծին Եղիսառոնի՝ ի բանէն որ ասէ. Դատաստանք Տեառն անդունդք բազումք
Պանփիլեայ՝ յառ Սկիւթացին ճառէն
Ի թղթէն Առիստիդայ փիլիսոփայի որ առ Մենանդրոս փիլիսոփայ
Ի թղթէն Պոենպոսի եպիսկոպոսի Կորնթոսի, որ ընդդէմ Սամոստացւոյն թղթոցն
Դակեղայ (Դահեղայ) Եդեսայ եպիսկոպոսի
Մեթոդի եպիսկոպոսի եւ մարտիրոսի՝ ի Համբարձման ճառէն
Շմաւոնի եպիսկոպոսի
Եգէասի մեծ վկային Քրիստոսի
Մեծին Տեղէայրենոսի
Որոգինէի
Ամոլիքոսի Իկոնացւոյ
Եւսեբէ Մուսոյ եպիսկոպոսի
Կիպրիանոսի եպիսկոպոսի եւ վկայի Քրիստոսի
Երանելւոյն Յովհաննու
Վասն ժողովոյն Քաղկեդոնի
Ի չորեքտասան թղթոցն Ակակայ Կոստանդնուպալսի հայրապետի եւ Պետրոսի Աղեքսանդրու հայրապետի, զոր յետ ժողովոյն Քաղկեդոնի գրեցին առ միմեանս
Վասն Սիմէոնի Սիւնակեցին որ յԱնտիոք
Ի հաւատոյ թղթէն Անաստասայ թագաւորին որ յետ ժողովոյն Քաղկեդոնի
Ի հաւատոյ թղթէն Զենոնի թագաւորին որ յետ ժողովոյն Քաղկեդոնի

Եւ արդ հաւաքեցաք յոլով վկայութիւնս յամենայն ազգաց լուսաւորչացն բանից որք հաւատոյ սիւնք էին, որպէս եւ ի սկզբան գրոցս ասացաք։

Դարձեալ եկ, ո՞վ սիրելի, եւ որպէս նախ խոստացաք, հաւաքեսցուք բազում վկայութիւնս եւ ի մերոց Հայաստանեայց աստուածաբնակ հայրապետացն եւ ի սրբազան հոգիընկալ վարդապետացն բանից, որք մաքրափայլ եւ գերիմաստ բանիւ արեգակնանման շահաբորբոք լուսով հաւատոյ, ուղիղ դաւանութեամբ շարադրեցին ճառս բազումս ի մարդեղութիւն Բանին Աստուծոյ ընդդէմ ամենայն հերձուածողացն։ Եւ արդ սկիզբն արասցուք կամաւք Տեառն ուստի արժան է սկսանել՝ ի հարէն եւ ի լուսաւորչէն մերմէ սրբոյն Գրիգորէ աստուածազգեցէ։

Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի վկայութիւնք
Ի հաւատոյ թղթէն Սահակայ եւ Մաշտոցի զոր գրերցին առ Պրոկղ հայրապետ
Ի հաւատոյ ճառէն Դաւթի Հայոց փիլիսոփայի
Ի հաւատոյ ճառէն Մովսէսի Հայոց քերթողահարն

Ի մեծափառ հաւատոյ գրոցն Անանիայի Հայոց վարդապետի
Գրիգորի Նարեկացւոյ Հայոց վարդապետի
Պետրոսի Հայոց քերթողի
Պաւղոսի Հայոց վարդապետի
Ի հաւատոյ թղթէն Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի
Խոստովանութիւն Մանազկերտոյ ժողովոյն
Ի գրոցն որ Կրաւնաւոր կոչի ընդդէմ Նեստորի
Ի հաւատոյ թղթէն Մաթուսա[ղա]յի Սիւնեաց եպիսկոպոսի զոր գրեաց հրամանաւ Եզրի Հայոց կաթողիկոսի եւ այլ եպիսկոպոսացն՝ առ Հերակլ արքայն Յունաց
Ի հաւատոյ թղթէն Սամուէլի Հայոց կաթողիկոսի զոր գրեաց պատասխանի Թէոդորոսի Մելիտենոյ պատրիարքի
Ի հաւատոյ թղթէն Սամուէլի Հայոց վարդապետի զոր գրեաց ընդդէմ երկաբնակացն ի խնդրոյ իշխանին որ մականուն Ոսկեձեռն կոչիւր
Ի հաւատոյ թղթէն Տիրանոյ (Տիրաննոյ) Հայոց վարդապետի զոր գրեաց առ Սինաքերեմ
Ի հաւատոյ թղթէն Սահակայ Հայոց վարդապետի որ առ Փոտ
Ի հաւատոյ թղթէն Խոսրովու Հայոց հոռետորի
Եղիշէի Հայոց վարդապետի
Ի հաւատոյ թղթէն Յեսուայ Խորխոռունեաց եպիսկոպոսի
Ի հաւատոյ բանէն Դրլնայ ժողովոյն
Ի հաւատոյ թղթէն միջնոյ Ներսէսի Հայոց կաթողիկոսի զոր գրեաց ի խնդրոյ Մուշեղայ Բագրատունւոյ
Ի հաւատոյ թղթէն Յովհաննու Հայոց կաթողիկոսի
Ի հաւատոյ թղթէն Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի եւ Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի
Ի հաւատոյ թղթէն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի որ առ Գերմանոս
Նորին՝ յերկրորդ թղթէն զոր գրեաց վասն հաւատոյ, պատասխանի թղթոյն Անտիոքայ պատրիարքին
Ի հաւատոյ թղթէն Աբրահամու եպիսկոպոսի
Ի թղթէն Եզնկայ որ առ Մաշտոց
Այլ հաւաքումն բանից՝ ի Հայոց վարդապետաց
Ներսէսի վերջնոյ իմաստասիրի Հայոց կաթողիկոսի

ԳԼՈՒԽ Ը.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՆՈՅՆ ՈՐՔ ԱՊԱԿԱՆԱՅՈՒ ԱՍԱՑԻՆ ԶԱՆԱՊԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԱՆԳՈՍՆԵԼԻ ԿԻՐՔ ԵՏՈՒՆ ՆՄԱ ՈՐ Է ԿԵՐԱԿՐՈՅ ԵՒ ԸՄՊԵԼԵԱՅ ԱԽՏԱԲԱՐ ՀՈՍՈՒՄՆ

Երանոսի հետեւողի առաքելոցն որ աշակերտ էր Յովհաննու աւետարանչին
Աթանասի եպիսկոպոսի
Պետրոսի Հռոմայ հայրապետի
Անտիոքու երկրորդ ժողովոյն
Գրիգորի Աստուածաբանի՝ ի զատուցեալ ճառէն
Բարսղի

Յովհաննու Ոսկեբերանի՝ ի ճառէն որ վասն թլփատութեան տեառն եւ քառասնաւրեայ գալստեանն ի տաճարն

Պրոկղի Կոստանդնուպալսի եպիսկոպոսի

Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի՝ ի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն

Նորին՝ ի Ղեւտականէն

Ապողինարի՝ յՂեւտականէն

Եպիփանու Կիպրոսի եպիսկոպոսի

Եփրեմի ծառայի Աստուծոյ

Փիլաքսոնի եպիսկոպոսի Արբոք քաղաքի

Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի

Ի հաւատոյ թղթէն Հայոց զոր գրեցին միաբան առ Թէոդոս թագաւորն

Ի հաւատոյ թղթէն Միայէլի (Միսայէլի) եպիսկոպոսի զոր գրեաց պատասխանի հարցմանց քաղկեդոնականացն

Անանիայի Հայոց վարդապետի

Ներսիսի վերջնոյ Հայոց կաթողիկոսի

Եւ ես ողորմելիս Վարդան որ հաւաքեցի զայս աստուածային եւ լուսափայլ մարգարիտս հաւատոյ մեծաւ ցանկութեամբ յուսոյ եւ սիրոյ, հետեւելով աստուածազան եւ բարեփառ հարցն ուղիղ դաւանութեան՝

Հաւատով խոստովանիմ անթերի մտաւք զհամագոյ եւ զամենասուրբ Երրորդութիւնն անբաժանելի, յամենայնի կատարեալ ... վասն արդարակորով դատաստանին եւ իրաւանցն զոր առնէ, որ է աւրհնեալ այժմ եւ յանսպառ յաւիտեանսն որ գալոց է:

Արդ մեծաւ հոգաբարձութեամբ եւ ըղձալի սիրով հաւատոյ արարաք հաւաքումն բազում բանից ... ընդդէմ նոցա, որք ապականացու ասացին զանապական մարմին Աստուծոյ Բանին, եւ անգոսնելի կիրք ետուն նմա:

ԳԼՈՒԽ Թ.

ԱՅԼ ԼՈՒԾՄՈՒՆՔ Ի ՄԵԿՆՉԱՑՆ

— Վասն աւուրն այնորիկ ոչ ոք գիտէ ...
— Ոչ է իմ տալ, այլ որոց տուեալ է ...
— Հայր իմ մեծ է քան զիս ...
— Հայր, եթէ հնար է՝ անցցէ բաժակս ...
— Ոչ է իմ կամքս, այլ քոյդ ...
— Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս ...
— Որ յաւուրս մարմնոյ իւրոյ աղաւթէր առ այն ...

Եւ արդ՝ հաւաքեցաք յոլով վկայութիւնս յամենայն ազգաց լուսաւորչացն բանից, որք հաւատոյ սիւնք էին որպէս եւ ի սկզբան գրոյս ասացաք:

Դարձեալ ե՛կ բաղձալի եւ բե՛ր ի միտս քո, զի խնամակալութեամբ Հոգւոյն Աստուծոյ հաւաքեսցուք եւ այլ վկայութիւնս, որ կարի եւս պիտանացու է մերս եկեղեցւոյ կարգաց եւ աւրինաց, որք են խորհրդածութիւնք հաւատոյ յամենայն ազգաց սուրբ առաջնորդաց եւ ի մերոց Հայաստանեայց ...:

Եւ արդ՝ սկիզբն արասցուք ուստի սկսանել արժան է: Նախ վասն

ծննդեանն Տեառն եւ մկրտութեանն, եւ վասն սուրբ պատարագին, եւ Խաչեցարին, եւ զելի, եւ մատաղի զատկի եւ ննջեցելոց, եւ վասն գառինն՝ զի եկեր Տէրն յերեկոյին հինգշաբաթին, վասն աղի:

ԳԼՈՒԽ Ժ.
ՎԱՍՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ, ԶԻ ԵՐԵԿՈՒՆՆ ՊԱՐՏ Է ՈՒՏԵԼ

Կիւրղի՝ ի Պարապմանց գրոց, ի Թէոդոսի թղթէն, զի պարտ է ուտել երեկունն ճրագալուցին

ԳԼՈՒԽ ԺԱ.
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՎԱՍՆ ԾՆՆԴԵԱՆՆ ՏԵԱՌՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆՆ, ԶԻ ՊԱՐՏ Է Ի ՄԻՈՒՄ ԱՒՈՒՐ ՏԱՒՆԵԼ Ի ՎԵՑՆ ՅՈՒՆՈՒԱՐԻ

Ի Կղեմայ՝ յառաքելասահման կանոնացն
Պողիկարպոսի եպիսկոպոսի՝ զոր լուաւ ի Յովհաննէ
Մակարայ Երուսաղէմի հայրապետի
Յովհաննու Երուսաղէմի հայրապետի
Նեքտառեայ Հռոմայ հայրապետի
Գրիգորի Աստուածաբանի
Բարսղի
Հիպպոդիտեայ եպիսկոպոսի
Սեբերիանոսի եպիսկոպոսի՝ ի Ղուկասու Աւետարանին մեկնութենէն
Ի թղթէն Մելիտոնի եպիսկոպոսի որ առ Եւտրեպիոն
Կիպրիանոսի եպիսկոպոսի
Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի
Ի Կարնոյ կանոնացն որ եդաւ հրամանաւ Յուստիանոսի արքային
Վասն Արտեմոնի
Ի թղթէն Գրիգորի Արծրունեաց եպիսկոպոսի զոր գրեաց յԵրուսաղէմայ ի Հայք
Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի
Ի հարցմանցն Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի եւ պատրիարքին
Ի հաւատոյ թղթէն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի զոր գրեաց պատասխանի թղթոյն Անտիոքայ պատրիարքին
Ի գրոցն որ կոչի Կրաւնաւոր
Անանիայի Հայոց վարդապետի
Ի հաւատոյ թղթէն Ներսէսի Հայոց կաթողիկոսի որ առ Մանիլ թագաւորն

ԳԼՈՒԽ ԺԲ.
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՌԷՄ ՆՈՑԱ ՈՐՔ ԱՍԵՆ ԹԷ ՏԷՐՆ ՄԵՐ ԶԳԱՌՆ ՈՉ ԵԿԵՐ ՅԵՐԵԿՈՅԻՆ ՀԻՆԳՇԱԲԱԹԻՆ

Յովհաննու Ոսկեբերանի՝ յԱւետարանին մեկնութենէն
Նորին՝ այլուստ
Զենոբայ եպիսկոպոսի
Մարութայի Նփրկերտոյ եպիսկոպոսի
Ներսիսի [վերջնոյ, Հայոց կաթողիկոսի]

ԳԼՈՒԽ ԺԳ.
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԶԻ ՊԱՐՏ Է ԶՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳՆ ԱՆԽՄՈՐ ԵՒ ԱՆԶՈՒՐ ՄԱՏՈՒՑԱՆԵԼ, ԱՆԱՂ ԵՒ ԱՆՁԷԹ

Թադէոսի առաքելոյ
Մակարայ Երուսաղէմայ հայրապետի
Գրիգորի Աստուածաբանի
Ի չորրորդ գրոցն Լեւոնի Հռոմայ հայրապետի
Եփրեմի եւ Զենոբայ
Ամոիկոսի եպիսկոպոսի
Կիպրիանոսի եպիսկոպոսի՝ յՈղորմութեան ճառէն
Կիւրղի՝ ի Պարապմանց գրոց
Նորին՝ ի Ղեւտականէն
Ի հարցմանցն Կեղեստինոսի Հռոմայ հայրապետի եւ Բարսամայի Անտիոքայ եպիսկոպոսի
Ի Կարնոյ կանոնացն որ եղաւ հրամանաւ Յուստինոսի
Ի գրոցն որ կոչի Կրաւնաւոր
Յովհաննու Ոսկեբերանի
Յովհաննու իմաստասիրի Հայոց կաթողիկոսի
Ի հաւատոյ թղթէն տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի որ առ Յովհաննէս պատրիարքն Ասորւոց
Ի հարցմանցն Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի եւ պատրիարքին
Ի հաւատոյ թղթէն Տիրանոյ (Տիրաննոյ) Հայոց վարդապետի
Ի հաւատոյ թղթէն Խոսրովու Հայոց հոետորի
Ի հաւատոյ թղթէն Ներսէսի որ առ Մանիլն

ԳԼՈՒԽ ԺԴ.
ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԶԻ ՊԱՐՏ Է ԶԽԱՉԵՑԱՐՆ ԱՍԵԼ ՅԱՄԵՆԱՅՆ ԱՒՈՒՐ Ի ԴԷՄՍ ՈՐԴՒՈՅ

Մանուէլի եպիսկոպոսի՝ վասն տաւնի սուրբ խաչին
Նեքտառեայ Հռոմայ հայրապետին
Բան ի գրոցն Սոկրատայ
Նորին Իգնատիոսի որ եւ Աստուածազգեացն
Կղեմայ Հռոմայ հայրապետի
Ի գրոցն Աւրեղիանոսի Հռոմայ հայրապետին որ Կանոնաց լրմունք կոչի
Ի գրոցն Որոգինէի որ Զատկաց կոչի
Իսիդորոսի Ելիստացւոյ՝ ի Ռ. թղթոցն
Գրիգորի Աստուածաբանի
Մեծին Բարսղի
Եպիփանու Կիպրացւոյ
Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի
Յովհաննու Ոսկեբերանի՝ ի յԵսայուն մեկնութենէն
Դաւթի Հայոց փիլիսոփայի
Ի հաւատոյ բանէն Դրւնայ ժողովոյն
Ի հաւատոյ թղթէն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի զոր գրեաց պատասխանի Անտիոքայ պատրիարքին

Ի հաւատոյ թղթէն Ներսէսի միջնոյ Հայոց կաթողիկոսի

Ի հարցմանցն Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի եւ պատրիարքին

Ի հաւատոյ թղթէն Խոսրովու Հայոց հոետորի

Ի հաւատոյ թղթէն տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի որ առ պատրիարքն Ասորւոց Յովհաննէս

Ի հաւատոյ թղթէն Ներսէսի վերջնոյ Հայոց կաթողիկոսի որ առ Մանիլ թագաւորն

ԳԼՈՒԽ ԺԵ.

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ՅԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ ՎԱՍՆ ՈՒՐԲԱԹԱԶԵԼԻ ԶԻ ՍՈՒՏ Է ՅԱՄԵՆԱՅՆԻ

Ի հաւատոյ թղթէն տեառն Գէորգայ Հայոց կաթողիկոսի որ առ պատրիարքն Ասորւոց Յովհաննէս վասն ուրբաթազելի զի սուտ է

Սեւեռի՝ յԱրարածոց

Բարսղի՝ յԱրարածոց

Որոգինէ

Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի

Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի

Յովհաննու Ոսկեբերանի՝ յԱրարածոց

ՅԱրիստոտէլէն վկայ բանիս

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՎԱՍՆ ՁԱՏԿԻ ՄԱՏԱՂԻ, ԶԻ ԲԱՐԻ Է ԵՒ ՉԷ ԽՈՏԱՆ

ՅԱռաքելական երկրորդ կանոնացն զոր գրեաց Կղեմ ամենայն հեթանոսաց

Ի Նիկիայ երկրորդ կանոնացն, ընդդէմ նոցա որ խոտեն զագապս որ է մատաղ ննջեցելոց

Ի Գանգրայ կանոնացն

Ի Բարսղի կանոնացն

Սահակայ Պարթեւի

Հարցումն Աշոտոյ իշխանին վասն մատաղի: Ասէ Սահակ վարդապետն Հայոց

Վասն աղի աւրհնութեան: Յոստոսի երրորդ եղելոյն եպիսկոպոս յԵրուսաղէմ զկնի Յակոբայ եւ Շմաւոնի

Խոստովանութիւն մեղաց եւ խայտառակութիւն անձին ինքնայաւժար կամաւք եղկելոյս Վարդանայ, եւ որ ասէ՝ յիւր կողմն լսէ Աստուած.

Սկիզբ՝

Ո՞վ դուք ընտրեալք եւ պիտանիք,
Հարք եւ եղբարք իմ եւ որդիք...

Վերջ՝

Որք զԱստուած Բանըն միշտ աւրհնեմք,
Զքեզ ընդ նըմին փառաւորեմք:

Եւ է սա երկոտասան գիրք գրեալ եւ փոխեալ յառաջին աւրինակէն ձեռամբ մեղապարտիս Վարդանայ, եւ առաքեալ պսակ ուղղափառ հաւատոյ

եկեղեցւոյ Հայաստանեայց որպէս եւ այլքն որ յառաջ քան զսա, թողեալ յիշատակ բարի մեզ եւ ծնաւղաց եւ եղբարց մերոց, եւ ազգի մերոյ: Եւ արդ՝ առ ոտս ամենեցուն անկեալ պաղատիմ աղերսանաւք եւ աղաչեմ, արարէք յիշելոյ արժանի զմեզ զամենեսեան, եւ խնդրեցէք թողութիւն մեղաց մերոց յողորմածէն Յիսուսէ Քրիստոսէ Աստուծոյ մերմէ, զի թերեւս ապրեցուք յանընպատ տանջանացն, որ եւ զձեզ փրկեսցէ Աստուած ի մահուանէ, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Եւ գրեցաւ սա ի Պարվաւան, ի ՈԾԸ մերոյ թուիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սրբոյ Նշանիս, յառաջնորդութեան տեառն Մանուէլի սրբազանեալ եպիսկոպոսի:

Այս ինչ է կարգեալ յայս աստուածաբնակ տաս.

Ա. Սակաւ բան մեր յիշատակին:

Բ. Եւ պատուէր գրոցս առ ժառանգաւոս իւր:

Գ. Եւ ուղիղ դաւանութիւն սուրբ Երրորդութեան:

Դ. Եւ բազում վկայութիւնք ընդդէմ երկաբնակացն:

Ե. Եւ բանն զոր ասէ սուրբն Աթանաս թէ՝ Ո՞ր դժոխք զգայուեցան ասել մի բնութիւն Բանին Հաւր, եւ մարմնոյն որ ի Մարիամայ:

Զ. Եւ զոր Աստուածաբանն ասէ թէ՝ Բնութիւնք երկուք:

Է. Եւ զոր Եփրեմ ասէ. Թող լիք զնա չարչարել, եւ թէ ի մահու անդ ոչ էր նա ընդ նմա:

Քանզի յայս երեք բանս զոր այս երեք սուրբքս ասեն, բազումք տկարանան եւ զուղիղն ոչ կարեն իմանալ: Իսկ դու գտցես զսոսա պարզս մեկնեալս յիւրաքանչիւր կարգն շնորհաւքն Աստուծոյ, որով իմանաս զճշմարտութիւնն եւ յամաւթ առնես զանոպայսն որք անմիտք են:

Ը. Եւ ընդդէմ նոցա յոլով վկայութիւնք, որք ապականացու ասացին զանապական մարմին տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ անգոսնելի կիրք ետուն նմա այսինքն կարակրոց եւ ըմպելեաց ախտաբար հոտումն: Արդարեւ վայ է նոցա:

Թ. Եւ վասն դժուարալուր բաներու. Ո՛չ է իմ տալ, եւ Անցո՛ զբաժակս, եւ որք այսպիսիք են:

Ժ. Եւ վասն ճրագալուցին, զի երեկունն պարտ է ուտել:

ԺԱ. Եւ վասն զի պարտ է ի վեցն յունուարի տաւնել ի միում աւուր զծնունդն տեառն եւ զմկրտութիւնն:

ԺԲ. Եւ զի եկեր Տէր զգառն յերեկոյին հինգշաբաթին:

ԺԳ. Եւ զի պարտ է զպատարագն անխմոր եւ անջուր մատուցանել:

ԺԴ. Եւ զի պարտ է ասել զԽաչեցարն յամենայն աւուր ի դէմս Որդւոյ:

ԺԵ. Եւ զի սուտ է որ ուրբաթ զել առնէ:

ԺԶ. Եւ զի բարի է զատկի մատաղ եւ այլ մատաղ զոր առնեն, եւ աղն զոր աւրհնեն եւ տան անասնոց:

Զայսոսիկ գտցես եդեալ վկայութեամբ բազմաւ ամրացեալ, որով խնուս զբերանս հակառակողաց:

Արդ է սա գանձարան Աստուծոյ կենդանւոյ լցեալ անբաւ եւ անճառ լուսափայլ հաւատոյ մարգարտով: ...Սա է որ տեսանել տայ մեզ զԱստուած, եւ շրջել համարձակ եւ անամաւթ յահագին ատենին, եւ աւրհնեալ է Քրիստոս դատաւորն արդար:



ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ո՞Վ Է ՍԿԵՎՌԱՅԻ 1293 Թ. ՄԱՍՆԱՏՈՒՓԻ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Շուրջ մեկուկես դար է, ինչ մասնագետների ուշադրության առարկա է հանդիսանում 1293 թվականին Սկևռայում կերտված արծաթյա դրվագազարդ և բարձրարվեստ մասնատուփը: Նրանով զբաղվել են Ա. Փափազյանը[1], Ա. Կարիերը[2], հ. Ղ. Ալիշանը[3], Ս. Տ.—Ներսիսյանը[4] և շատ ուրիշներ: Վերջերս նշված տուփի ուսումնասիրությամբ զբաղվում է ռուս արվեստագետ Ս. Յա. Կակովկինը[5]: Բոլոր հետազոտողներն էլ շատ բարձր են գնահատում Սկևռայի մասնատուփի գեղարվեստական արժանիքները, ուստի և հետաքրքրությունը նրա նկատմամբ գնալով մեծանում է: Ինչպես կտեսնենք ստորև, փաստերը երևան են հանում այդ տուփի հետ կապված նաև պատմական խիստ ուշագրավ իրողություններ՝ էլ ավելի մեծացնելով նրա նշանակությունը՝ հայ ժողովրդի և նրա մշակույթի պատմության առումով:

Սկևռայի մասնատուփին վերաբերող շատ հարցեր արդեն գտել են իրենց ճիշտ մեկնաբանությունները, իսկ շատ հարցեր էլ սպասում են քննության: Ս. Յա. Կակովկինի վերոհիշյալ հետազոտությունների մեջ բարձրացված են նորանոր հարցեր, որոնցից մեկն է այդ տուփի պատվիրատուի ով լինելու հարցը: Տուփի վրա նա 1293 թվականին իրեն հիշել է որպես Սկևռայի առաջնորդ Կոստանդին եպիսկոպոս: Այդ տուփով առաջին անգամ զբաղվող (և այն փաստորեն հայտնաբերող) Ա. Փափազյանը սկզբում նրան հենց այդպես էլ ճանաչել է: Հետագայում, սակայն, Ա. Կարիերը, հ. Ղ. Ալիշանը և ուրիշներ նրան նույնացրել են կաթողիկոս Կոստանդին Կատուկեցու հետ: Ս. Տ.-Ներսիսյանը նախ պաշտպանել է այս վերջին տեսակետը, ապա՝ առաջինը: Խնդրի քննությանն անհամեմատ հետևողական մոտեցում է ցուցաբերում Ս. Յա. Կակովկինը, գտնելով, որ տուփի պատվիրատուն ոչ մի կապ չունի կաթողիկոսի հետ: Նրան էլ սակայն պակասում են Կոստանդին եպիսկոպոսի կենսագրությանը վերաբերող փաստեր: Իր վերջին հոդվածում, խոսելով **կրկին անգամ 1293 թ. մասնատուփի մասին,** նա գրում է. «Դժբախտաբար Կոստանդին եպիսկոպոսի վերաբերյալ առայժմ մեզ ոչինչ հայտնի չէ»[6]: Այս հայտարարությունը փաստորեն ոչ միայն Ա. Յա. Կակովկինի, այլև

---

[1] *Պարկանգիր առ Գենուացիս.* Originale armeno del privilegio accorda to ai Genovesi da Leone III ... *Վենետիկ, 1830.*

[2] „Mélanges orientaux", Paris, *1883, էջ 169—213.*

[3] **Հ. Ղ. Ալիշան,** Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 107—112:

[4] „Revue des Études Arméniennes", I, Paris, 1964, *էջ 121—134, 143—147.*

[5] „Византийский временник", XXX, 1969, *էջ 195—204; Տե՛ս նաև «Լրաբեր», Երևան, 1971, № 11, էջ 84—88, 1972, № 6, էջ 77—84.*

[6] Անդ, էջ 81:

ուրիշների եզրակացությունն է, եթե հաշվի չառնենք Կոստանդին կաթողիկոսի հետ կապված թյուրիմացությունները:

Մեր որոնումներից պարզվում է, որ վերոհիշյալ մասնագետների ուշադրությունից վրիպել են մեզ հետաքրքրող Կոստանդին եպիսկոպոսի պատվերով գրված և մեր ժամանակները հասած չորս ձեռագրեր, որոնց մեջ պահպանված են ուշագրավ տեղեկություններ Կոստանդին եպիսկոպոսի մասին: Այդ ձեռագրերն են.

Ա. «Ճաշոց», ընդօրինակված 1299 թ., այժմ գտնվում է Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի մատենադարանում (№ 454)[7]:

Բ. «Յայսմաւուրք», ընդօրինակված 1311 թ., այժմ գտնվում է Կիպրոսում (Նիկոզիայի հայոց առաջնորդարան, № 9)[8]:

Գ. «Մաշտոց», ընդօրինակված 1314 թ., այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 2787)[9]:

Դ. «Հին կտակարան» (մասունք), ընդօրինակված 1314 թ., գտնվելիս է եղել Կտուց անապատում. այժմ համարվում է կորած[10]:

Իր հերթին նշված ձեռագրերի նկարագրությամբ և նրանց հիշատակարանների հրատարակությամբ զբաղված հեղինակների ուշադրությունից բոլորովին դուրս է գտնվել այդ ձեռագրերի պատվիրատու և Սկևռայի մասնատուփի պատվիրատու Կոստանդին եպիսկոպոսների առնչության և նույնության հարցը:

Ս. Տ.-Ներսիսյանի, Ա. Յա. Կակովկինի և ուրիշների տեսադաշտից վրիպել են նաև մի քանի ուսումնասիրություններ, առանձին դիտողություններ, որոնցից ուշագրավ է, օրինակ, Ն. Ակինյանի մի հոդվածաշարը՝ նվիրված 1287—1289, 1307—1326, 1372—1380 թվականներին Կիլիկիայում պաշտոնավարած չորս Կոստանդին կաթողիկոսներին[11]: Այդտեղ նա, հավելվածի կարգով, անդրադառնում է նաև երկու համանուն եպիսկոպոսների, որոնցից մեկին նույնացնում է Սկևռայի մասնատուփի պատվիրատուի հետ: Նա նույնիսկ անհարկի է համարում հերքել նրան՝ Կոստանդին եպիսկոպոսի հետ նույնացնելու փորձերը: Եվ նա իրավացի է, որովհետև ծանոթ է եղել վերևում հիշված չորս ձեռագրերից 2-ին (1, 2): Վերջիններիս օգնությամբ Ն. Ակինյանին հաջողվում է պարզել Սկևռայի մասնատուփի պատվիրատու Կոստանդինի մականունը (Պեհեսանեցի) և հարազատների անունները: Այդուամենայնիվ, Ն. Ակինյանն էլ իր հերթին է խճողում խնդիրը՝ այդ Կոստանդինին, առանց հիմքի, նույնացնելով մերթ բանաստեղծ Կոստանդին Սրիկի, մերթ «Մարանդունեաց» գավառի համանուն եպիսկոպոսի, մերթ էլ ուրիշի հետ:

Հետագայում քննվող հարցին թեթևակի անդրադարձել է Հ. Ոսկյանը[12]: Չնայած նա ձեռքի տակ ունեցել է Ն. Ակինյանի հոդվածաշարը, սակայն նորից է Կոստանդին եպիսկոպոսին շփոթում Կոստանդին կաթողիկոսի հետ, վերջինիս էլ երբեմն կոչելով Պեհեսանեցի, որը միանգամայն սխալ է:

Ինչպես տեսնում ենք, Կոստանդին եպիսկոպոսի ով լինելու խնդիրը փաստորեն ավելի է խճողված, քան ներկայացվում է վերջին տարիներում տպագրված հոդվածներում:

Քննելով մեզ հայտնի բոլոր փաստերը, գալիս ենք այն համոզման, որ Սկևռայի մասնատուփի պատվիրատուին ճանաչելու համար, պիտի բոլորովին շրջանցվեն այս կամ այն գործիչի հետ նրան նույնացնելու փորձերը: Միակ ճիշտ ճանապարհը ցույց են տալիս Սկևռայի մասնատուփի վրա եղած արձանագրությունները, ապա՝ վերևում հիշատակված չորս ձեռագրերի հիշատակարանները, որոնց բոլորի պատվիրատուն կոչվում է Սկևռայի առաջնորդ Կոստանդին եպիսկոպոս[13]: Այս կապակցությամբ անհրա-

---

[7] **Ն. եպս. Պողարյան**, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Բ, Երուսաղեմ, 1967, էջ 421—432:

[8] **Բակուրան**, Կիպրոս կղզի, Նիկոզիա, 1903, էջ 107. տե՛ս նաև էջ 58:

[9] **Ե. Լալայան**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, Ա, Թիֆլիս, 1915, էջ 50—62:

[10] Այս ձեռագրերից 3-ի (2, 3, 4) հիշատակարանները զետեղված են Լ. Ս. Խաչիկյանի կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուում (Երևան, 1950, էջ 76—77, 106—108. տե՛ս նաև էջ 706: Այստեղ թյուրիմացաբար նույն Կոստանդին եպիսկոպոսը դիտված է որպես երկու անձնավորություն, մեկ որպես գրիչ, մեկ՝ պատվիրատու):

[11] «Աւետիք» (ամսագիր), Բեյրութ, 1940—1941:

[12] **Հ. Ոսկյան**, Կիլիկիայի վանքերը, 1957, էջ 11, 25:

Վերջերս ռուս մասնագետ Վ. Ֆուցկոն ուշադրություն հրավիրեց Ն. Պ. Կոնդակովի մի մեծարժեք դիտողության վրա՝ կապված մասնատուփի հետ, որը նույնպես վրիպել է մասնագետների տեսադաշտից («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 275):

[13] Հավանաբար նույն Կոստանդին եպիսկոպոսի անվան հետ է կապվում նաև մի Ավետարան, որի մասին Մ. եպս. Աղավնունին գրել է. «Կոստանդին եպս. Սկևռայ.—ՄՋ թ. 532 ձեռագիրը ունի հետևյալ հիշատակարանը. «Աստուած ողորմի Կոստանդին Սկևռայ եպս.-ին, և յիւր հոգևոր և մարմնաւոր ծնողացն և հաւասար ննջեցելոցն, որ ունի յիշատակ ս. Աթոռս մէկ մագաղաթ ս. Աւետարան արծաթապատ»: Այդ ձեռագրի (№ 532) մասին մանրամասն տեղե-

ժեշտություն է զգացվում փաստարկել ամենից առաջ մատնացույց արված ձեռագրերի պատվիրատուի նույնությունը, մանավանդ որ այս գործը կատարվում է առաջին անգամ:

Որ վերևում հիշված չորս ձեռագրերն էլ միևնույն Կոստանդին եպիսկոպոսի և Սկևռայի միևնույն առաջնորդի պատվերով են ընդօրինակվել, այս առումով ամենապերճախոս վկայությունը այդ ձեռագրերի պատվիրատուի՝ Կոստանդին եպիսկոպոսի հարազատների անունների հիշատակությունն է: Բոլորի մեջ էլ նրա մայրը կոչվում է Ալվոր տիկին, հայրը Վասիլ, քեռին՝ Հովհաննես Կարմիր վանեցի և այլն: Այսպես, Ա) **ձեռագրում կարդում ենք.** «Ես նուաստս յոքունց Կոստանդին... երբեմն եպիսկոպոս Քերսոն... այժմ առաջնորդ Սկեւռայի... հանգուցեալ քեռին իմ Յոհաննէս Կարմիր վանեցի... մայրիկըն իմ Աղուոր տիկին... զհայրն իմ Վասիլ և զարեամբ նահատակեալ եղբայրն իմ Սարգիս... մեծ մայրն իմ զՊահր և զմիւս մեծ մայրն զՈսկեցաւղ: Եւս եւ զանանդակից եղբայրուկն իմ եւ լերդակից որդեակն զՍտեփանոս վանական, որ արեամբ նահատակեցաւ...»: Բ) **ձեռագրում կարդում ենք.** «զԿոստանդին եպիսկոպոս... քեռին իմ զՅոհաննէս Կարմիրվանցի եւ զքաղցրիկ մայրն իմ զԱղուորտիկին... զհայրն իմ զՎասիլ... եղբայրն իմ զՍարգիս, որ... խողխողեալ եղև յանաւրինաց...» և այլն: Գ) **ձեռագրում կարդում ենք.** «Ես Կոստանդին եպիսկոպոս Պեհեանցի... առաջնորդ... Սկեռայի... ետու գրել ... յիշատակ ինձ և իմոցն ծնողաց և երախտաւոր քեռոյն իմոյ Յոհաննէս քահանայի, որ մականուն Կարմիրվանիցի կոչի, և քաղցրիկ մաւրն իմոյ Աղուորտիկնայ և հաւրն իմոյ Վասլի, արեամբ նահատակեալ հարազատ եղբաւրն իմոյ Սարգսի և որդւոյ իւրոյ Աւշնի և մեծ մաւրն իմոյ Պահրի...» և այլն: Դ) **ձեռագրում կարդում ենք.** «Ես Կոստանդին եպիսկոպոս Պահեանցի... առաջնորդ... Սկեռայի... քեռին իմ զՅոհաննէս քահանայն Կարմիրվանցին, և զհայրն իմ Վասիլ, և զքաղցրիկ մայրն զԱղուորտիկին, և զարեամբ նահատակեալ հարազատ եղբայրն իմ զՍարգիս, և զորդին իւր Աւշին, և մեծ մայրն իմ Պահրի...»:

Այստեղից միանգամայն պարզ է, որ նշված չորս ձեռագրերի մեջ առկա Կոստանդին եպիսկոպոսը միևնույն անձնավորությունն է: Բայց արդյոք կարելի՞ է նրան նույնացնել Սկեռայի տուփի պատվիրատուի հետ՝ ինչպես արել է Ն. Ակինյանը՝ 2 ձեռագրի հիման վրա: Չնայած մենք ևս չենք տարակուսում այդ հարցում, սակայն նպատակահարմար ենք գտնում տալ որոշ բացատրություններ:

Բանն այն է, որ մասնատուփն ստեղծվել է 1293 թվականին, իսկ ձեռագրերը՝ 1299—1314 թվականներին: Արդյոք նո՞ւյն Կոստանդինն է եղել Սկեռայի առաջնորդն՝ այդ ամբողջ ընթացքում, թե 1293—1299 թվականների ընթացքում նրան փոխարինել է մի ուրիշ համանուն եպիսկոպոս: Այս հարցին հեշտությամբ կարելի էր պատասխանել, եթե մասնատուփի արձանագրությունների մեջ ևս պատվիրատուն հիշատակած լիներ իր հարազատների անունները: Բայց նա, այդտեղ տեղի աղության պատճառով, սահմանափակվել է հետևյալ սեղմ ու ընդհանուր տողերով.

Եւ ինձ նշան բարոյ յիշման,
Նայեւ իմոցն, որ զիս ծնան
Եւ բնաւ ազգիս լրութեան...

Ուստի մնում է որոնել ուրիշ փաստեր: Այս տեսակետից կարևոր են այդ երկու գործիչների կենսագրության որոշ մանրամասնությունները: Թե՛ մեկը և թե՛ մյուսը սերտորեն կապվում են Հռոմկլայի հետ որպես այնտեղի սաներ, եպիսկոպոսներ, որտեղից էլ հետո մեկնել են Սկևռա: Նախ ծանոթանանք մասնատուփի վկայություններին, ուր Կոստանդին եպիսկոպոսը խոսում է իր Հռոմկլայում սովորած լինելու, այնտեղ եպիսկոպոսության գավազան և պաշտոն ստացած լինելու և Հեթում Երկրորդի թագավորության սկզբնական շրջանում այնտեղից Սկևռա տեղափոխված լինելու մասին.

կությունները են տրված Ն. եպս. Պողարյանի կազմած ձեռագրացուցակի Դ հատորում, ուր սակայն Կոստանդին եպիսկոպոսին վերաբերող տողերը չկան: Հավանաբար դրանք վրիպել են Ն. Պողարյանի ուշադրությունից և չեն ընդօրինակվել: Ինչ վերաբերում է № 532 ձեռագրում հիշված Կոստանդին եպիսկոպոսի՝ Երուսաղեմի հայ միաբանությանը նվիրված Ավետարանին, այդ մասին լրացուցիչ տեղեկություններ չգտանք: Մ. եպս. Աղավնունին նույնպես հակված է հետևելու Ա. Կարիերին և հ. Ղ. Ալիշանին՝ Կոստանդին եպիսկոպոսին՝ Կատուկեցու (Պրոնագործ) կամ համանուն Լամբրոնացու հետ նույնացնելու առումով («Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի», Երուսաղեմ, 1929, էջ 213—214): Ն. Ակինյանը նույնպես ծանոթ է այս տեղեկությանը, բայց նա նշված Ավետարանը վերագրում է Կոստանդին եպիսկոպոսին («Աւետիք», 1941): Մեզ համար անորոշ է այն հարցը, թե այդ Ավետարանը ստեղծվել է Կոստանդին եպիսկոպոսի՞ ջանքերով, թե՞ հին Ավետարան է եղել և նրա կողմից նվիրվել է Երուսաղեմին: Հավանաբար նա ինքն է գրել տվել և նվիրել այդ ձեռագիրը Երուսաղեմին: Այսպիսով միաժամանակ ունենում ենք հիմք մտածելու, որ Կոստանդին՝ եպիսկոպոսը եղել է նաև Երուսաղեմում. բայց թե ե՞րբ և ինչքա՞ն ժամանակով, մնում է պարզելու:

Ես Կոստանդին անձն տարտամ...
Սնեալ եմ Կլայն Հռոմայական...
Ուր և ի վեր քան զիմն արժան
Հաւատացաւ ինձ աստիճան
Նստել յաթոռ այցելութեան՝
Գաւազանաւս հովական:
Արդ, ըստ աստուածեան յաջողման,
Ի դէպ ժամու և պատահման
Բարոյն Հեթմոյ արքայութեան,
Որ գիտնական և սրբազան,
Եղէ յաթոռ վսեմական
Սկեւռա վանացս ի հովութեան.
Եդայ տեսուչ այն մեծի տան...

Այստեղից երևում է, որ Կոստանդին եպիսկոպոսը Սկևռա է տեղափոխվել 1293 թվականից առաջ, երբ ժամանակի ընթացքը խաղաղ ու հաջող է եղել: Իսկ դա էլ ենթադրում է առնվազն 1292 թվականից որոշ ժամանակ առաջ, որովհետև այդ թվականի ամռանը տեղի ունեցավ մեծ աղետ. եգիպտական մամլյուկները գրավեցին Հռոմկլան: Ուստի հենց այս պարագան նկատի առնելով է, որ Կոստանդին եպիսկոպոսն իր Սկևռա գալու մասին խոսելով, հանկարծ փոխում է դեպքերի նկարագրության ուրախ եղանակը և տխրությամբ շարունակում.

Այլ երանի, թէ աստ վախճան
Առնոյր զրոյցս պատմութեան.
Ավա՜ղ մեծի թշուառութեան
Բոլոր ազինս հայկական.
Ամաւ յառաջ քան զթուական
Առեալ եղև Հռոմկլայն...

Որ այդ աղետի ժամանակ, այսինքն, 1292 թվականի ամռանը նա այլևս Հռոմկլայում չի գտնվել, այլ Սկևռայում, դա երևում է նաև նրա հաջորդ տողերից, ուր նա խոսում է Հռոմկլայում գտնվողներին գերի տանելու մասին.

Սուրբ հայրապետն և որք՝ նորայն
Գերեալք յաշխարհն Տաճկաստան...
կամ՝
Նստեալքն երբեմն անդ բնական
Եղեն վարեալք ի գերութեան...

Եթե ինքն էլ գերվածների մեջ եղած լիներ, ապա այդպես չէր գրի, այլ իրեն էլ կհիշեր գերվածների թվում. ամբողջ հիշատակարանից երևում է, որ նա այդ օրերին նստած Սկևռայում ողբացել է Հռոմկլայի անկումը.

Վա՜յ և աւա՜ղ հազար բերան...
Նստիմ ի սուգ նջսեմական:
Այլ զեթեղեալ իմ ի Սկեւռայն
Ստիպեաց փափաք զիս ցանկութեան
Դնել զայս մասունս ի հանգստեան
Եւ ի ստիպանս այս տրտմութեան...

Ուշագրավ է նաև այն ջերմ սերը, այրող կարոտը, որ նա տածել է Հռոմկլայի նկատմամբ, ոչ միայն որպես հոգևորական, այլև որպես Հռոմկլայի հոգևոր զավակ ու հայրենասեր քաղաքացի: Վերոհիշյալ տողերից ու ողջ հիշատակարանից ցոլանում է այդ սերն ու կարոտը, վիշտն ու մորմոքը: Ստեղծված մասնատուփն էլ ամբողջապես այդ ապրումների հանճարեղ արտահայտությունն է: Իրավացի է Ա. Յա. Կակուլկինը, երբ գրում է, թե Սկևռայի մասնատուփը նվիրված է եղել Հռոմկլայի միջնաբերդը պաշտպանող զոհերի հիշատակին[14]: Այդ տուփի զարդապատկերներն ավելին են հուշում: Վարդան Մամիկոնյանի առկայությունն այդտեղ, ինչպես և նրա ու Պողոս առաքյալի կերպարների մերկացրած սրերով պատկերելը ոչ այլ ինչ է, քան ընկած Հռոմկլայի ազատագրության մարտակոչ:

Ծանոթանալով վերևում հիշված չորս ձեռագրերի պատվիրատու Կոստանդին եպիսկոպոսի հիշատակարաններին, տեսնում ենք, որ նա էլ է կապված Հռոմկլայի հետ և՛ կենսագրական համապատասխան տվյալներով, և՛ սիրտ մղկտացնող հուշերով: Նա էլ է իր եպիսկոպոսական գավազանն ու պաշտոնն ստացել Հռոմկլայում և ապա այնտեղից տեղափոխվել Սկևռա: Պարզ է, որ այդ բոլորը պիտի տեղի ունեցած լինեին նախքան Հռոմկլայի անկումը, որովհետև այդ աղետից հետո նա չէր կարող ոչ ձեռնադրվել այնտեղ և ոչ էլ պաշտոնավարել: Ուստի չի կարելի պատկերացնել, թե նույն թվականներին Հռոմկլայից Սկևռա մեկնեցին երկու առաջնորդներ՝ նույն կենսագրական տվյալներով: Դիմենք այդ փաստերին:

Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող № 2787 ձեռագրի (Գ) հիշատակարանում Կոստանդին եպիսկոպոսը խնդրում է հիշել «նաև միւս սիրելի ձեռնասունդ հոգևոր որդեկի իմոյ արեամբ չափ նահատակելոյ ընդ իս ի Հռոմկլայն և ի Պեհեսնի, Ստեփանոս քահանայ, նա և ի սուրբ ուխտիս արեամբ նահատակեցաւ յանաւրինաց ի սպասաւորութեան սուրբ եկեղեցւոյս...»:

Այստեղից պարզ երևում է, որ ինքը և իր հոգեզավակ Ստեփանոս քահանան միասին աշխատել են Հռոմկլայում և Պեհեսնում:

Պեհեսնը և Քերսոնը (Քեսուն), որ հիշվեց վերևում, գտնվում էին Հռոմկլայից ոչ հեռու: Ինչպես երևում է, 1292 թվականի աղետից և Սկևռա տեղափոխվելուց առաջ Կոստանդին եպիսկոպոսը պաշտոնավարել է նաև այդ տեղերում: 1292 թվականից հետո նա այլևս այնտեղ և հատկապես Հռոմկլայում ու Պեհեսնում չէր կարող լինել, որով-

[14] «Լրաբեր», 1971, № 11, էջ 84:

հետև Հռոմկլայի անկումից շատ չանցած Հեթում թագավորը Մելիք Աշրաֆին հանձնեց նաև այդ վայրերը՝ խաղաղություն ձեռք բերելու նպատակով: Հեթում պատմիչը, խոսելով 1292 թվականի դեպքերի մասին, գրում է. «Աշրաֆն էառ... զՀռոմկլայն... եւ ետուն սուլտանն տրտվութեամբ զԾագն, զԱպլճէս, և վասն սիրոյ ետ թագաւորն Հայոց Հեթում զանմատչելի դղեակն Պեհեսնի»[15]:

Եվ եթե Կոստանդին եպիսկոպոսն իրեն երբեմն կոչում է Պեհեսնցի, ապա դա կապված է 1292 թվականից առաջ եղած տարիների հետ: Ինչպես երևում է, Կոստանդին եպիսկոպոսի հետ միասին Սկևռա է տեղափոխվել նաև վերոհիշյալ Ստեփանոս քահանան, որը նրա սպասավորն է եղել «ի Հռոմկլայն և ի Պեհեսնի»: Սկևռայի մոտ գտնվել է ս. Սիմավոն անունով գյուղ, որտեղ ապրել է այդ Ստեփանոսը և ուր էլ նահատակվել է նա մահմեդականների ձեռքով: Մաշտոցի անվան Մատենադարանի նշված № 2787 ձեռագիրը գրված է եղել հենց այդ ս. Սիմավոն գյուղի եկեղեցու համար:

Պարզվում է, որ Հռոմկլայի աղետը Կոստանդին եպիսկոպոսի համար առավել ծանր է եղել նաև այն պատճառով, որ նրա հարազատ եղբայրը՝ Սարգիսը, եղել է բերդաքաղաքի պաշտպանների թվում և ընկել այնտեղ: Այդ անմոռանալի կսկիծը նրան ուղեկցել է մինչև 1314 թվականի հիշատակարանները, խնդրել տալով հիշել «արեամբ նահատակեալ հարազատ եղբարն իմոյ Սարգսի»:

Կիպրոսում գտնված վերոհիշյալ ձեռագրի (1311 թ.) հիշատակարանն այս առումով ավելի քան պերճախոս է: Այդտեղից իմանում ենք, որ Կոստանդին եպիսկոպոսն ունեցած է եղել նաև Հակոբ անունով հոգևոր զավակ, որը նույնպես նահատակվել է Հռոմկլայի պաշտպանության ժամանակ: Այդ մասին խոսում է ձեռագրի գրիչը. «...նախասացեալ տէր Կոստանդեայ և լերդակից որդեկին իւր նորին Յակոբայ, որ իբրև զմի մարմին բանական յերկուց առ ի մի կերպարան... միաչունչք և միակրանք... վասնզի Յակոբայ միակն գոլ, զոր հարեալ եղև մինն նետիւ յանաւրինաց ի մերն Հռոմայական Կլայն, զոր պաշարեաց Մելէք Աշրաֆն...»:

Նկատենք, որ այս հիշատակարանն ամփոփող «Յայտմաւուրք»-ը գրվել է նահատակ Հակոբ քահանայի ավագ եղբոր՝ Ստեփանոսի համար, ուր հիշատակի խոսք է ասված նաև Հակոբ քահանայի ծնողների՝ Սարգսի և Մելամ խաթունի մասին:

Այսպիսով համոզվում ենք, որ իրոք Սկևռայի 1293 թվականի տուփի պատվիրատու Սկևռայի առաջնորդ Կոստանդին եպիսկոպոսը և վերևում հիշված, 1299—1314 թվականներին ընդօրինակված չորս ձեռագրերի պատվիրատու, Սկևռայի առաջնորդ Կոստանդին եպիսկոպոսը նույն անձնավորությունն է: Նա կրթվել և եպիսկոպոսական աստիճան է ստացել Հռոմկլայում, ապա աշխատել է որպես առաջնորդ Պեհեսին-Քեսունում և 1292 թվականին կամ դրանից քիչ առաջ, բայց ոչ ավելի վաղ, քան Հեթում Երկրորդի գահակալությունը, տեղափոխվել Սկևռա՝ առաջնորդի պաշտոնով: Նշված ձեռագրերը պարզում են նրա ծնողների, եղբոր, եղբորորդու, տատերի, ինչպես նաև հոգևոր զավակների, սպասավոր-գործակիցների անունները: Պարզվում են նաև ուրիշ մանրամասներ, որոնց կանդրադառնանք ստորև:

Ըստ վերոհիշյալ ձեռագրերի հիշատակարանների՝ Կոստանդին եպիսկոպոսն Սկևռայում պաշտոնավարել է մինչև 1314 թվականը, որից հետո նրա մասին մենք ոչ մի տեղեկություն չունենք: Արդ, եթե ընդունենք, որ նա Սկևռա է տեղափոխվել 1292 թվականին, ապա նրա պաշտոնավարության մեզ հայտնի ժամանակը կկազմի 22 տարի:

Փաստերը միաժամանակ ցույց են տալիս, որ Կոստանդին եպիսկոպոսն այդ 22 տարվա ընթացքում անընդմեջ չէ, որ գտնվել է Սկևռայում: Ավելին, պարզվում է, որ նա հալածվել է՝ ենթարկվելով մերթ բանտի ու աքսորի, մերթ էլ թափառական կյանքի: Ծանոթանանք այդ փաստերին, որոնք առաջին անգամ են արժանանում քննության:

1311 թվականին ընդօրինակված վերոհիշյալ «Յայտմաւուրք» ժողովածուի հիշատակարանի սկզբի մասը գրչինն է, որը, բնականաբար, ինչպես մյուս երեք ձեռագրերի գրիչները, երրորդ դեմքով է խոսում Կոստանդին եպիսկոպոսի մասին[16]: Ահա գրչին պատկանող այդ տողերից («նախասացեալ

[15] Հեթում պատմիչ թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 85. «տրտվութեամբ» բառի հիմքում ընկած է ժողովրդական «տուրը տալ» (կորցրածից հետո մի բան էլ անտեղի կորցնել, կամովին զրկվել) հասկացությունը:

[16] Այս ձեռագրի հիշատակարանը ցարդ շրջանառության մեջ էր Բակուրանի վերոհիշյալ գրքույկից («Կիպրոս կղզի»), ուր այն սկզբից թերի լինելով, հիմք է տվել շփոթելու այդ ձեռագրի պատվիրատուին գրչի հետ: Այժմ Ն. Ակինյանի նշված հոդվածաշարից (1941, էջ 60—61) ծանոթանում ենք նաև հիշատակարանի սկզբի մասին, որն օգնում է տարբերելու այդ ձեռագրերի գրչի հիշատակարանը՝ պատվիրատուի (Կոստանդին եպիսկոպոս) հիշատակարանից: Տեղեկանում ենք նաև, որ այդ ձեռագիրը Նիկոզիայի հայոց առաջնորդարանումն է և պահվում է 9 համարի տակ:

արքեպիսկոպոս տէր Կոստանդեայ...» և այլն), երևում է, որ դրանից առաջ նախապես արդեն խոսվել է Կոստանդին եպիսկոպոսի և նրա հարազատների մասին: Ըստ այդմ էլ, շարունակության մեջ նրանք հիշվում են անորոշաբար. «Արդ եղև աւարտումն... Սիս... **վասնզի ոչ գոյր սոցա տեղի անդորելոյ ի մի վայր,** գրեալ եղև մաս ինչ ի Սիս և մասն ինչ ի Ծոխաթն, որ է վանք Ասորոց ազգին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, և մասն ինչ ի սուրբ ուխտն Զորոյ կոչեցեալ վանք...»: Քանի որ «սոցայ»-ից առաջ հիշված է Կոստանդին եպիսկոպոսը, ուստի խոսքը պիտի վերաբերի նրա և նրա հարազատների աստանդական կյանքին: Այս տեսակետից ուշագրավ է Կոստանդին եպիսկոպոսի խնդրանքը՝ հիշել «...զարեամբ նահատակեալ հայրազատ եղբայրն իմ զՍարգիս, որ մինչդեռ մանուկն էր տիրաւք՝ խողխողեալ եղև յանաւրինաց, և զԱւշին, որդի նորին, որ յանցեալ ամի հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս, և է ի պահեստի ի սուրբ ուխտն Ծոխաթն...»: Այստեղից երևում է, որ թափառական կյանք էր վարում նաև Կոստանդին եպիսկոպոսի նահատակված Սարգիս եղբոր որբ զավակը՝ Օշինը, որը մեռել և թաղվել է ասորական Ծոխաթում՝ նախորդ տարին: Ուստի թափառական, անհանգիստ կյանքի մասին եղած խոսքն, իրոք, վերաբերում է Կոստանդին կաթողիկոսին և նրա հարազատներին: Եվ քանի որ խոսքը 1310—1311 թվականների մասին է, իսկ մյուս ձեռագրերից պարզվում է, որ Կոստանդին եպիսկոպոսը 1299 և 1314 թվականներին եղել է Սկևռայում, ուստի նրա կրած հալածանքը պիտի որոնել 1299—1314 թվականների միջև և ոչ թե 1299-ից առաջ:

Ունենք մի ուրիշ, առավել որոշակի վկայություն Կոստանդին եպիսկոպոսի կրած հալածանքի մասին, Դա վկայված է 1314 թվականին ընդօրինակված ձեռագրերում: Դրանցից առաջինը (Մաշտոցի անվան Մատենադարանի № 2787 ձեռագիրը) հաղորդում է, որ «Կոստանդին... առաջնորդ... Սկևռայի» խնդրում է հիշել՝ «նաև երախտաւոր սպասաւորին իմոյ՝ Յակոբայ քահանայի, որ մահու չափ նահատակեցաւ ընդ իս՝ ի բանդ և ի կապանս, ի ծովու և ի ցամաքի, նաև չորս ամաւք յաւտարութեան պանդխտանալ յաշխարհին ֆռանկաց, և երկու ամաւք յառաջ քան զգրել սուրբ գրոցս (այսինքն, 1312 թ.) փոխեցաւ ի Քրիստոս...»: Նույն տողերին հանդիպում ենք նաև մյուս ձեռագրի («Հին կտակարան») ընդօրինակության մեջ, ուր նա խնդրում է հիշել «այլև զձեռնասուն որդեակն զՅակոբ քահանայ, որ մահու չափ նահատակեցաւ ընդ իս ի բանտ և ի կապանս, ի ծովու և ի ցամաքի և Դ ամաւք յաւտարութիւն պանդխտակից՝ աշխարհն ֆռանկաց և Բ ամաւք յառաջ, քան զգրել սուրբ գրոցս (այսինքն, 1312 թ.) փոխեցաւ ի Քրիստոս..».: Այստեղից արդեն ավելի որոշակի է դառնում, որ կոստանդին եպիսկոպոսի հալածանքներն սկսվել են 1299-ից հետո և ավարտվել 1311 թվականին: Քանի որ 1311 թվականին նա դեռևս հալածանքի մեջ էր, ուստի հենց այդ ժամանակներին էլ նա պիտի Հակոբ քահանայի հետ վերադարձած լիներ բանտ ու աքսորից և ֆռանկաց երկրում կրած քառամյա պանդխտությունից: 1311 թվականի ձեռագրում նշված «սոցայ» բառի տակ այժմ վստահ կարող ենք նկատի ունենալ նաև վերոհիշյալ Հակոբ քահանային, որը Կոստանդին եպիսկոպոսի հետ է եղել ողջ հալածանքի ընթացքում և մեռել 1312 թվականին: 1314 թվականի հիշատակարաններն օգնում են համոզվելու, որ 1312 թվականին նրանք արդեն Սկևռայումն են եղել, ուր միասին զբաղված են եղել շինարարությամբ: Այսպես, № 2787 ձեռագրում հիշելով Հակոբ քահանայի մահը (1312 թ.), Կոստանդին եպիսկոպոսը նրա մասին այսպես է գրում. «...փոխեցաւ ի Քրիստոս, վասնզի սիրայորդոր փութոյ պրճիս և յաւժար կամաւք աշխատելոյ ի վերայկացութեան շինութեան պրճիս և եթող ինձ մեծ և անմխիթար սուգ»: Նույնպիսի վկայություն կա նաև մյուս ձեռագրում. «Փոխեցաւ ի Քրիստոս վասն սիրայորդոր փութոյ տաճարիս և յաւժար կամաւք աշխատելոյ ի վերակացութիւն շինութեան տաճարիս, հիշատակ նորա աւրհնութեամբ եղիցի...»:

Նրանք Սկևռայում այդ ժամանակ կառուցում էին հավանաբար բերդ (պուրճ) կամ բերդի աշտարակ, կամ և գուցե տաճար, ինչպես հաղորդում է երկրորդ ձեռագիրը, չնայած դա կարող է սխալ վերծանման արդյունք լինել (պրճիս-տաճրիս):

Կոստանդին եպիսկոպոսն իր կրած տառապանքների ու հալածանքների մասին նույն 1311 թվականի ձեռագրում թողել է նաև այսպիսի ընդհանուր տողեր. «Ես Կոստանդին եպիսկոպոս Պեհեսնացի, և խնամաւք անեղին առաջնորդ սուրբ ուխտիս Սկևռայի, ի բազում իրս բազում անգամ տարուբերեալ ի ժամու և տարաժամու վրդովմամբ ի զբաղմանց եռալեան ծովուս միջի՝ անցելոյն և ներկայիս և ապառնոյն, ընդ հոլով սխալմամբ գրաւեալս, ի վաղ ժամանակէ և այսր մեծաւ փափաքմամբ յղձալի զաստ հաւաքեալ գրեանքս... և ոչ լինէր լրումն կատարման իրիս, մինչև նա կամեցաւ, որ զանշարժն ի բարին գիտէ շրջափոխել...»:

Ինչպես երևում է, այստեղ նշված «ի վաղ ժամանակէ» փայփայած ցանկությունը նա

վերջապես իրականացրել է «բազում անգամ» փոթորկվելուց և վրդովվելուց հետո, մինչև, որ ըմբռնել է իր «ընդ հոլով սխալմամբ ըմբռնեալ» լինելը: Եթե այս սխալները կոնկրետ սխալներ են և ոչ թե ընդհանուր, ապա կարող է հարց առաջանալ. ի՞նչ սխալների մասին է նրա խոսքը և արդյոք նրա հալածանքներն էլ այդ հողի վրա չէի՞ն ծընվել:

Առաջադրված հարցին պատասխանելու համար տվյալ ակնարկը բավարար համարել չենք կարող: Ուստի անհրաժեշտ է փնտրել համապատասխան այլ հիմքեր: Հիրավի, եթե Կոստանդին եպիսկոպոսը տարիներ շարունակ հալածվել է, ապա ի՞նչն է եղել դրա պատճառը: Այս առումով առաջնահերթ նշանակություն ունի նրա հալածողների մասին տեղեկությունն ունենալը, Չէ՞ որ նա կարող էր նաև օտար բռնակալների կողմից գերված ու պանդխտած լինել: Տվյալ դեպքում սակայն նման հալածանք չի նկատվում. առկա է տեղական՝ ներքին, ներազգային, ներկրոնական պայքարով պայմանավորված հալածանք: Դա պարզ երևում է 1311 թվականի հիշատակարանից, ուր ասված է, թե «ոչ գոյր սոցայ անդորելոյ ի մի վայր», որի պատճառով էլ ձեռագիրն ընդօրինակվել է մերթ Սիս քաղաքում, մերթ ասորիների Ծոխաթ վանքում, մերթ էլ Զորո վանքում: Պատկերը պարզ կլինի, եթե այստեղ մեջ բերենք նաև հիշատակարանի հաջորդ տողերը. «Ի թուականութեանն Հայոց մեծաց ՉԿ (1311), ի հայրապետութեանն տեառն Կոստանդեայ Կեսարացոյն և ի թագաւորութեան Աւշնի աստուածասիրի և բարեպաշտի, որդոյ Լեւոնի, որդոյ Հեթմոյ...»:

Հասկանալի է, որ այդ օրերին հալածված Կոստանդին եպիսկոպոսի ճակատագրի որոշողը պիտի լինեին ոչ այլ ոք, ան Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը և Օշին թագավորը (1309—1320), իսկ նրանցից առաջ՝ նրանց նախորդները:

Նախ Կոստանդին եպիսկոպոսի իրավունքների վերականգնման մասին: Վերոհիշյալ հիշատակարանում կարդում ենք. «Արդ, եղև աւարտումն մատենիս ի մայրաքաղաքս Սիս...»: Նշանակում է, որ ձեռագրի սկզբի մասը գրված է եղել ասորիների Ծոխաթ վանքում և Զորո վանքում: Լինել ասորիների մոտ, նշանակում էր ապաստան գտնել ավելի անվտանգ տեղում, իսկ այնտեղից վերադառնալ մայրաքաղաք՝ Սիս, ուր գտնվում էին և՛ արքունիքը, և՛ կաթողիկոսարանը, նշանակում է ավելի ազատ զգալ և երկյուղ չունենալ: Ուստի կարելի է մտածել, որ հենց այդ ժամանակվանից (1311 թ.) էլ Կոստանդին եպիսկոպոսին իրավունք է տրվել Սսից մեկնել Սկևռա:

Մնում է պարզել նրա և նրա համախոհ Հակոբ քահանայի աքսորման կոնկրետ ժամանակը: Այդ կապակցությամբ կարող ենք անել հետևյալ ենթադրությունը: Եթե Կոստանդին եպիսկոպոսը նշում է չորս տարվա պանդխտական կյանք Եվրոպայում, իսկ դրանից առաջ՝ բանտ ու շղթա, ապա մեր կարծիքով, դրանք բոլորը միևնույն պատմության երկու շրջանն են ներկայացնում: Այսինքն, նախ նրան և իր ընկերոջը բանտարկել են, ապա շղթայած ծովով ու ցամաքով ուղարկել «աշխարհն ֆռանկաց», որտեղ նրանք պանդխտել են չորս տարի: Ուստի այդ չորս տարվա մեջ պիտի հաշվել նաև բանտարկության որոշ ամիսները: Առավելն կարելի է չորս տարվա վրա ավելացնել որոշ ամիսներ, այսինքն, այնքան ժամանակ, որքան կպահանջեր գործի ստեղծումը, քննությունը, որոշում կայացնելը և մեղադրյալներին Կիլիկիայից-Հռոմ նավով ուղևորելը:

Այս հաշվումներով կարող ենք ասել, որ Կոստանդին եպիսկոպոսին բանտարկել և աքսորել են 1307 թվականին, որից հետո մինչև 1311 թվականն ընկած միջոցը հավասար է 4—5 տարվա:

Նման հաշիվը մեզ ինքնաբերաբար տանում, կանգնեցնում է Սսի հայտնի ժողովի առջև (1307 թ.), որտեղ հայոց եկեղեցին միացված համարվեց լատինական եկեղեցուն: Հայտնի է, որ այդ ժամանակ ուժեղ բախումներ ու դժգոհություններ եղան, ունենալով ծանր և աղետալի հետևանքներ: Ուստի, բնականաբար, հարց է առաջանում. արդյոք Կոստանդին եպիսկոպոսն այդ ժամանակ չէ՞, որ բանտարկվել և ուղարկվել է «ֆռանկստան» (հավանաբար Հռոմի Պապի մոտ՝ քննության): Դա միանգամայն հավանական ենթադրություն է՝ կարոտ փաստարկման:

Անկախ սակայն մանրամասնություններից, մի բան պարզ է. Կոստանդին կաթողիկոսը Սսի ժողովից հետո մինչև 1311 թվականը գտնվել է հալածանքի մեջ և ի վերջո այդ թվականին վերադարձել Սկևռա:

Այս տեսակետից հետաքրքրական է այն փաստը, որ Սսի ժողովի մասնակիցների շարքում չի եղել Կոստանդին եպիսկոպոսը:

Սկևռայից ներկայացել է միայն մի վարդապետ Մարկոս անունով[17]: Դա ցույց է տալիս, որ Կոստանդին եպիսկոպոսը կամ չէր կամեցել ներկայանալ ժողովին, կամ արդեն կալանքի տակ էր գտնվում:

Եվ քանի որ Սսի ժողովի կապակցությամբ առաջացած հալածանքը մի հիմնական

[17] Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, Բ, ա, Անթիլիաս, 1960, էջ 1786:

պատճառ պիտի ունենար, այն է՝ լատինական դավանանքին հակադրվելը և ազգային եկեղեցուն հավատարիմ մնալը, ուստի պիտի ենթադրել, որ Կոստանդին եպիսկոպոսը հակադրվել է Սսի ժողովի համար դեռևս 1306 թվականին գրված սկզբունքներին: Ինչ խոսք, նման վարմունքի տերը կարող էր և՛ բանտարկվել, և՛ աքսորվել, և՛ մանավանդ առաքվել Հռոմ՝ հաշիվ տալու: Ըստ երևույթին, այսպիսին է Կոստանդին եպիսկոպոսի հալածանքի շարժառիթը:

Հարց է առաջանում. արդյոք այն գաղափարները, որոնց համար հալածվեց Կոստանդին եպիսկոպոսը, յուրովի չէի՞ն արտահայտվել նրա ստեղծած մասնատուփի քանդակապատկերների միջոցով: Չէ՞ որ դավանաբանական այդ հարցերը նոր չէին բարձրացվում:

Առհասարակ հետագային թողնելով այս հարցի պատասխանը, կկամենայինք ուշադրություն հրավիրել Ս. Տ.-Ներսիսյանի կատարած քննության այն տողերի վրա, որոնցով նա շեղում է տեսնում քննվող տուփի պատկերած սրբերի դասակարգման մեջ: Ըստ նրա, ամենախոշոր սրբերի պատկերները մղված են ետին պլան և առաջին գծի վրա են դրված հայ ժողովրդի ազգային սրբություններ Գրիգոր Լուսավորիչը, Թադեոս առաքյալը, Եվստրատեոսը և Վարդան Մամիկոնյանը[18]: Ինչ խոսք, Հռոմի ներկայացուցիչներին նման մոտեցումը կարող էր զայրացնել, մանավանդ, որ Գրիգոր Լուսավորիչն ու Թադեոս առաքյալը գրավել էին Պողոս և Պետրոս առաքյալների տեղերը: Այն օրերին, երբ կատաղի պայքար էր ծավալվում լատինական կողմնորոշումն արմատավորելու ուղղությամբ, նման քայլը չէր կարող չհետապնդվել: Դրան հավանաբար գումարվել են Կոստանդին եպիսկոպոսի դրսևորած համոզումները և առարկությունները:

Այս կապակցությամբ կկամենայինք ուշադրություն հրավիրել նաև հետևյալ խնդրի վրա: Զարմանալի պիտի թվար այն իրողությունը, որ մեր միջնադարյան սկզբնաղբյուրներում ոչ մի խոսք չկա Կոստանդին եպիսկոպոսի ստեղծած տուփի մասին[19]: Չէ՞ որ այն սովորական տուփ չէր, այլ մասնատուփ՝ սրբերի մասունքներով և հրաշագործ պատկերներով: Ըստ երևույթին, Կոստանդին եպիսկոպոսի հալածանքի ժամանակ Հռոմ է առաքվել նաև այդ սրբարանը, ուր և արգելված է մնացել այն:

Հ. Ղ. Ալիշանը մտածելով այդ տուփի Իտալիա ընկնելու մասին, գրում է. «Անհայտ է պատճառ և ժամանակ փոխադրութեան պահարանիս յԻտալիա... ոչ է մեզ յայտ և այն թէ յոր կողմն Իտալիո զառաջինն պահիր, ի Հռովմ թէ յայլում քաղաքի...»: Bosco վայրը, ուր գտնվել է տուփը 1830-ին՝ կառուցված է 1566—1572 թվականներին: Պարզ է, որ ի սկզբանե այնտեղ չէր կարող ընկած լինել տուփը: Մնում է ենթադրել, թե տուփն Իտալիայում առաջին անգամ տեղ է գտել այն հաստատության մեջ, ուր ներկայացել է շքեղ թաղված Կոստանդին եպիսկոպոսը: Դա այլ տեղ չէր կարող լինել, քան Հռոմի Պապի ընդունարանը կամ նրա հանձնարարությամբ գործը[20] քննող մի այլ հաստատություն: Ահա նման մի տեղից էլ 1566—1572 թվականներին տուփն ընկել է Bosco գյուղի Դոմինիկյանների մոտ, որտեղից էլ 1830 թվականից հետո հայտնաբերվել է Ֆրանսիայում, ընկել հնասեր Բազիլևիչի ձեռքը և ի վերջո եկել հանգրվանելու Լենինգրադի Էրմիտաժում:

Հարց է առաջանում, եթե այդ տուփը դեռևս 1300-ական թվականներին իր տիրոջ հետ մեղադրվելով ընկել է Հռոմի Պապի և նրա գործակալների ձեռքը, հապա ինչպե՞ս է, որ այն չի ոչնչացվել: Չունենալով պատասխանի համար անհրաժեշտ փաստեր, կարող ենք եզրակացնել, որ այն չի ոչնչացվել հավանաբար այն պատճառով, ինչ պատճառով կենդանի է մնացել նրա տերը՝ Կոստանդին եպիսկոպոսը: Նրան հատկապես տուփի համար այնքան էլ չէին մեղադրի, եթե ինքն ընդուներ լատինական եկեղեցու դավանանքը՝ թեկուզ առերես: Այդ տուփը կարող էր փրկվել նաև Հեթում Երկրորդի հետ կապված լինելու պատճառով, որին Հռոմը ճանաչում և հովանավորում էր: Իսկ տուփի գեղահարդարանքը Հեթում թագավորին մեծարում էր ոչ միայն իր երեք հիշատակարաններով, այլև առանձին պատկերաքանդակով, որն ուներ «Հեթում թագաւոր Հայոց» մակագրությունը: Չմոռանանք նշել, որ Հեթումին այն ժամանակ նկարում էին նաև Իտալիայի զանազան հաստատությունների պատերին՝ որպես Հռոմի հովանու տակ մտած թագավորի: Ի վերջո, այդ տուփը կարող էր այնտեղ պահվել նաև իր բարձրը արվեստի և ամփոփած նշխարների սրբության պատճառով, ուր առկա էին քրիս-

[18] „Revue des Etudes Arméniennes", I, Paris 1964, էջ 130,

[19] Այստեղ նկատի չունենք Վենետիկի Մխիթարյանների միաբանության № 331 ձեռագրում եղած տվյալները, որոնք հետագայի քաղվածքներ են՝ առնված 1830 թվականին հայտաբերված տուփի մասին գրված ուսումնասիրություններից (տե՛ս **Բ. Սարգիսյան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ, 1924, էջ 1284. նկարագրված ձեռագրի 5ա, 6ա, 9ա, 17բ թերթերի նյութերով):

[20] «Արձագանք», Թիֆլիս, 1884, էջ 176:

տոնական եկեղեցու համար ընկածների ճշխարները: Հռոմն այդ տուփը սիրով կպահեր իր մոտ նաև դիվանագիտական առումով, որպեսզի մի կողմից ավելի սիրաշահած լիներ Կոստանդին եպիսկոպոսին՝ իր կողմը գրավելու, իր գործիչը դարձնելու նպատակով, իսկ մյուս կողմից՝ հայ իրականությունից կտրելու այդ «սրբարանը», որտեղ ազգային սրբերն ավելի առաջնակարգ տեղ էին ստացել, քան լատինական և առհասարակ քրիստոնեական սրբերը:

Ինչպես տեսնում ենք, շրջանառության մեջ դրվող նոր փաստերը գալիս են լուծելու մի շարք չլուծված հարցեր և բարձրացնելու նորանոր մտքեր, որոնք կարող են առավել խոր ուսումնասիրությունների և մանավանդ նորանոր փաստերի հայտնաբերման:

Ավարտելուց առաջ կկամենայինք բարձրացնել մի հարց: Քանի որ Սկևռայի մասնատուփը մի ազնվական կոթող է ոչ միայն իր արվեստով, այլև իր մարմնավորած պատմա-քաղաքական տրամադրություններով, ուստի անհրաժեշտ է առանձին գրքույկ նվիրել նրա հանգամանալից ուսումնասիրությանը և համապատասխան լուսանկարներին: Այն իր մեջ ամփոփում է Կիլիկիայի հայության և նրա մշակույթի պատմության մի դրվագ, որի մասին եղած ուսումնասիրություններն այսօր չեն կարող բավարար համարվել: Մեր ցանկության իրականացումն էլ հիմա միանգամայն ժամանակին է, որովհետև արդեն առկա են գիտա-հետազոտական բնույթի բազմաթիվ աշխատանքներ, իսկ տուփն էլ, բարեբախտաբար, գտնվում է ոչ թե արտասահմանում, այլ Լենինգրադում:

Օ. Ս. ԵԳԱՆՅԱՆ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՐՄԻՏԱԺԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Լենինգրադի պետական Էրմիտաժի ֆոնդերում կա հայերեն ձեռագրերի մի փոքրիկ հավաքածու՝ բաղկացած մանրանկարներով հարուստ հետևյալ յոթ մատյաններից.

1. AP—730. «Պատարագամատոյց», ժամանակ՝ ՌՃԻԶ (1677), տեղ՝ Լվով, գրիչ՝ Ոնոփրիոս: Ձեռագիրս Էրմիտաժ է փոխադրված 1955 թվականին Լվովի Պատմության թանգարանից:

2. AP—733. «Ծարակնոց», ժամանակ՝ ԺԵ—ԺԷ դդ., վերակազմված ՌՃԺԴ (1665)-ին: Ձեռագիրս Էրմիտաժը ձեռք է բերել 1955 թվականին Ֆ. Ա. Կալիկինից:

3. V3—765. «Աւետարան», ժամանակ՝ ԺԷ դ.: Ձեռագիրս Էջմիածնի նախկին գրատան գրչագրերից է («Կարենյանց» № 334, «Էջմիածին» № 341): Այն Գեորգ Դ-ն 1880-ին ընծայել է Ալեքսանդր Բ կայսեր, վերջինիս գահակալության 25-ամյակի կապակցությամբ[1]: Էրմիտաժ է փոխադրված 1909-ին Զմեռային Պալատից:

4. V3—834. «Աւետարան», ժամանակ՝ ՉՀԴ (1325), տեղ՝ Մեհնովա: Ձեռագիրս Ախալցխայի ս. Փրկիչ եկեղեցու գրչագրերից է (№ 423)[2]: Այն քսանական թվականների սկզբին փոխադրվել է Երևանի Պատմության թանգարան (№ 94), 1935-ին փոխանցվել Կերպարվեստի թանգարանին (№ 17), իսկ 1940-ին ՀՍԽՀ Ժողկոմսովետի որոշմամբ հանձնվել Էրմիտաժին[3]:

5. V3—835. «Աւետարան», ժամանակ՝ ՉԼԹ (1290), տեղ՝ Դրազարկ, գրիչ՝ Թորոս փիլիսոփա: Ձեռագիրս Ագուլիսի Թովմա առաքյալի վանքի գրչագրերից է (Թումանյան № 2[4], Լալայան № 3[5], Մաքսուդյան № 3[6]): Ոմն Գևորգյան ազգանունով կոլեկցիոներ 1912-ին այն վաճառել է Շտիգլիցի ուսումնարանի թանգարանին, որտեղից և 1924-ին մուտք է գործել Էրմիտաժ: Ձեռագրիս բուն հիշատակարանը դեռևս անցյալ դարի 90-ական թվականներին Խաչիկ վրդ.

---

[1] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, 1965, էջ 46:

[2] **Մեսրոպ արքեպս. Սմբատյանց,** Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, Տփխիս, 1904, էջ 313: Սմբատյանցի մոտ նշված են միայն հետագա հիշատակագրությունների թվականները, այն էլ վրիպակներով՝ ՉԳՂԶ և ՌՃԻՂ, կարդալ՝ ՉՂԶ և ՌՃԻԴ:

[3] «Ցուցակ ձեռագրաց...», հատոր Ա, էջ 150:

[4] **Ա. Ն. Туманов,** Армянские древние рукописи монастыря св. Фомы. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXIX, Тифлис, 1901, стр. 1—8.

[5] **Ե. Լալայանց,** Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի Ոստիկանական շրջան և կամ Գողթն («Ազգագրական Հանդէս», Թիֆլիս, 1905, էջ 155—173):

[6] **Մ. Մաքսուդյան,** Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանուց և եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ և անձանց մասնաւորաց («Արարատ», 1911, էջ 218—224):

Դաղյանի ձեռքով անջատված է եղել բնագրից և նկարագրված Հ. Թուիճյանի ցուցակում (№ 11)[7]: Այն այժմ գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանի պատառիկների ֆոնդում՝ 909 թվահամարի ներքո:

6. VP—1010. «Աւետարան», ժամանակ՝ ՊԽԴ (1395), տեղ՝ Ոստան, գրիչ և ծաղկող՝ Ծերուն. ստացող՝ Խաչատուր քհ., Մկրտիչ, հետագայի ստացող՝ Սարգիս (1692): Ձեռագիրս Մատենադարանը 20-ական թվականների սկզբներին ձեռք է բերել Արշամ Աթանասյանից (№ 6269) և 1940-ին ՀՍԽՀ Ժողկոմսովետի որոշմամբ հանձնել Էրմիտաժին[3]:

7. VP—1011. «Աստուածաշունչ», երկու մասից, ժամանակ՝ ԺԳ և ԺԴ դդ., գրիչ և ծաղկող՝ Յովսէփ, ստացող՝ Պարոն Սմբատ՝ որդի Լևոն սպարապետի, երկրորդ ստացող՝ Կարապետ եպս., հիշատակարանի գրիչ՝ Մարտիրոս: Ձեռագիրս Երևանի Կերպարվեստի թանգարանի գրչագրերից է (№ 78)՝ գնված թանգարանի կողմից 30-ական թվականներին մասնավոր անձից: Այն Էրմիտաժին է հանձնված 1940-ին ՀՍԽՀ Ժողկոմսովետի որոշման համաձայն[3]:

Նշված 7 ձեռագրերից 1-ը (№ V3—834) մանրամասնորեն նկարագրված է արվեստագիտության դոկտոր Տ. Ա. Իզմայլովայի «Армянская рукопись, написанная в Генуе в 1325 г., и ее серебряный оклад 1347 г.» («1325 թ. Մենովայում գրված հայերեն ձեռագիրը և նրա 1347 թ. արծաթյա կազմը») հոդվածում[8], իսկ մնացած 6-ը (№№ V3—835, VP—1011, VP—1010, AP—733, V3—765, AP—730)՝ նույնի «Армянские иллюстрированные рудописи государственного Эрмитажа» («Պետական Էրմիտաժի հայերեն պատկերազարդ ձեռագրերը») ցուցակում[9]:

Բացի հիշատակված 7 ձեռագրերից, Էրմիտաժի ֆոնդերում եղել են հայերեն 10 այլ ձեռագրեր ևս, որոնք 1958 թվականին, համաձայն ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության 7. 04. 1958 թվակիր № 250 հրամանագրի, Էրմիտաժի տնօրինության կողմից հանձնված են Մատենադարանին[10]: Դրանք Մատենադարանի ձեռագրերի շարքում այսօր զբաղեցնում են հերթական 9740—9749 թվահամարները և արձանագրված են «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Բ հատորում (Երևան, 1970): Այդ ձեռագրերն են.

1. AP—722 (№ 9749). «Շարակնոց», ժամանակ՝ ՉՂԳ(1344), տեղ՝ Սուրխաթ, գրիչ՝ Թորոս Սուքիասանց:

2. AP—723 (№ 9748). «Թուղթ առ Եւդոկիացիս», ժամանակ՝ ՌՃԾԲ(1703), տեղ՝ Լէոպոլիս:

3. AP—724 (№ 9747). «Աղօթագիրք», ժամանակ՝ ԺԹ դ.:

4. AP—725 (№ 9745). «Մաշտոց ձեռնադրութեան», ժամանակ՝ ՌՃՀԳ(1724), տեղ՝ Լէոպոլիս:

5. AP—726 (№ 9746). «Խորհրդատետր», ժամանակ՝ ԺԸ դ.:

6. AP—727 (№ 9744). «Պատարագամատոյց», ժամանակ՝ ՌՃՁԱ(1732), տեղ՝ Քութերու քաղաք, գրիչ՝ Ստեփանոս Միքայելեանց:

7. AP—728 (№ 9743). «Պատարագամատոյց», ժամանակ՝ ԺԹ դ.:

8. AP—729 (№ 9742). «Աւետարան», ժամանակ՝ ՌՁ(1631), տեղ՝ Լով, գրիչ՝ Սիմոն երէց:

9. AP—731 (№ 9741). «Շարակնոց», ժամանակ՝ ՌՃԻԹ(1680), տեղ՝ Իլով, գրիչ՝ Միքայէլ Միքայէլեանց:

10. AP—732 (№ 9740). «Ժողովածու», ժամանակ՝ ՌՃԽԵ(1696), ՌՃԽԶ(1697), ՌՃԿԲ(1713), տեղ՝ Լէոպոլիս:

[7] Հ. Թուիճյան, Ցուցակ Ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 30:

[8] Византийский Временник, XX, 1961, стр. 443—458.

[9] Труды Государственного Эрмитажа, том X, Ленинград, 1969, стр. 110—141.

[10] «Ցուցակ ձեռագրաց...», հատոր Ա, էջ 171, 181:

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԹԱԴԵՈՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԶՄՐՈՒԽՏՅԱՆԻ
(1898—1972)



1972 թվականի սեպտեմբերի 17-ին Երևանում, 74 տարեկան հասակում, վախճանվեց ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու տ. Թադեոս ավագ քահանա Զմրուխտյանը:

Հանգուցյալը ծնվել է 1898 թվականին Թուրքիայի Բրուսայի շրջանում, գյուղացու ընտանիքում: Դեռևս պատանեկան շրջանից նա տարագրության ճանապարհի վրա 1915 թվականի Մեծ եղեռնին կորցնում է ծնողներին ու որբանում: Մահից հազիվ ազատված իր համագյուղացիների հետ հաստատվում է Բուլղարիա և ծառայության անցնում Սոֆիայի հայոց եկեղեցում որպես տիրացու և դպրապետ:

1929 թվականին նա ընտանիքով տեղափոխվում է Փարիզ, որտեղ մնում է մինչև 1936 թվականը և ապա բազմաթիվ հայրենադարձների հետ ներգաղթում Մայր Հայաստան և ընդմիշտ բնակություն հաստատում քաղաքամայր Երևանում:

Տ. Թադեոսը դեռ փոքր տարիքից ջերմ սեր է ունեցել դեպի եկեղեցին ու եկեղեցական երաժշտությունը: Նա օժտված էր նաև ձայնական բացառիկ շնորհքով ու մեծ ապրումով կատարում էր մանավանդ հոգևոր երգեր ու շարականներ:

Հանգուցյալը գիտակից նվիրումով իր կյանքն ու գործունեությունը կապում է եկեղեցական ծառայության հետ և 1957 թվականին Երևանի ս. Սարգիս եկեղեցում քահանա է ձեռնադրվում՝ իրականացնելով տարիների իր իղձն ու երազանքը:

1957 թվականից մինչև իր մահը տեր հայրը քահանայագործում է Երևանի ս. Սարգիս եկեղեցում և որպես հավատավոր, ժրաջան ու բարի հոգևորական սիրվում և գնահատվում է իր հավատավոր ժողովրդի կողմից:

Նրա բարեխիղճ և նվիրված հոգևոր գործունեությունը չի վրիպում նաև ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր ուշադրությունից: 1964 թվականին նրան շնորհվում է քահանայական լանջախաչ կրելու իրավունք, 1967 թվականին՝ ծաղկյա փիլոն, իսկ 1971 թվականին՝ ավագ քահանայության պատիվ:

Սեպտեմբերի 19-ին հանգուցյալ տ. Թադեոս քահանայի վերջին օծումն ու թաղման կարգը կատարվում է Երևանի ս. Սարգիս եկեղեցում՝ նախագահությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի, մասնակցությամբ թեմի քահանայից ողջ դասի, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամների և հավատացյալների բազմության:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական արդյունաշատ գործունեության մասին դամբանական է խոսում տ. Ռուբեն քհն. Մարտիրոսյանը՝ վեր հանելով տ. Թադեոս քահանայի ծառայության արժանիքները, որպես տիպար, հավատավոր ու հայրենասեր հոգևորականի, որը անսակարկ նվիրումով ու մեծ սիրով իր կյանքը նվիրել է իր եկեղեցու պայծառությանը և իր ժողովրդի հոգևոր սպասին:

Հանգի՛ստ տ. Թադեոս ավագ քահանայի ոսկորներին:

ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակը ամեն տարի մայիսի 22-ին նշելու մասին 3

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մադրասի հայոց ս. Աստվածածին եկեղեցու կառուցման 200-ամյակի առիթով 6

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը տ. Գևորգ վրդ. Սերպդարյանին՝ վրահայոց թեմի առաջնորդական տեղապահ նշանակելու առիթով 8

Հայոց Հայրապետի շնորհավորական գիրը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նորընտիր ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրին 10

Հեռագրերի փոխանակում Քենտրբերիի նախկին արքեպիսկոպոս Զեոֆֆրի Ֆիշերի մահվան առիթով 11

Սուրբ գրական ընթերցումներ 12

ԲԱՐԳԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ—Դարձյալ խաչ 14

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 17

Հոգևոր ճեմարանի վերաբացումը 19

Տ. Արսեն վարդապետ Բերբերյանի՝ Լոնդոնի Կինգս կոլեջում պաշտպանած ավարտական մասին հաղորդում 21

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ—Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի և միջազգային գործերի հանձնաժողովի Գործադիր կոմիտեի ժողովները Ութրեխտում 23

ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑ—Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը 29

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը 45

ԱՍԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ—Ո՞վ է Սկևռայի 1293 թ. մասնատուփի պատվիրատու Կոստանդին եպիսկոպոսը 57

Ս. Ս. ԵԳԱՆՅԱՆ—Լենինգրադի պետական Էրմիտաժի հայերեն ձեռագրերի հավաքածուն 66

Հանգիստ արժանապատիվ տ. Թադեոս ավագ քահանա Զմրուխտյանի . . . 68

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 14/IX 1972 թ.: Ստորագրված է տպագրության 20/X 1972 թ.:
Տպագրական 4,25 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 654

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1972 թ.